


ԱՆԺԵԼԱ ՏԵՐՅԱՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՆԱԽԱՀԱՅՐԵՆԻՔԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ



9(47.925)

27-47

h2.

ՆԿԻՐՈՒՄ ԵՄ

ՀՁՈՐ ԱՍՏՎԱԾՆԵՐ ԱՐԱՐԻՉ ԱՐ-ԱՐԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՅԻ ԶԱՎԱԿՆԵՐԻՆ՝
ՀԱՅ-ԱՐՄԵՆՆԵՐԻՆ, ԼՈՒՅՍԻ ՈՒ ԲԱՐՈՒ ՀԱՂԹԱՆԱԿԻ
ՄԵՃ ՅԱՆԿՈՒԹՅԱՄԲ



Աստվածները արարչագործության երկրում՝ Արարատում (լեռներ)

6561



ՍՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՅԻ
ՏՊԱՐԱՐՈՒՄ - ԳՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



ANGELA TERYAN

ANCIENT WRITTEN SOURCES OF EUROPEAN
NATIONS ABOUT THEIR ANCESTRAL
HOMELAND – ARMENIA AND ARMENIANS



АНЖЕЛА ТЕРЯН

ДРЕВНИЕ ПИСЬМЕННЫЕ ИСТОЧНИКИ
НАРОДОВ ЕВРОПЫ О СВОЕЙ
ПРАРОДИНЕ – АРМЕНИИ И АРМЯНАХ

“VOSKAN YEREVANTSI”
PUBLISHING HOUSE
YEREVAN

2018

ИЗДАТЕЛЬСТВО
“ВОСКАН ЕРЕВАНЦИ”
ЕРЕВАН

ԱՆԺԵԼԱ ՏԵՐՅԱՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ
ՀՆԱԳՈՒՅՆ ԳՐԱՎՈՐ ԱԳՔՅՈՒՐՆԵՐԸ
ԻՐԵՆՑ ՆԱԽԱՀԱՅՐԵՆԻՔԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ



«ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2018

Գիրքը հրատարակվել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի
Հին դարերի պատմության բաժնի և Երևան քաղաքի պատմության
թանգարանի գիտամեթոդական խորհրդի երաշխավորությամբ

Գրքի տպագրությունը հովանավորել է պետական գործիչ
Մերուժան Միքայելյանը

ՀՏԴ 930.2
ԳՄԴ 63.2
Տ 470

Խմբագիր՝
պատմական գիտությունների դոկտոր
Է. Լ. Դանիելյան

Տեքստի Անժեղ

S 470 Եվրոպայի ժողովուրդների հնագույն գրավոր աղբյուրները իրենց
նախահայրենիքի՝ Հայաստանի ու հայերի մասին / Ա. Տեքստի.–
Եր.: Ոսկան Երևանցի, 2018.– 152 էջ:

Երկրորդ լրամշակված հրատարակություն

ՀՏԴ 930.2
ԳՄԴ 63.2

ISBN 978-99930-0-268-0



9 789993 002680

© ՏԵՐՅԱՆ ԱՆԺԵԼԱ, 2018

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանը աշխարհի հնագույն երկրներից է: Հայկական լեռնաշխարհի բնիկները՝ հայերը (հայ-արմեններ) Առաջավոր Ասիայի հնագույն ազգերից են, իսկ հայոց լեզուն աշխարհի հնագույն լեզուներից է, որն ըստ ուսումնասիրությունների՝ Հայկական լեռնաշխարհում և շրջակա տարածքներում խոսակցական լեզու է եղել ավելի քան 9000 տարի առաջ: Այս տարածքները, ըստ նոր ուսումնասիրությունների, նաև հնդեվրոպացիների նախնիների՝ արիական ցեղերի նախահայրենիքն են և այդ ժամանակաշրջանից է տեղի ունեցել նրանց սփռվելը նախահայրենիքից՝ Հայկական լեռնաշխարհից և շրջակա տարածքներից դեպի իրենց բնակության ներկայիս վայրերը՝ Եվրոպայից Հնդկաստան ընկած ընդարձակ տարածքներ: Աշխարհի հնագույն քարտեզները նույնպես վկայում են, որ հայերը (հայ-արմենները) Առաջավոր Ասիայի հնագույն բնակիչներն են, իսկ Հայաստանը հնագույն երկրներից մեկը: Տիեզերքի ու Մայր Երկրի հայտնի հնագույն պատկերը կավե սալիկի վրա գծագրված շումերական պատկեր-քարտեզ է, որը թվագրվում է մ.թ.ա. III հազարամյակի կեսով՝ (տես էջ 113): Սալիկի վրա պատկերված են լեռներ (Հայկական լեռնաշխարհը), Միջագետքը և լեռներից (Հայկական լեռնաշխարհից) սկիզբ առնող Տիգրիս ու Եփրատ գետերը: Այդ տարածքները շումերներին հայտնի հնագույն տարածքներն էին, որոնք մինչև Միջագետքում սեմական ցեղերի (աքադացիներ, ավելի ուշ՝ բաբելացիներ, ասորեստանցիներ) հայտնվելը (մ.թ.ա. III հազարամյակի կես), բնակեցված էին հայկական ցեղերով՝ հայ-արմեններով²: Հայտնի է, որ շումերների նախնական բնա-

¹ История древнего Востока, часть 1, М., 1983.

² Փոքր Ասիան բնակեցված էր թրակիացիներով, լիդիացիներով, փոյուգիացիներով, պելասգներով, տրոյացիներով, էտրուսկներով և այլ ցեղերով, որոնք ըստ անգլիացի հետազոտող Ռոբերտ Էլլիսի հայկական ցեղեր էին և խոսում էին հայերեն (բարբառներ) (Robert Ellis, The Armenian Origin of the Etruscans, 1861): <http://www.hayagitaran.info/>: Հիշենք, որ Հոմերոսի «Իլիականում» (նաև «Տրոյական պատերազմ», մ.թ.ա. 12-9-րդ դդ.) Տրոյայի արքա Պրիամոսին օգնել են թրակիացիները, փոյուգիացիները, լիդիացիները և այլ հարևաններ, որոնք ինչպես նկա-

կույթան վայրերը Հայկական լեռնաշխարհի հարավային մասերն են³ ու այստեղից են նրանք փոքր տեղաշարժ կատարելով հայտնվել Հարավային կամ Ստորին Միջագետքում⁴: Հնագիտական պեղումների

տում ենք, վտանգի ժամանակ միավորվել են: Մովսես Խորենացին վկայում է, որ տրոյացիներին օգնության են գնացել նաև հայ քաջերը՝ դյուցազն Ջարմայր Նահապետի գլխավորությամբ, որը պատերազմում վիրավորվել, ապա մահացել է ստացած վերքից (Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 107, ԼԲ): Ըստ Ռ. Էլլիսի, Հայաստանից մինչև Իտալիա, **հայերեն խոսողների շարքն ընդհատվել է** այն ժամանակ, երբ սիրիական (կամ ասսուրական) մի ժողովուրդ հարավից բարձրանալով հայտնվել է Փոյուգիայի և Հայաստանի միջև՝ կտրելով նրանց ազգակցական կապը, և կոչվելով Կապադովկիա, որի արևելյան մասում նույնպես ձևավորվում է հայերենը (պետք է կարծել, որ Ռ. Էլլիսը ի նկատի ուներ սեմական ցեղերին, որոնց մասին վերևում խոսվել է): Այնուհետև Հայկական լեռնաշխարհից արևմուտք գտնվող այդ ցեղերը (հայկական ցեղերը) սկսել են զարգանալ ինքնուրույն, հետագայում տարածվելով դեպի արևմուտք՝ Հունաստան, Ապենինյան թերակղզի, Բալկաններ ու Եվրոպա:

Իսկ Թրակիայի տեղադրության ու թրակիացիների մասին կան նաև այլ տեղեկություններ: Այսպես. պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին (IX դար) Հայկ նահապետի պապ Թիրասին համարում է թրակիացիների նախահայրը (Հ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 11): Իսկ Ստրաբոնը վկայում է, որ թրակիացիք բնակվել են Հայաստանից վերև՝ Գուրանացոց և Մարաց մոտ (Ուրմիա լճից մինչև Կովկասյան լեռներ) (Ստրաբոն, XI, 44): Ըստ հնագույն այս տեղեկությունների թրակիացիների նախահայրը հայոց նահապետ Թիրասն է, իսկ «երկիրը»՝ Թրակիան Հայկական լեռնաշխարհում էր: Մինչդեռ այսօր Թրակիան տեղադրվում է Բալկանյան թերակղզու արևելյան մասում:

³ Г. Чаилд, Древнейший Восток в свете новых раскопок, Москва, 1956; И. Канева, Эммеркар и верховный жрец Аратты, ВДИ, 1964, 4; История Древнего Востока, часть I, 1983, с. 92

⁴ Ուսումնասիրությունները թույլ են տալիս ասելու, որ հնագույն շատ մշակույթներ (**Նեոլիթյան**, այդ թվում՝ **Հալաֆ-Հասունյան**, մ.թ.ա. VIII-V հազարամյակ. **Էնեոլիթյան**՝ **Կուր-Արաքսյան** կամ **Շենգավիթյան**, մ.թ.ա. V-III հազարամյակ. **բրոնզեդարյան**, մ.թ.ա III-II հազարամյակ...) ստեղծվել են Եվրոպոիդ ռասայի արմենոիդ մարդաբանական տիպի ներկայացուցիչների կողմից: Հայտնաբերված հնագույն պատկերներում ու քանդակներում աստվածների և թագավորների դեմքերը արմենոիդ մարդաբանական տիպն են ներկայացնում (շումերական քանդակներ, Լագաշի թագավոր Գուդեա):

Մարդկության պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սկսած նոր քարի դարից (նեոլիթ, մ.թ.ա. X հազարամյակ) արմենոիդ մարդաբանական տիպի ներկայացուցիչները եղել են մարդկային հասարակության կազմավորման ու նրա զարգացման կարևոր իրադարձությունների ակտիվ մասնակիցներ: Հետագար կարելի է ասել, որ երկրային բոլոր դեպքերին և իրադարձություններին արմենոիդ մարդաբանական տիպի (հայ-արմեններ) ներկայացուցիչների մշտա-

արդյունքները ցույց են տալիս, որ մ.թ.ա. V-IV հազարամյակում շումերներն արդեն Ստորին Միջագետքում էին⁵: Շումերական «Գիլգամեշ» դյուցազնավեպի «Գիլգամեշը և անմահների երկիրը», «Էնմերքարը և Արատտայի գլխավոր քուրմը», «Լուգալբանդան և Խուտում լեռը» ու այլ վիպերգերում վկայություններ կան **բարձր լեռների, աստվածների, անմահների, սուրբ օրենքների ու սուրբ ծեսերի** երկիր Արատտայի մասին⁶: Արատտան Հայաստանին տրվող հնագույն անուններից մեկն է: Նշենք, որ դեպի հարավ շումերների տեղաշարժը առաջին հայտնի տեղաշարժն է Հայկական լեռնաշխարհից: Հայաստանը ներկայացված է նաև Բաբելոնյան աստղածև քարտեզում (մ.թ.ա. VI դար), Հեկատոնոս Միլեթացու քարտեզում (մ.թ.ա. 517 թ.), Հերոդոտոսի «Պատմություն» աշխատության հիման վրա կազմված քարտեզում (մ.թ.ա. V դար) և այլն:

Հայկական լեռնաշխարհից ու շրջակա տարածքներից տեղաշարժեր են կատարվել նաև դեպի արևելք, արևմուտք ու հյուսիս: Հայտնի է, որ մ.թ.ա. II հազարամյակի կեսին արևմուտքից Հնդկաստան են թափանցել ցեղեր, որոնք իրենց անվանում էին **ari-ներ, arya-ներ, նաև ayu-ներ և (h)ayu-ներ**⁷: Նրանք օգտագործում էին ձիեր, մարտակառքեր և զինված էին մետաղե զենքերով: Այս մասին վկայում են հնդկական հնագույն գրավոր աղբյուրները՝ «Ռիգվեդան» և «Մահաբհարաթան»: Գիտական աշխարհում ընդունված է, որ իրանական ցեղերը (մարեր կամ մեդեր, պարսիկներ, պարթևներ) Իրանում հայտնվել են մ.թ.ա. II հազարամյակի I կեսին⁸: Իրանական ցեղերը հեռացել են նախա-

կան ներկայությունը ու կարևոր դերակատարություն ունենալը այն պատճառներն են, որոնք Հայաստանի հարևանությամբ ապրող ցեղերի ու կազմավորված պետությունների (Աքադ, Բաբելոն, Ասորեստան) կողմից հաճախ ոչ բարեկամական վերաբերմունք են առաջացրել արմենոիդների (հայ-արմենների) հանդեպ: Եթե սկզբում այդ վերաբերմունքը ոչ արմենոիդ մարդաբանական տիպի ներկայացուցիչների կողմից էր, ապա ավելի ուշ այն որդեգրեցին նաև նույն մարդաբանական տիպն ունեցող միապետներ (պարսիկներ, հոտմեացիներ, բյուզանդացիներ...):

⁵ Дж. Мелларт, Древнейшие цивилизации Ближнего Востока, М., 1982; Л. Вулли, Забытое царство, Москва, 1986.

⁶ Kramer S. N., The Sumerians, Chicago, 1963; И. Канева, Вестник Древней Истории, 1964, 4, с. 208.

⁷ Ригведа, М., 1972, I, 31, 10, I, 130, 6; II, 20, 24, III, 59, 5; Литература древнего Востока, 1984, Махабхарата (63, 65), с. 58, 318.

⁸ История Ирана, М., 1977, с. 37.


հայրենիքից, իրենց հետ տանելով այնտեղ տարածված աստվածների պաշտամունքը, կենցաղը, սովորույթները, ավանդույթները, նաև արի ցեղին պատկանելու գիտակցությունը և **արի** ինքնանվանումը: Այդ մասին է վկայում մ.թ.ա. VII դարում գրի առնված գրադաշտական կրոնի սուրբ գիրքը՝ «Ավեստան» (ավելի ուշ՝ վաղ միջնադարում բանավոր ավանդությունների հիման վրա գրի է առնվել «Ավեստայի» տեքստը և մեկնությունը՝ «Ջենդը»): Նախահայրենիքից հեռացող բոլոր ցեղերը հաստատվելով իրենց նոր հայրենիքներում հիշում են իրենց նախահայրենիքի, ցեղի աստվածների, արի ցեղին պատկանելու, սովորույթների, կենցաղի և այլնի մասին: Նրանք հատկապես մեծ սիրով ու ակնածանքով են հիշում նախահայրենիքում մնացած ցեղակիցներին և փորձում են պահպանել հուշեր ինչպես նրանց մասին, այնպես էլ նախահայրենիքի մասին: Պահպանված գրավոր աղբյուրները կարևոր տեղեկություններ են տալիս հնագույն Հայաստանի ու հայկական (արիական) ցեղերի պատմության մասին: Նշենք, որ դրանք ոչ միայն հեռացած ցեղերի, այլև այնտեղ մնացած Մայր ցեղի՝ հայ-արմենների պատմությունն են:

Դեպի արևելք տեղաշարժվող ցեղերը նաև դեպի հյուսիս են գնացել: Նրանց մի մասը Կովկասով, մյուս մասը՝ շրջանցելով Կասպից ծովը հայտնվել են մերձկասպյան հյուսիս-արևմտյան ու մերձսևծովյան հյուսիսային շրջաններում: Այնուհետև հնդեվրոպացիների նախնիները (արիական ցեղերը) տեղաշարժվել են դեպի արևմուտք՝ Եվրոպա, որոնց մասին տեղեկություններ են տալիս հնագիտական պեղումները: Այս տեղաշարժերի ժամանակ ցեղերի մի մասը հայտնվել է Բալկաններում: Նրանք հայտնվել են նաև Փոքր Ասիայի արևմտյան մասերում, որտեղից էլ անցել են Եվրոպա: Ինչպես նկատում ենք, հնդեվրոպացիների նախնիները՝ արիական ցեղերը իրենց նախահայրենիքից՝ Հայկական լեռնաշխարհից և շրջակա տարածքներից Եվրոպա մուտք են գործել և՛ արևելքից՝ Կովկասով, և՛ հարավ-արևելքից (Փոքր Ասիա):


Հռոմեական գրավոր աղբյուրները (Տակիտոս) տեղեկություններ են տալիս եվրոպական ժողովուրդների, հատկապես գալլերի (կելտեր), գերմանական, բրիտանական և այլ ցեղերի հնագույն պատմության մասին: Ավելի ուշ՝ IX–XV դդ., անգամ XVIII դարում եվրոպական ժողովուրդների (անգլիական, գերմանական) գրավոր աղբյուրները ("The Anglo-Saxon Chronicle", "Das Annolied", "Kaiserchronik", "Das Rolandslied

des Pfaffen Konrad", "Chronica Baioariorum") գրում են իրենց ժողովրդի պատմությունը, բազմաթիվ անգամներ վկայելով, որ իրենց նախնիները (բրիտ-վուելշներ, բավարացիներ, նաև բասկեր, սլավոններ) եկել են Հայաստանից: Այդ գրավոր աղբյուրներում մշտապես հիշատակվում է «քաջարի ու հպարտ» Հայաստանի, այնտեղ գտնվող սրբազան Արարատ լեռան ու Նոյյան տապանի մասին: **Հայաստան** ու **Արարատ** անունները հիշատակվում են սիրով ու հպարտությամբ: Նույն վերաբերմունքն ենք նկատում միջնադարյան ճանապարհորդների, աշխարհագիրների ու քարտեզագիրների կողմից:

Ինչպես հնագույն ժամանակներում, այնպես էլ միջնադարում պատրաստված բոլոր քարտեզներում հեղինակները հենվելով հույն, հռոմեացի, եվրոպացի (նաև արաբ ու այլ) պատմիչների ու աշխարհագիրների աշխատություններում վկայված տեղեկությունների վրա, մշտապես նշում են Հայաստանը, այնտեղ գտնվող երկրային Դրախտը, Արարատ լեռը՝ Նոյյան տապանով և այլն: Սակայն XIX դարի 2-րդ կեսից նկատվում է այլ վերաբերմունք Հայաստանի ու հայ ժողովրդի հանդեպ:



XIX դարում Հայաստանը գտնվում էր ծանր վիճակում: Արևմտյան Հայաստանը Օսմանյան կայսրության, իսկ Արևելյան Հայաստանը Իրանի, ապա Ռուսական կայսրության (1806–1828 թթ. հետո) կազմում էին: Միջնադարյան Հայաստանում Բագրատունիների արքայական տան վերացումից (1045 թ.) և Կիլիկյան Հայաստանի թագավորության (1375 թ.) անկումից հետո միացյալ, անկախ Հայաստան պետություն ստեղծելու հայերի դարավոր պայքարը հաջողություն չէր ունենում: Այս պայմաններում նկատում ենք, որ եթե Եվրոպայի հնաբնակ ժողովուրդների միջնադարյան գրավոր աղբյուրներում **ազատատենչ, քաջ ռազմիկների երկիր, հավատարիմ Հայաստանը** հիշատակվում էր որպես իրենց նախահայրենիք, ապա XIX դարի երկրորդ կեսից, Եվրոպական մի շարք երկրների այն ժամանակվա կառավարող շրջանների կողմից նկատվում է այլ վերաբերմունք Հայաստանի հանդեպ, որը պայմանավորված էր Առաջավոր Ասիայում ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրավիճակով (թույլ չտալ «հիվանդ» Օսմանյան կայսրության մասնատում, այդ երկիրը Ռուսաստանի դեմ օգտագործելու համար, թույլ չտալ հայկական տարածքներում Հայաստան պետության ստեղծում):



Հայաստանը հին և միջին դարերում (քարտեզի հեղինակ՝ Է. Դանիելյան)

Քարտեզներում և դասագրքերում նույնիսկ Հայաստան (Արևմտյան Հայաստան) ու Հայկական լեռնաշխարհի անուններն են փոխարինվում Անատոլիա⁹ և Քրդստան¹⁰ հնարովի անուններով: XIX դարի վերջից Անգլիայի և Գերմանիայի կառավարող շրջանների թողտվության պայմաններում, նաև Ռուսաստանի լուռ համաձայնության, անտարբեր ու խուսափողական պահվածքի պատճառով սկսվում են Հայոց պատմության ամենաճանր, ողբերգական ժամանակները: Օսմանյան կայսրության կազմում գտնվող Արևմտյան Հայաստանում, Կիլիկյան Հայաստանում և այլ տարածքներում պարբերաբար կազմակերպվում են հայկական ջարդեր, որոնք ավարտվում են 1915–1923 թթ. Հայոց մեծ եղեռնով՝ ցեղասպանությամբ: Ցեղասպանության կազմակերպիչների նպատակն էր տիրանալ հայկական տարածքներին, մշակույթին ու հայկական գենոֆոնդին: Դա իրականացրին թուրքերն ու քրդերը Արևմտյան Հայաստանում (այսօր կարելի է ասել, որ միլիոնավոր թուրքեր (նաև քրդեր) ունեն հայկական ծագում, ինչի մասին վկայում է նրանց արտաքին տեսքը՝ արմենոիդ մարդաբանական տեսակը): Ցեղասպանության կազմակերպիչները դրանով նաև թուլացնում ու չեզոքացնում էին Առաջավոր Ասիայի կենսունակ, կարևոր ուժերից մեկին՝ հային ու Հայաստանը:

Հակառակ դրան, Հայաստանն ու Հայոց պատմությունը շարունակում են լինել գիտնականների ուշադրության կենտրոնում: Եվրոպացի շատ գիտնականներ (Առնոլդ Թոյնթի, Կոնս Ավգուստ ֆոն Հաքստհաուզեն, Հայնրիխ Հյուբշման, Յոհաննես Լեփսուս), հենվելով հնագույն գրավոր աղբյուրների վկայությունների վրա, գրում են աշխատություն-

⁹ Հայտնի է, որ Անատոլիա (հունարեն «արևելք» բառից) անունը իրականում վերաբերում է Հայկական լեռնաշխարհից արևմուտք գտնվող Փոքր Ասիային:

¹⁰ Քրդերը Հայաստան են թափանցել XII–XIII դդ., թուրք-սելջուկների տիրապետության ժամանակ և բնակություն հաստատել Հայաստանի հարավային նահանգներում՝ Աղձնիքում (այժմ Դիարբեքրի շրջան) ու Կորճայքում: Կորճայք նահանգը կոչվել է նաև Կորդուք իր մեծ գավառի անունով: Կորդուքը հայտնի է նաև Կադմեա տուն, Կադմոսի տուն անուններով: Խորենացին այս անունները բխեցնում է Հայկի թոռան և Արամանյակի որդու Կադմոսի անունից, որին Հայկը բնակեցրել է իր առաջին տանը՝ Կորճայքում (Կորդուքում) տալով հարստություն և անվանի մարդիկ: Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, 1981, էջ 47: XVI դարի սկզբից խրախուսվելով թուրքերի կողմից, քրդերը թափանցել են Հայաստանի այլ շրջաններ ևս:

ներ ու հողվածներ Հայոց հնագույն պատմության ու համաշխարհային քաղաքակրթության մեջ հայ ժողովրդի ունեցած մեծ դերի մասին: Սակայն հայտնվում են այլ ուսումնասիրողներ, որոնք փորձում են ժխտել հնագույն գրավոր աղբյուրների վկայությունները հայերի ու Հայաստանի մասին, նաև հայ նախնի ու Հայաստան նախահայրենիք ունենալու փաստերը¹¹:

XX դարում և XXI դարի սկզբին գիտնականները նորից անդրադառնում են հայերին ու Հայաստանին: Նոր ուսումնասիրությունների¹² հիման վրա գիտնականները առաջ են քաշում տեսակետներ, որոնց համաձայն Հայկական լեռնաշխարհը քաղաքակրթության բնօրրանն է (David Marshall Lang, *Armenia: Cradle of Civilization*, London, 1970), հայերը աշխարհի հնագույն ազգերից են, հայոց լեզուն հնագույն լեզու է, Հայկական լեռնաշխարհը և շրջակա տարածքները հնդեվրոպացիների (արիական ցեղեր) նախահայրենիքն են և այլն: Կարևորվում են հատկապես լեզվաբանական ուսումնասիրությունները, որոնց արդյունքում առաջ է քաշվում այն տեսակետը, որ հայերենը հնագույն լեզու է, որով խոսել են ավելի քան 9 հազար տարի առաջ և այլն: Նշենք սակայն, որ որոշ հեղինակներ նենգափոխելով պատմությունն ու պատմական աշխարհագրությունը, շարունակում են քաղաքականացնել պատմությունը, **Հայաստան, Հայկական լեռնաշխարհ** անունների փոխարեն օգտագործելով «արևելյան Թուրքիա», «արևելյան Անատոլիա», «ժամանակակից Թուրքիայի տարածք» անունները:

Հնագիտական, լեզվաբանական, մարդաբանական ու կատարված այլ ուսումնասիրություններ թույլ են տալիս ասելու, որ Հայաստանը հայ-արմենների ու նրանցից սերված արիական ցեղերի (հնդեվրոպացիներ) նախահայրենիքն է և ժամանակակից քաղաքակրթության բնօրրանը:

Այսօր՝ XXI դարի սկզբին, իբրև փաստ կարելի է արձանագրել. ի մեծ ցավ հայերի և մեծ ամոթ հնդեվրոպացիների՝ արիական ցեղերի ժառանգների, նրանց նախահայրենիքը՝ Հայկական լեռնաշխարհը և շրջակա տարածքների մեծ մասը գտնվում են գերության մեջ: Այս իրավիճակի համար մեղքի մեծ բաժին ունեն դարեր առաջ այդ տարածքից հեռացած հայկական/արիական ցեղերի ժառանգները, հատկապես այսօրվա անգլիացիներն ու գերմանացիները, որոնք գործելով ի շահ այլոց, մոռացան նախահայրենիքի ու «այնտեղ մնացած ցեղակիցների մասին»:



Արարատ լեռը (Սիս, Մասիս) և Արաքս գետը

¹¹ "The Anglo-Saxon Chronicle"-ի 1861թ. և 1953 թ. հրատարակությունները; E. A. Quitzmann, *Die heidnische Religion der Baiwaren*, Leipzig, 1860 և E. A. Quitzmann, *Die alteste Geschichte des Baiern bis zum Jahre 911*, Braunschweig, 1873; Hans F. Nöhbauer, «Die Bajuwaren», *Welt-bild Verlag*, Augsburg, 1990.

¹² Luigi Luca Cavalli-Sforza, *Genes, Peoples and Languages*, (NY: North Point Press, 2000) 159–165; Russell D. Gray & Quentin D. Atkinson, "Language-tree divergence times support the Anatolian Theory of Indo-European origin", *Nature* vol. 426 (Nov. 26, 2003) 435–439; Bouckaert R., et al., "Mapping the Origins and Expansion of the Indo-European Language Famil.," *Science*, vol. 337, № 6097 (2012), p. 957–960; Merritt Ruhlen, *The Origin of Language*, 1994.

**ՄԻՋԱԳԵՏՔԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԸ
«ԱՍՏՎԱԾՆԵՐԻ», «ԱՆՄԱՀՆԵՐԻ», «ՍՈՒՐԲ ՕՐԵՆՔՆԵՐԻ» ԵՎ
«ՄՐԲԱԶԱՆ ԾԵՍԵՐԻ» ԵՐԿԻՐ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Միջագետքի հնագույն գրավոր աղբյուրներից մեկում՝ շումերական «Գիլգամեշ» դյուցազնավեպի «Գիլգամեշը և անմահների երկիրը», «Էնմերքարը և Արատտայի գլխավոր քուրմը», «Լուգալբանդան և Խուռում լեռը» վիպերգերում բազմաթիվ վկայություններ կան «**բարձր լեռների**», «**աստվածների**», «**անմահների**», «**սուրբ օրենքների**» և «**սրբազան ծեսերի**» երկիր **Արատտայի** մասին¹³: Արատտան Հայկական լեռնաշխարհում կազմավորված հայոց հնագույն պետություն էր¹⁴:

Միջագետքի հնագույն այլ գրավոր աղբյուրներում («Գիլգամեշ», «Ատրախասիս», Բերոսոսի «Բաբելոնիկա») **Հայաստանը աստվածների երկիրն է**, որը Համաշխարհային ջրհեղեղի ժամանակ աստվածների կամքով դարձել է մարդկության փրկության երկիրը: Այսպես.

¹³ Kramer S. N., The Sumerians, Chicago, 1963; Канева И., Вестник Древней Истории, 1964, 4, с. 208.

¹⁴ Մ. Գավուկչեան, Հայ ժողովրդի ծագումը, Մոնթրեալ, 1982: Մ. Գավուկչեան, Armenia, Subartu and Sumer, Montreal, 1987, p. 65–72: Ա. Մովսիսյան, Հայոց հնագույն պետություն. Արատտա, Ե., 1990: Ուսումնասիրողները շումերական գրավոր աղբյուրներում («Լուգալբանդան և Էնմերքար» «Էնմերքարը և Արատտայի գլխավոր քուրմը», «Լուգալբանդան և Խուռում լեռը») վկայված Արատտան համարում են երկիր, սակայն այդ դիցաբանական գրույցներում Արատտան նկարագրվում է հզոր պարիսպներ ունեցող քաղաք, որի քաջարի պաշտպանները իրենց քաղաքի վրա արշավանք կազմակերպած Ուրուկի տիրակալ Էնմերքարին և անվանի հերոս Լուգալբանդային նույնիսկ թույլ չեն տալիս մոտենալ քաղաքի պարիսպներին.

Արատտայի պարիսպների առջև
Ուրուկի և Կուլաբի զորքն է,
Քաղաքից նետեր են սլանում, ինչպես անձրևը ամպից,
Թռչում են քարեր, ինչպես խոշոր կարկուտ,
Արատտայի պարիսպների տակ աղմուկ է ու աղաղակ:
«Լուգալբանդան և Էնմերքար»

Մեկ այլ դիցաբանական գրույցից («Էնմերքարը և Արատտայի գլխավոր քուրմը») հայտնի է դառնում, որ Արատտայում (քաղաքում) էր գտնվում երկրի (Արարատի երկրի) Քրմապետի նստավայրը: Հայտնի է, որ Քրմապետը նաև երկրի (քաղաքի) տիրակալն էր՝ թագավորը: Իսկ սա նշանակում է, որ Արատտան (քաղաքը) երկրի (Արարատի երկրի) հոգևոր, քաղաքական ու տնտեսական կենտրոնն էր:

շումերական **Ջիուսուդրան**, աքադական **Ուտնապիշտին** (Ուտնապիշտին Ջիուսուդրայի աքադերեն թարգմանությունն է, որը «երկար կյանք գտած» իմաստն ունի), **Քսիսութը** կամ **Քսիսութոսը** (Բերոսոս) միջագետքյան հնագույն գրավոր աղբյուրների այն բարի ու բարեպաշտ մարդիկ են, որոնք աստվածների կամքով փրկվում են ջրհեղեղից, ապաստանելով «**Աստվածների երկրում**»՝ **Հայաստանում**: Բիբլիայում համաշխարհային ջրհեղեղից փրկված բարեպաշտ մարդը **Նոյն է**, որը նույնպես իր փրկությունը գտնում է Հայաստանում (Արարատի լեռներում):

Բերոսոսը (մ.թ.ա. IV–III դդ) իր հայտնի «Բաբելոնիկա» («Բաբելոնի պատմություն», Babyloniaka կամ Chaldaika) աշխատության մեջ գրում է, որ **Աստվածների երկիրը**, որտեղ մարդկությունը գտավ իր փրկությունը, **Հայաստանն է**¹⁵: Քրմապետ Բերոսոսն իր աշխատությունը գրել է, օգտվելով տաճարում պահվող սեպագիր գրավոր աղբյուրներից: Աշխատության մեջ, որը գրվել է հունարենով, ներկայացվում է Միջագետքի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև իր ապրած ժամանակաշրջանը: Բերոսոսի աշխատությունից պահպանվել են հատվածներ Եվսեբիոս Կեսարացու (հայերեն թարգմանվելու շնորհիվ) և այլ հեղինակների աշխատություններում: Աշխատության պահպանված հատվածներում ներկայացվում է Համաշխարհային ջրհեղեղի միջագետքյան տարբերակներից մեկը, որտեղ հերոսը հունականացված Քսիսութոս անունն ունի: Ըստ Բերոսոսի Կրոնոս աստվածը (կամ տիտանը) Քսիսութոսին զգուշացնում է ջրհեղեղի մասին և ասում, որ փրկվելու համար պետք է նավ կառուցի: Իսկ Քսիսութոսի հարցին, որտեղ գնալ փրկվելու համար, հնչում է պատասխանը. **աստվածների երկիր**: Ջրհեղեղից հետո, երբ տապանը կանգ է առնում լեռներում, նրանց հայտնում են, որ իրենք գտնվում են **աստվածների երկրում**՝ **Հայաստանում**: Այնուհետև Քսիսութոսը և նրա կինը աստվածների կամքով ձեռք են բերում անմահություն և իրավունք ստանում ապրելու աստվածների երկրում: Ուշադրության արժանի է այն փաստը, որ մյուս փրկվածներին թույլ չի տրվում ապրել Հայաստանում, այլ հրամայվում է վերադառնալ Բաբելոն: Ինչպես

¹⁵ Եիսեբի Պամփիլեաց Կեսարացիոյ, Ժամանակագրականք, մասն Ա, Կենետիկ, 1818:

նկատում ենք, ոչ բոլոր մարդկանց էր թույլատրվում ապրել աստվածների երկրում՝ Հայաստանում:

Հնագույն գրավոր աղբյուրները վկայում են, որ Բաբելոն վերադարձած բնակիչները սերում են տիտաններին, որոնք որոշում են իրենց «կարգերը» հաստատել այնտեղ: Պահպանվել են հսկաների կամ տիտանների անունները. Էտան կամ Տիտան, Նեո, նաև Կոռնոս, Հապետոս և այլն: Մովսես Խորենացին (V դար) վկայակոչելով այլ աղբյուր (Բերոսյան Սիրիլլաին) այդ մասին գրում է. «Նախ քան աշտարակը և մարդկային խոսակցության բազմալեզու դառնալը, և Քսիտոփոսի դեպի Հայաստան նավարկությունից հետո, երկրի իշխաններ են դառնում Կոռնոսը (Խորենացին օգտագործում է Զրվան), Տիտանը և Հապետոսը»: Պատմահայրը այս հերոսներին նաև նմանեցնում է Սեմին, Քամին և Հաբեթին¹⁶: Հայտնի է, որ տիտանները աստծուն հասնելու համար փորձում են աշտարակ կառուցել, որը զայրացնում է աստվածներին, և նրանք քանդում են աշտարակը: Այնուհետև աստվածները խառնում են մարդկանց լեզուները, որպեսզի նրանք չկարողանան միավորվել ու գործել ընդդեմ իրենց:

Ինչպես նկատում ենք, **Հայաստան (Արմենիա)** անունով երկիրը կա և՛ շրիեղեղից առաջ, և՛ հետո: Նկատում ենք նաև, որ **Հայաստան-Արմենիան Աստվածների երկիրն է, որտեղ ապրում են Աստվածներ և Աստվածների կամքով անմահություն ստացած մահկանացուներ**: Նկատում ենք նաև շատ կարևոր մի փաստ. **հասարակ մահկանացուներին թույլ չէր տրվում ապրել սրբազան Արարատի երկրում՝ Հայաստանում**:

Արարատ (Արարատի երկիր) անունը առնչվում է նաև մարդու արարման առեղծվածի հետ: Հայոց լեզվում կան բառեր, ինչպես օրինակ՝ **Արարիչ, արարել, արարած, արորդի, Արարատ**, որոնց իմաստն ու նշանակությունը հուշում են, որ դրանք պատահական բառեր չեն. **Արարիչն արարել է արարածին, Արարատի երկրում՝ Աստվածների երկրում, այն է՝ Արմենիա-Հայաստանում**: Ընդամենը մի քանի բառով մարդու արարման պատմությունն ու տեղն է բացահայտվում: Արարատ անվան առաջին՝ **արար**- բաղադրիչը **արարել, ստեղծել** իմաստն ունի: Անվան **-ատ** բաղադրիչը տեղանվանակերտ մասնիկ է:

¹⁶ Մովսես Խորենացի, 1981, էջ 29, (2):

Շտուաբար **Արարատ** երկրանունն իր ծագմամբ ու հնչողությամբ հայկական է և **Արարչագործության երկիր** իմաստն ունի: Իսկ միջագետքյան դիցաբանությունը («Էնկի և Նինմախ», «Ատրախասիս», «Գիլգամեշ») վկայում է, որ արարված մարդը իրեն ստեղծող աստվածների պատկերն ունի: Երկրային էակը՝ արարված արարածը **արտաբերել է առաջին հնչյունը**, որն ամենայն հավանականությամբ **Ա հնչյունն էր**: Հայտնի է, որ աշխարհի համարյա բոլոր այբուբենները սկսվում են հեշտ արտասանվող ու գեղեցիկ, երկար հնչողություն ունեցող **Ա** հնչյունով: Իսկ քանի որ մարդը հոգևոր էակ է, պետք է ենթադրել, որ նրա կողմից արտաբերված **Ա** հնչյունը Արարչի անվան առաջին հնչյունն էր: Այդ են վկայում Հայկական լեռնաշխարհի ու **Միջագետքի**, ինչպես նաև հունական, հնդկական, իրանական և այլ դիցարանների հնագույն շատ աստվածների **Ար**-ով սկսվող անունները. **Արուրու** (նախաշումերական մայր- աստվածուհի), **Արա Գեղեցիկ** (հայոց դիցարանի մեռնող-հառնող աստված, նաև հայոց առասպելական թագավոր), **Արամազդ** (բոլոր աստվածների հայրը հայոց դիցարանում), **Արմա** (խեթա-լուվիական դիցարանի լուսնի աստվածուհի), **Ար՝ա-ա, Արդի, Արսիմելա, Արածա** (Արարատ-Ուրարտուի դիցարան), **Արմատի** (իրանական դիցարանի աստվածուհի), **Արտեմիս (Արտեմիդա, լուսնի և որսորդության հունական աստվածուհի), Արես** (ռազմի հունական աստված), **Արունա** (արշալույսի վեդայական աստվածուհի), **Արյաման** (վեդայական աստվածություն), **Արանյան** (անտառի վեդայական աստվածուհի), **Ռա (Ռա=Ար, արևի եգիպտական աստված)** և այլն: Աստվածների այս անունները նաև թույլ են տալիս ասելու, որ գլխավոր աստծո անվան երկրորդ հնչյունը **Ր** էր և հնագույն հայկական դիցարանի գլխավոր աստծո անունը հնչել է **ԱՐ** (շումերական դիցարանում գլխավոր աստծո անունը հնչում է Ան, աքադական դիցարանում՝ Անու):

Նշենք նաև, որ Մովսես Խորենացու աշխատության մեջ հիշատակված հայոց 11 նահապետներից 5-ը ունեն **Ար**-ով սկսվող անուններ. **Արամանյակ, Արամայիս, Հարմա, Արամ, Արա Գեղեցիկ**¹⁷:

¹⁷ Մովսես Խորենացի, 1981, էջ 23 (ԺԲ):



Արարչի՝ Հայր Աստծո պատկերը (թույլատրված դեպք) Նորավանքի գավթի պատին (ճարտարապետ Մոմիկ), XIII դար: Արարիչը ձեռքին բռնել է իր ստեղծած առաջին մարդու գլուխը և կենդանություն, շունչ է հաղորդում նրան:



Հայր Աստծո պատկերը (թույլատրված դեպք) սր Աստվածածին եկեղեցու գմբեթի տակ, Վայք, 1321 թ.

Ար-ը¹⁸ հանդես է գալիս նաև **Էր, Իր, Ուր, Օր** և այլ ձևերով. **Էր, Էրիու, Էրեմոն**¹⁹ (կելտական դիցաբանական հերոսներ), **Էր Արմենիոս**²⁰ (Պլատոնի «Հանրապետություն» աշխատության մեռնող-հառնող կերպար), **Ուրանոս** (Ur=ar, երկնքի հունական աստված), **Ռոդ** (սլավոնական պանթեոնի գլխավոր աստվածը), նաև **Օրեյ** (սլավոնների նախահայրը), **Յարիլո** (**Յարովիտ**, Ռոդի որդին, գարնան, հողագործության ու պտղաբերության աստված) և այլն:

Ար անվան մեջ կարող է հնչյունափոխության ենթարկվել նաև **ր** հնչյունը (լ-ր հնչյունափոխություն) և անունը որոշ դեպքերում կարող է հնչել Ալ (Ալ-ման կամ Ալե-ման), անգամ էլ ձևով.

Այս ամենը նշանակում է, որ **ար-** արմատը, որով սկսվում են հնագույն շատ աստվածների ու հերոսների անուններ, ոչ միայն **ազնվազարմ, քաջարի** իմաստն ունի, այլև անմիջականորեն կապ ունի **Աստծո անվան (Ար-Արարիչ), բնակության վայրի (Արարատի երկիր) արարչագործության ու անմահության գաղափարի (Արա Գեղեցիկ, Էր Արմենիոս) հետ**: Այս ամենից հետո բնական պետք է համարել այն փաստը, որ Արարատի երկրում արարված մարդը ջրհեղեղի ժամանակ իր փրկությունը գտնում է նույն Արարատի երկրում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Աստծո **Ար** անունը այն արմատն է, որից առաջացել են հայոց լեզվի (նաև հնդեվրոպական մյուս լեզուների) հիմնական բառերի զգալի մասը: Իսկ հայերեն հնագույն **արեւ, արփի, արշալույս, արուսյակ, արծաթ, արագիլ** և այլ բառեր, որոնք **լույս, փայլ, սպիտակ** իմաստն ունեն, թույլ են տալիս ասել,

¹⁸ Կան ուսումնասիրողներ, որոնք չեն ընդունում Ար Աստծո գոյությունը, այն պատճառաբանությամբ, որ հնագույն գրավոր աղբյուրներում վկայություններ չկան Ար անունով աստծո մասին: Այդ դեպքում հիշենք, որ Ար (Արա) Աստծո անունը խոր հնություն ունի: Հնագույն գրավոր աղբյուրները թվագրվում են մ.թ.ա. IV հազարամյակի վերջ - III հազարամյակի սկիզբ ժամանակաշրջանով, իսկ ընդունված է, որ ժամանակակից քաղաքակրթությունը մոտ 14-15 հազար տարվա պատմություն ունի: Հետևաբար շատ խոր հնության պատճառով Արարիչ Ար Աստծո անունը գրավոր աղբյուրներում կարող էր նաև չլինել: Սակայն Առաջավոր Ասիայի, մասնավորապես հ.ե. ժողովուրդների հնագույն աստվածների Ար-ով սկսվող անունները (Արուրու, Արա Գեղեցիկ, Արամազդ, Արմա, Արես, Արաս) թույլ են տալիս ասելու, որ Արարիչ Աստծո անունը ոչ պատահականորեն հնչում էր Ար:

¹⁹ Мифы народов мира, М., 1988, т. I, с. 52; 1991, т. II, с. 636.

²⁰ Платон, Республика, XL (X. 614).

որ **ար**-ը նախնական իմաստով հենց **լույս** իմաստն է ունեցել: **Ար**-ը մշտապես (բացահայտ կամ թաքնված) ներկա է հայոց լեզվում (նաև բարբառներում) և յուրաքանչյուր հայի, այդ թվում արի ցեղի ներկայացուցիչների գիտակցության մեջ: **Ար**-ը **Արարիչ է, տիեզերք է, լույս է, երկինք ու երկիր է, աստված է, լուսավոր միտք է, մշակույթ է, արվեստ է, կենդանական ու բուսական աշխարհ է, անձնական ու աշխարհագրական անուններ է, առասպելական հերոս է...**²¹:

Նշենք նաև, որ հայ մարդու գիտակցության մեջ, նրա ընկալումներում (նաև հայոց դիցարանում) Արարիչը (Ար) նույնացել է Արև-Աստծո հետ, առանց որի մարդու, բնության, կենդանական ու բուսական աշխարհի գոյությունը Մայր Երկրի վրա անհնար էր (հատկապես մեծ ստացակալումից հետո):




Հայր Աստծո (Արև-աստծո) պատկերը, XXI դարի սկիզբ, Բյուրական (հեղինակ Գոռ Աբրահամյան)

Հայկական լեռնաշխարհում լայնորեն տարածված են **Ար**-ով սկսվող **անձնական** (Արամ, Արամանյակ, Արամայիս), (**Հ**)արմա, Արա Գեղեցիկ, Արմենակ, Արտավազդ, Արտաշես, Արտան, Արտավան, Արշավիր, Արգամ, Արբակ, Արծրուն, Արմիր, Արամե, Արգիշտի, Արիագատե (Տիգրան 2-րդ Մեծի դստեր անունը), Արշակ, Արշամ...) ու **աշխարհ**

²¹ Որոշ ուսումնասիրողներ Ար Աստծո անունն այլ կերպ են ընկալում (ոչ լուսավոր), կամ չեն ընդունում: Սակայն փաստերն այնքան շատ են ու այնքան խոսուն, որ անիմաստ է բանավիճել այն ուսումնասիրողների հետ, որոնք փորձում են չտեսնել **Արարչ Ար Աստծո** ու **ար** արմատի գոյությունը: Ար-Արաի հանդեպ ոչ լուսավոր (բացասական) վերաբերմունքը նկատվում է քրիստոնեության հարթանակից հետո, երբ անհանդուրժողական վերաբերմունք դրսևորվեց հին հավատքի հանդեպ:

հագրական (Արարատ, Արատտա, Արմանի, Արմե, Արմինա, Արդինի, Արմավիր, Արտաշատ, Արաման, Արամուս, Արամանյակ, Արտագերս, Արագած, Արածանի, Արաքս, Արեգունի, Արտագ, Արենի, Արմաշ, Արծն, Արճեշ, Արուճ, Արցախ,...) անուններ:



Արմենների (արիների) երկիրը, (Մ. Գավուբջան, 2010, էջ 220)

Ար-ը կարող է հայտնվել բառի սկզբում, բառի մեջտեղում և բառի վերջում: Օրինակները բազմաթիվ են. **Արե**-**արեգակ**, **արյուն**, **արտ**, **արոր**, **արոս**, **արքա**, **արծիվ**, **առյուծ**, **արագիլ**, **արահետ**, նաև **երկինք** (եր-ար-կյանք), **երկիր** (եր-ար-կերտել, ստեղծված, արարված տեղ), **գարուն**, **գարի**, **վարել**, **գարթնել**, **բարձրանալ...**: Նշենք նաև **առաջ**-նորդների **արքա** (Հայք), **փարավոն** (եգիպտոս), **կեսար** (Հռոմ), **ցար** (Ռուսիա), **կարոլ** (король, Եվրոպա) անվանումները և այլն:

Մեծ խորհուրդ ունի նաև հայ-արմեններին տրվող **արմեն** անվանումը: Անդրադառնանք **Արի**, **Արմեն** (Արի որդի), **Արման** (Արի որդի) անվանումներին:

Բիբլիայում վկայվում է **Աստծո որդիների** մասին, որոնք լուսավոր, սուրբ²² էակներ են (մարդիկ) և որոնց ներկայությունն ու գործունեությունը կարևոր նշանակություն ունի Մայր Երկրի համար: Իսկ ովքեր են Աստծո որդիները: Պատասխանը մեկն է. դրանք այն մարդիկ էին, որոնց հնում անվանում էին ազնիվ ու քաջասիրտ արիներ (այրեր) և որոնք պահպանում էին Աստծո բոլոր պատվիրանները (պայքար չարի դեմ, սուտ չխոսել, օգնել կարիքավորներին, պաշտպանել ճշմարիտը, պատասխանատվություն մերձավորի հանդեպ...):



Շումերական քանդակներ (մ.թ.ա. IV հազարամյակ): Պատկերված են բաց գույնի մաշկով ու բաց գույնի ալիքաձև մագերով, սև-կապույտ խոշոր աչքերով, կլոր գլխով ու բարձր քթոսկրով մարդիկ (արմենոիդ մարդաբանական տիպի հատկանիշներ): Կարելի է մտածել, որ այսպիսին են եղել Արարատի երկրում արարված մարդիկ, որոնք մ.թ.ա. V–IV հազարամյակում (նաև ավելի վաղ) արդեն Ստորին Միջագետքում էին: Հիշենք, որ շումեր ժողովրդի մի հատվածը հիշում է, որ իր նախնիները եկել են հյուսիսից՝ լեռնային երկրից (Г. Чанлд, Древнейший Восток в свете новых раскопок, Москва, 1956; И. Канева, Энмеркар и верховный жрец Аратты, ВДИ, 1964, 4; История Древнего Востока, часть I, 1983, с. 92), ի տարբերություն մեկ այլ հատվածի, որն իրեն կոչում է «սևագլուխ» (История Древнего Востока, часть I, 1983, с. 265): Գ. Չայլըդ գտնում է, որ մաշկի բաց գույն ունեցող արմենոիդ մարդաբանական տեսակի մի շարք ցեղեր Հյուսիսային Միջագետքից (Հայկական Միջագետք) իջել են դեպի Շումեր երկիր (կամ գրավել են այն): Ենթադրվում է, որ «սևագլուխ» կոչվողները եկել են հարավից՝ ծովով և ունեցել են դրավիդյան ծագում: Կարելի է ենթադրել նաև, որ շումերները սևագլուխներ ասելով ի նկատի են ունեցել ընդհանրապես մարդկանց, ի տարբերություն աստվածների:

²² Սաղմոսների Գիրք, 28,1: Բիբլիայում «Աստծո որդիները» մեկնաբանվում է «Աստծո հրեշտակներ» իմաստով: (Հորի գիրք, եբր, բնագիր, 2,1): Մեկ այլ դեպքում «Աստծո որդիներ» արտահայտությունը վերագրվում է մարդկությանը (Ղուկաս, 3.38: «Անառակ Որդու» առակը):

Կան ուսումնասիրողներ, որոնց կարծիքով **արի, արիացի** անվանումը հոգևոր (ոգի, ոգեղեն) իմաստն ունի և **ոգին** հավասար է **արի** բառարմատին (**ոգի=արի**), որը Աստվածն է: Սակայն աշխարհի հնագույն ազգերից մեկի՝ հայ-արմենների²³ **ար-մեն (ար-որդի)** անվանումը հուշում է, որ **Արարատի երկրում արարվածները արիներ էին (ար-մեններ):** Շումերական «Գիլգամեշը և անմահների երկիրը» վիպերգում Գիլգամեշը անմահություն ձեռք բերելու համար ուղևորվում է «**անմահների երկիր**»՝ **Արատտա**, որը «բարձր լեռների երկիր է»: Վիպերգից հայտնի է դառնում, որ Արևը, Լուսը, ծագում են երկվորյակ Մասու (Մասիս) լեռներից: Լեռներից այն կողմ գտնվում է կախարդական այգին՝ Դրախտը, ուր ապրում են Աստվածները: Իսկ լեռներից այն կողմ գտնվող կախարդական այգին Արարատյան դաշտն է:

²³ Հայ ժողովրդի **հայ ինքնանվանումը** կապվում է **Մայր Երկրի տիրակալ Էնկի/Հայայի** (նաև Էա) անվան հետ, որն ըստ միջագետքյան դիցաբանության գլխավոր աստված Անի գիտությանը **ակտիվ մասնակցություն է** ունեցել մարդու արարմանը («Էնկի և Նինմախ», «Ատրախասիս» պոեմները): Ըստ շումերական «Էնկին և աշխարհի արարումը» պոեմի Էնկի-Հայան մարդու արարումից հետո համփորդում և սովորեցնում է մարդկանց հարմարվել ու ապրել Մայր Երկրում: Տիգրիս և Եփրատ գետերով նավարկելով Էնկի-Հայան մարդկանց տալիս է գիտելիքներ և բարեկեցիկ ապրելու հնարավորություն՝ քաղաքակրթություն (տալիս է բրդ, գույան, սովորեցնում է զբաղվել խեցեգործությամբ, մշակել մետաղներ, կատարել բնակարաններ ու քաղաքներ...): Կարելի է մտածել, որ խոսակցական լեզուն և մարդկանց տրվել է աստվածների կողմից:


Հայկական հնագույն դիցաբանը ուսումնասիրելիս նկատում ենք, որ Արարատ-Ուրարտուի դիցաբանի գլխավոր աստված **Հալդին** շատ ընդհանրություններ ունի **Հայա-Էնկիի հետ: Հալդին կյանքի, բուսականության, երկրագործության, ռազմի, շինարարության, արիեստների, արարելու ու ստեղծելու** աստվածն էր: Նրա անունից էին հիմնվում քաղաքներ, տաճարներ, գրվում արձանագրություններ, փորվում ջրանցքներ, գցվում այգիներ, կազմակերպվում արշավանքներ և այլն: Հալդիի այս բոլոր հատկանիշները հիշեցնում են Հայա աստծո բնութագրի հատկանիշները (այդ մասին մանրամասն կխոսվի այլ դեպքում):

Արարատ-Ուրարտուի դիցաբանի գլխավոր աստծո անունը ընթերցվում է **Հալդի, Խալդի, Ալդի, Նաև Հայկ, Հաղդի** և այլ ձևերով: Իսկ էթե **Հալ-դին** ընթերցվի **Հայ-դի**, «Հայ աստված» ձևով (Է) հնչյունափոխություն, ինչը հնարավոր է, **դի-ն** աստված իմաստն ունի), ապա շատ հարցեր կպարզաբանվեն: Աստծո անվան **Հայա** ընթերցմամբ կվերականգնվի կորցված Հայա աստծո անունը և հայոց պատմության հազարամյակների շրջայի պակասող օղակներից մեկը: Կարելի է ասել նաև, որ չնայած աստծո անունը մոռացվել էր (կամ մոռացության մատնվել) **Հայ-ա** աստվածը միշտ կա, միշտ ներկա է հայոց մեջ, որպես հավաքական էթնոսի՝ ցեղի ու ազգի ինքնանվանում. **հայ:** Հետաքրքիր է նաև այն փաստը, որ միայն մենք՝ հայերս ենք մեզ **ԱՅ** կոչում, ամեն անգամ հնչեցնելով **Մայր Երկրի տիրակալ ԱՅԱՅԻ** անունը:

Հայոց հնագույն աստվածները



Հայոց աստվածները. Վահագն, Անահիտ, Արամազդ (կենտրոնում), Միհր, Տիր, մ.թ.ա. I դար (Նեմրուփ լեռան սրբատեղի), Արևմտյան Հայաստան (վերակազմություն)




Նեմրուփ լեռան սրբատեղին (այսօրվա տեսքը)




Արամազդ

Աստվածների Հայր, երկնքի ու երկրի Արարիչ, Նեմրուփի սրբատեղի, Արևմտյան Հայաստան, մ.թ.ա. I դար



Մայր Անահիտ

Սիրո, պտղաբերության աստվածուհի, Նեմրուփի սրբատեղի, Արևմտյան Հայաստան, մ.թ.ա. I դար



Մայր Անահիտ

Սիրո, պտղաբերության աստվածուհի, բրոնզե քանդակ, Երիզա, Բրիտանական թանգարան




Վահագն

Թագմի, հաղթանակի աստված, Նեմրուփի սրբատեղի, Արևմտյան Հայաստան, մ.թ.ա. I դար



Միհր

Արևի, կրակի աստված, Նեմրուփի սրբատեղի, Արևմտյան Հայաստան, մ.թ.ա. I դար



Տիր

Գրի, դպրության աստված, Նեմրուփի սրբատեղի, Արևմտյան Հայաստան, մ.թ.ա. I դար

Ինչպես արդեն նշվել է, վիպերգը վկայում է, որ Արատտան ոչ միայն բարձր լեռների, անմահների, աստվածների, այլև սուրբ օրենքների և սուրբ ծեսերի երկիր է: Հնագույն գրավոր աղբյուրներում այսպիսի բնորոշումներ այլևս չկան ոչ մի երկրի համար: Սա նշանակում է, որ Արատտայի (Ar-Atta, Ար նախահոր (երկիր), Ար-ի երկիր) բնակիչները ապրում էին Արարչի (Հայր Աստված) սահմանած պատվիրաններով ու օրենքներով: Կապը Արարչի ու արարված մարդկանց միջև ամուր էր: Հենց այս բնակիչներն էին արի ցեղի մարդիկ՝ արիները (ար-մենները), որոնք Արարչի որդիներն էին ու նրա պատվիրաններով էին ապրում և առաջնորդվում: Հայ-արմենների համար Արարչի՝ Հայր Աստծո կողմից արարված բոլոր մարդիկ հավասար էին: Հայաստանում չեն եղել ստրուկներ, ճորտեր և այլ ստորադասված խավեր: Հայ մարդը մտածում էր, եթե մարդը արարվել է Արարչի կողմից, ուրեմն նա կատարյալ է ու բոլոր մարդիկ հավասար են:



Հալդի

Արարատ-Ուրարտուի գլխավոր աստվածը, բարձրաբանդակ, Արծկե, մ.թ.ա. VIII դար Արևմտյան Հայաստան



Արուբանի (Բակբարտու)

աստվածուհի, Հալդիի կինը, Թեյշեբախնի, մ.թ.ա. VII դար

Այսպիսով կարող ենք ասել, որ հնդեվրոպացիների նախնիները՝ արիական ցեղերը (ար-մեն, ար-ման) իրենց նախահայրենիքում՝ Արարատի երկրում ապրում էին Արարչի սահմանած օրենքներով, որն ապահովում էր ոգու և մտքի ազատություն, ներդաշնակություն ու բարոյական բարձր հատկանիշներ մարդկային հարաբերություններում:

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ ՍԿՍՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ/ԱՐԻԱԿԱՆ (ՆՂԵՎՐՈՊԱՑԻՆԵՐ) ՑԵՂԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանը (Հայկական լեռնաշխարհ) Առաջավոր Ասիայի բարձրադիր, կենտրոնական սարահարթն է, որն ընկած է Արևմուտքի և Արևելքի միջև ու միաժամանակ կապում է այդ աշխարհներն իրար հետ, տեղադրված լինելով այդ աշխարհների հնագույն մշակութային կենտրոններից հավասար հեռավորության վրա: Գտնվելով Արևելքի ու Արևմուտքի միջև՝ կենտրոնում, Հայաստանը կապ, կամուրջ է հանդիսանում նրանց միջև: Այդ է պատճառը, որ Հայաստանի տարածքով են անցել հնագույն միջազգային տարանցիկ առևտրական ուղիները, որոնք կապել են Արևելքը (Չինաստանը, Հնդկաստանը) Արևմուտքի (Հունաստան, Հռոմ) հետ: Այդ ճանապարհը կոչվել է «Մետաքսի ճանապարհ»²⁴: Ինչպես նկատում ենք, Հայաստանը հարմար աշխարհագրական դիրք է ունեցել:



Հայկական լեռնաշխարհը տիեզերքից

²⁴ Манандян А., О торговле в городах Армении с древнейших времен в связи с мировой торговлей, Ереван, 1954, с. 72

Հայաստանի հարմար աշխարհագրական դիրքն ունեցել է **ռազմավարական նշանակություն**, որը տարածաշրջանում տիրապետող դիրք էր ապահովում: Հազարամյակների ու դարերի ընթացքում Հայաստանի հարևանությամբ առաջացել են շատ պետություններ ու կայսրություններ, որոնց համար Հայաստանին տիրելը մեծ կարևորություն է ունեցել: Հին աշխարհի համարյա բոլոր ուժեղ պետությունները փորձել են նվաճել Հայկական լեռնաշխարհը՝ Հայաստանը, որը հնագույն գրավոր աղբյուրներում հանդես է գալիս **Արատտա, Արմանի, Նաիրի, Խուրի, Միտանի (Խուրի-Միտանի), Հայասա, Արարատ, Ուրարտու, Արմենիա** և այլ անուններով: Այդ են վկայում շումերական, քաղական, եգիպտական, խեթական, ասուրական, բաբելական և այլ հնագույն պետությունների տիրակալների արձանագրությունները: Սակայն Հայաստանը նվաճելը դյուրին չի եղել, քանի որ մեր երկիրը ունեցել է հմուտ ու քաջարի ռազմիկներ, որոնք դարեր շարունակ արժանի հակահարված են տվել թշնամիներին:

Մ.թ.ա. VII–IV հազարամյակում Հայկական լեռնաշխարհում տեղի է ունեցել արտադրության միջոցների բուռն զարգացում (մետաղի հայտնագործում, աշխատանքային գործիքների բարդացում, ձիու ընտելացում, լծկան ուժի օգտագործում), որը բնակչության ու բնակավայրերի մեծ աճ է ապահովել:

Հայկական լեռնաշխարհից առաջին տեղաշարժերը վերաբերում են մ.թ.ա. VII–VI հազարամյակին, երբ հայկական/արիական ցեղերի հետքերը (խեցեղեն, օբսիդիանե գործիքներ, պաշտամունքային խորհրդանշաններ) հայտնաբերվում են Փոքր Ասիայի արևմտյան մասում (Չաթալ-հոյուք, Հաջիլար, Տրոյա, Ալիշար) և Միջերկրական ծովի արևելյան մասում՝ Ամուկի հովտում (Թելլ-էշ-Շեյխ, Ալալախ):

Հայկական լեռնաշխարհից կատարված տեղաշարժերը ավելի հաճախակի են դարձել մ.թ.ա. III–II հազարամյակում: Հայկական/արիական ցեղերը շարժվել են դեպի արևմուտք, հյուսիս ու արևելք: Դեպի արևմուտք տեղաշարժերի ժամանակ ցեղերի մի մասը հասել է Փոքր Ասիայի արևմտյան մասեր ու Բալկաններ (կրետե-միքենյան մշակույթը կրող հունական ցեղեր, փոյուզիացիներ, թրակիացիներ, էտրուսկներ): Տեղաշարժվող ցեղերը Սև ծովի հյուսիսային մասեր են հասել Կովկասով, ինչպես նաև՝ հարավից շրջանցելով Կասպից ծովը: Մ.թ.ա. II հազարամյակի վերջին Բալկանները ընդունել են հնդեվրոպական (արիա-

կան) ցեղերի նոր զանգվածներ, որոնք այդտեղ են հասել Սև ծովի հյուսիսային մասերով: Հունաստանում հայտնաբերված հնագույն մշակույթը հայտնի է Կրետե-միքենյան մշակույթ անունով, որը թվագրվում է մ.թ.ա. III–II հազարամյակով: Այս մշակույթն իր զուգահեռներն ունի Փոքր Ասիայում (Ալիշար, Տրոյա), Հայկական լեռնաշխարհում (Շենգավիթ, Գառնի, Էլար, Արծն) և այլն: Ընդունված է, որ Կրետե-միքենյան մշակույթը ստեղծել են հունական ցեղերը, որոնք արտագաղթի մի քանի ալիքներով Փոքր Ասիայի արևմտյան մասերից (Հոնիա և այլ տարածքներ) հայտնվել են Կրետե կղզում և Բալկանյան թերակղզում: Կրետե-միքենյան մշակույթը կրող հունական ցեղերից բացի, նշվում են նաև փոյուզիացիները, թրակիացիները, էտրուսկները և այլն: Կրետե-միքենյան մշակույթը կրող մարդկանց պահպանված կմախքի ոսկորների Դև-Թ-ի արդյունքները, որ ժամանակակից մեթոդներով կատարել են ԱՄՆ-ի և Հունաստանի գիտնականները, ցույց են տալիս, որ Հունաստանի հնագույն բնակիչները՝ Կրետե-միքենյան մշակույթը կրողները նեոլիթի հնագույն երկրագործ ցեղերի հետնորդներն են, որոնց նախնիները Կրետե են եկել **Փոքր Ասիայից** և **Առաջավոր Ասիայից**, մոտ 9000 տարի առաջ: Նույն հետազոտությունները նաև ցույց են տալիս, որ այդ մշակույթը կրողները գենետիկ նմանություններ ունեն հնագույն ու ժամանակակից Եվրոպայի բնակիչների հետ: Ըստ այդ ուսումնասիրությունների, նեոլիթյան մշակույթը կրողները, որոնք Կրետե-միքենյան մշակույթը կրող ցեղերի նախնիներն են, արտագաղթել են նաև Եվրոպա ու նաև ժամանակակից եվրոպացիների նախնիներն են²⁵: Ինչպես տեսնում ենք, այդ հետազոտությունների արդյունքներով ճշգրտվում են մարդկության պատմության հնագույն ժամանակաշրջանի շատ հարցեր, որոնք կարևոր են նաև Հայկական լեռնաշխարհից ու շրջակա տարածքներից կատարված տեղաշարժերի ուսումնասիրության համար:

Հունական հնագույն գրավոր աղբյուրները անմիջականորեն չեն վկայում նախահայրենիքի մասին, սակայն հոգևոր (աստվածների պաշտամունք, ավանդազրույցներ) ու նյութական մշակույթի արժեքները խոսում են Հայաստան-Հունաստան հնագույն կապի մասին: Հետաքրքիր է նաև, որ հունական առասպելաբանությունը ունի Համաշխար-

²⁵<http://www.dailymail.co.uk/sciencetech/article-2325768/The-Minoans-Caucasian-DNA-debunks-longstanding-theory-Europes-advanced-culture-Africa.html>

հային ջրհեղեղի իր տարբերակը, որի ավանդազրույցներից մեկը վկայում է հայերի ու հույների ազգակցական ու արյունակցական կապերի մասին: Համաշխարհային ջրհեղեղի հունական տարբերակը մեզ է հասել մ.թ.ա. VIII–VII դդ. հույն նշանավոր գրող Հեսիոդոսի «Աշխատանք և օրեր» պոեմի միջոցով: Պոեմում աստվածները գոռոզության, չարության ու նախանձի պատճառով ոչնչացրել են մարդկային չորս սերունդ, որոնք արարվել ու ապրել են **ոսկեդարում, արծաթի դարում, պղնձի դարում և երկաթի դարում**: Վերջին՝ երկաթի դարի ջրհեղեղի ժամանակ փրկվել են Պրոմեթևսի որդի Դեկալիոնը և նրա կինը: Զրհեղեղի ժամանակ Պրոմեթևսի խորհրդով Դեկալիոնը պատրաստել է մի մեծ արկղ և կնոջ հետ տեղավորվել այնտեղ: Ինն օր ջրերի վրա տարուբերվելուց հետո արկղը կանգ է առել Պաոնաս լեռան Նիս գագաթին: Այնուհետև Զևսի հրամանով մարդկային ցեղը նորից բազմացել է²⁶: Մեկ այլ հունական հնագույն ավանդազրույց պատմում է, որ Դեկալիոնը և նրա կինը՝ Պիրրան ունեցել են երկու զավակ **Հելլեն** և **Անդրոպոմոս** անուններով, որոնցից էլ սերվել են հելլենները (Հելլենից) և հայերը (Անդրոպոմոսից)²⁷: Ինչպես նկատում ենք, համաձայն այս ավանդազրույցի հույներն ու հայերը ունեն ազգակցական, արյունակցական կապեր: Հայերի ու հույների ազգակցական կապի մասին վկայություններ են պահպանվել նաև հայ մատենագրության մեջ: Հայ մատենագիր Հովհաննես Դրասխանակերտցին (IX–X դդ.) իր աշխատության մեջ վկայում է, որ Հայկ նահապետի պապ Թիրասը նաև թրակիացիների նախահայրն է²⁸:

Սակայն միշտ չէ, որ նոր հայտնված ցեղերը խաղաղ գոյակցել են ավելի վաղ այդ տարածքներում հայտնված իրենց ցեղակիցների հետ: Հաճախ նորեկների ճնշման հետևանքով հնաբնակ ցեղերը նոր տեղաշարժեր են կատարել: Այդպիսի մեծ տեղաշարժի մասին են հայտնում եգիպտական աղբյուրները՝ խոսելով «ծովի ժողովուրդների» գաղթի մասին, որը կատարվել է Էգեյան աշխարհից ու Բալկաններից (թրակիա-փոուգիական ցեղեր) դեպի Փոքր Ասիա ու Եգիպտոս՝ Նեղոսի

²⁶ Մ. Բարթիկյան, Դիցապաշտ Հելլադան կամ Հելլեն դիք, Աթենք, 1936, էջ 32–36:

²⁷ Հ. Տեր-Մովսեսյան, Պատմություն հայոց, Վենետիկ, 1922, էջ 119–120:

²⁸ Յովհաննես Կաթողիկոսի Դրասխանակերտցայ, Պատմություն հայոց, Թ., 1912, էջ 11:

դելտա (մ.թ.ա. II հազարամյակի II կես): «Ծովի ժողովուրդների» ցանկում չկան հայ կամ արմեն անունները: Իսկ գաղթողները հանդես են գալիս ցեղի անուններով կամ նոր անուններով:

Ինչպես նկատում ենք, եվրոպացիների նախնիները Եվրոպա մուտք են գործել արևելքից՝ Կովկասով, կամ շրջանցելով Կասպից ծովը, և հարավից՝ Փոքր Ասիայով (այդ են վկայում այդ տարածքներում կատարված հնագիտական պեղումները, որի ժամանակ հայտնաբերված մշակութային արժեքները նույնանում են հայկական հնագիտական մշակութային արժեքների հետ, աշխարհագրական անունները և այլն): Այդ տեղաշարժերի ժամանակ են Եվրոպայում վերջնականապես կազմավորվել կելտական, հունական, գերմանական, իլլիրիական, իտալիկյան (այժմ՝ իտալական), սլավոնական, բայթյան լեզվախմբերը և այլն:

Պատմագրության մեջ տեղաշարժերին մասնակցող ցեղերին տրվել է **հնդիրանցի** անվանումը, իսկ իրենք իրենց այդ ցեղերն անվանել են **արիներ (Արարիչ Ար Աստծո անունով)**: Հայ-արմեններից սերված այդ ցեղերը՝ արիները, հայտնվելով այլ տարածքներում պահպանում էին արի ցեղին պատկանելու գիտակցությունը, հոգևոր կապը և հեռավոր հիշողությունն նախահայրենիքի՝ «**աստվածների**», «**անմահների**», «**սուրբ օրենքների**» և «**սուրբ ծեսերի**» երկիր Հայաստան-Արմենիայի, Արարատ-Մասիս Սրբազան լեռան, Արաքս Մայր գետի ու այլ սրբությունների մասին:

Մ.թ.ա. I հազարամյակի վերջից հայ-արմենների տեղաշարժերը կապվում են նախ հռոմեական, ապա բյուզանդական կայսրերի վարած հակահայ քաղաքականության հետ: Ցանկանալով թուլացնել Հայաստանը, նրանք հրահրում կամ պարտադրում էին հայերի արտագաղթը դեպի իրենց կայսրության ծայրամասեր: Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև Հայաստանի առաջին (387թ.) և երկրորդ (591թ.) բաժանումներից հետո Բյուզանդիան որդեգրել էր իր տիրապետության տակ անցած Արևմտյան Հայաստանի հայ բնակչության, հատկապես, գինվորական ուժի տեղահանումը դեպի կայսրության արևմտյան մասեր՝ Կապադովկիա, Ասորիք, Կիլիկիա և հեռու այլ տարածքներ: Հայերը հայտնվում են նաև Թրակիայում, Բալկաններում, Դանուբի ավազանում և այլ տարածքներում: Զինվորներից բացի արտագաղթել հրահրում և պարտադրում էին նաև հայ ժողովրդի այլ խավերի ներկայացուցիչների՝ նախարարների, առևտրականների, արհեստավոր-

ների և այլն: Արևմտյան Հայաստանում բյուզանդական կայսրերի հրամանով պարբերաբար տեղի էին ունենում զորահավաքներ, և հավաքագրված հեծյալ ու հետևակ հայկական զորագնդերը իրենց նախարարների հրամանատարությամբ, տեղափոխվում էին արևմուտք ու մասնակցում վանդալների, գոթերի, սլավոնների ու այլ ցեղերի և ժողովուրդների դեմ բյուզանդական կայսրերի վարած նվաճողական արշավանքներին: Արշավանքներին մասնակցող հայ ռազմիկները կամ զոհվում էին, կամ հրաժարվում մասնակցել բյուզանդացիների կողմից վարվող ոչ արդարացի պատերազմին ու բանակի պատժիչ գործողություններին, և ամբողջ ջոկատով լքելով բյուզանդական բանակը, բնակություն էին հաստատում նոր տարածքներում (Բալկաններ, Եվրոպա, նաև Կիլիկյան Ռուսիա): Հայերի ու հայկականի ներկայությունը զգալի է հատկապես Բալկաններում: Կարելի է ասել, որ Բալկանյան շատ ժողովուրդների (սերբեր, բուլղարներ, մակեդոնացիներ) կազմավորման մեջ մեծ տեղ ու դեր են ունեցել հայերը (բյուզանդական բանակում ծառայող հայկական զորաջոկատները): Այդ են վկայում այդ ժողովուրդների ավանդությունները, սովորությունները, ավանդագրույցները, կենցաղը, նաև մշակութային շատ տարրեր, (երաժշտություն, երաժշտական գործիքներ, հագուստի ձևեր, ասեղնագործություն): Հայտնի է նաև, որ 572 թ. սկսված պարսկա-բյուզանդական պատերազմի ժամանակ Հայաստանի Աղծնիք նահանգի Արզն գավառի բնակիչները, ավելի քան 10 000 մարդ, որոնք հավատարիմ էին մնացել պարսիկներին, բյուզանդական Մորիկ (Մավրիկոս) կայսեր հրամանով 578 թ. տեղահանվում և բնակեցվում են Կիպրոս կղզում, «ուր և նրանք ապրում են մինչև օրս» գրում է Հովհան Եփեսացին²⁹:

Հայերի հայրենիքից հեռանալու կամ բռնագաղթվելու պատճառ են հանդիսացել նաև VII դարի կեսից Արևմտյան Հայաստանում սկսված սոցիալական շարժումները, որոնք հայտնի են **Պավլիկյան** անունով: Այդ շարժումները ուղղված էին Բյուզանդական կայսրության, անարդարության, ամեն տեսակ դասային արտոնությունների ու եկեղեցու դեմ: IX դարի 70-ական թթ. բյուզանդական բանակը արյունալի դատաստան է տեսնում կայսրության տարածքում մեծ թափ ու ծավալ ստացած պավլիկյան շարժման մասնակիցների հետ:

²⁹ Иоанн Ефесский, см. Н. Пигулевская, Сирийские источники по истории народов СССР, М.-Л., 1941, с. 133, 143, 146.



These details from a 16th-century treaty codex depict Armenian soldiers in Byzantine empire. Most of the Empire's military aristocracy were of Armenian ancestry and in the 9th and 10th centuries Armenians formed about twenty-five per cent of the Empire's armed forces or possibly even more.

Պատմահայր Մովսես Խորենացին վկայում է, որ հայոց նահապետներից մեկը՝ Գեղամը (Գեղ-ամ=մա) բնակվում է հայոց հյուսիս-արևելյան լեռան հետևի կողմում, ծովակի ափին: Նրա անունով լեռը կոչվում է **Գեղ**, իսկ երկիրը, ինչպես նաև ծովը՝ **Գեղարքունի**⁷⁸ (Գեղարքունյաց ծով, նաև Սևանա լիճ): Ինչպես նկատում ենք, Խորենացին Սelikuni երկիրը վկայում է Գեղարքունի ձևով: Եվ՝ երկիրը (Գեղարքունի), և՛ լեռը (Գեղ), և՛ ծովը (Գեղարքունի), նաև ցեղը ունեն **Գեղ-** արմատը (Uel-Wel): Գ. Ղափանցյանը մերձսևանյան ցեղերից կարևոր դեր է վերապահում **գեղ-uel** ցեղին, Սelikuni-Գեղաքունի երկրին և Գեղամ նահապետին, որն իր անունը ստացել է **գեղ-uel** ցեղի անունից⁷⁹: Կարելի է մտածել, որ կելտական **Welch (Wel-ch)** ցեղանունը կարող էր պահպանել իրենց ցեղի ու նախահայրենիքի **Uelikuni (Գեղաքունի)** անունը:

Հետևաբար կարելի է ենթադրել, որ Հայկական լեռնաշխարհի **Uelikuhi**, **Uelikuni** (Գեղաքունի, Գեղարքունի), **Gulutahi** երկրները **Uel-Wel (Գեղ)**, **Gul (Գոյ)** ցեղերի նախնական բնակության երկրներն են: Եվ հավանական է համարվում, որ Գեղ (Գեղամա) լեռնաշղթան ընդգրկող **Uelikuni-Gulutahi** (Վելիկունի-Գուլուտախի) երկիրը հույների կողմից **կելտ**, իսկ հռոմեացիների կողմից **գալլ**, **գալաթ** անունն ստացած ցեղերի նախահայրենիքն է⁸⁰:

Այսպիսով կարելի է ասել, որ **կելտ** կամ **գալլ** ընդհանուր անուններով հայտնի կելտական ցեղերը, տեղաշարժի մի քանի այիքներով (մ.թ.ա. II–I հազարամյակ), սփռվել են Եվրոպայի մեծ մասում, ունենալով մեծ ավանդ եվրոպական քաղաքակրթության ու մշակույթի ստեղծման մեջ: Սփռվելով նրանք իրենց հետ տարել են **հոգևոր** (աստվածների պաշտամունք, արևի պաշտամունք, ծառերի պաշտամունք, ծեսեր, ավանդություններ) ու **նյութական** (բրոնզի, երկաթի մշակում,

⁷⁶ Պետրոսյան Ս., Մերձսևանյան ցեղերի միությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում, մ.թ.ա. VI–V դդ., ՊԲՀ, 1976, թիվ 1:

⁷⁷ Գավուքյան Մ., Կելտական ցեղերի նախահայրենիքը..., էջ 307:

⁷⁸ Մովսես Խորենացի, 1981, էջ 51, ԺԲ:

⁷⁹ Ղափանցյան Գ., Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, 182, 187:

⁸⁰ Գավուքյան Մ., Կելտական ցեղերի նախահայրենիքը..., էջ 306:

բնակավայրերի հիմնում, ճարտարապետություն) մշակույթի արժեքներ, ինչը նաև վկայում է հայ-կելտական հնագույն մշակութային արժեքների նմանության ու կապերի մասին:

Նշենք նաև հայկական Քարահունջ (մ.թ.ա. V հազարամյակի կես) և բրիտանական (կելտական) Սթոունհենջ (մ.թ.ա. III հազարամյակի կես) հնագույն հուշարձանների (աստղադիտարաններ) անվանական ու իմաստային նմանությունների ու նշանակությունների մասին, ինչը նույնպես վկայում է Հայկական լեռնաշխարհ-կելտական ցեղեր հնագույն կապի մասին⁸¹:



Քարահունջ հուշարձանը
(Հայաստան, Սյունիք)



Սթոունհենջ հուշարձանը
(Բրիտանիա)

Այսպիսով նկատում ենք, որ եվրոպական (հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող) ժողովուրդների պատմությունը սկսվում է Հայաստանից և այդ պատմության հետքերն ու բոլոր ճանապարհները տանում են Հայաստան, ինչը նշանակում է, որ եվրոպական ժողովուրդների (հնդեվրոպացիներ, արիներ) նախահայրենիքը Հայաստանն է:

⁸¹ Նշենք նաև վերջերս կատարված մի ուսումնասիրության մասին: Անգլիացի բժիշկ-գենետիկ Ստիվեն Օպպենհեյմերը իր «Բրիտանացիների ծագումը. Գենետիկ դետեկտիվ» գրքում, կատարված ուսումնասիրությունների հիման վրա (DNK, Y-խրոմոսոմ) առաջ է քաշում այն տեսակետը, որ Բրիտանական կղզիների հնագույն բնակիչները՝ շոտլանդացիները, ուելսցիները և իռլանդացիները ունեն նույն գենետիկ կոդը, որն իր հերթին նման է բասկերի գենետիկ կոդին:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԲԱՍԿԵՐԸ (ՊԻՐԵՆԵՅԱՆ ԹԵՐԱԿՂԶԻ)

Եվրոպայի ու Իսպանիայի հնագույն ժողովուրդներից մեկի՝ բասկերի ծագման հնագույն վարկածներից մեկը՝ «ասիական տարբերակը» սկիզբ է առել մ.թ.ա. II դարում: Այդ մասին հռոմեացի պատմիչ Ապպիանոսը (95–165 թթ.) գրում է. «Ոմանք ասիական իբերների համարում են եվրոպական իբերների գաղութը, մյուսները նրանց դիտում են որպես վերջիններիս հայրեր, ուրիշներն էլ գտնում են, որ նրանց միջև ընդհանուր ոչինչ չկա, բացի անունից»⁸²: Պիրենեյան թերակղզու ժողովուրդների պատմության մեջ հայկական տարրի գործուն մասնակցության մասին ուսումնասիրողները սկսել են խոսել XVI–XVII դդ.⁸³: Բասկ ուսումնասիրողներ էստեբան դե Գարիբայը (XVI դ., «Պատմական համառոտություն»), Անդրես դե Պոսան (XVI դ., «Իսպանիայի հնագույն լեզվի, բնակավայրերի ու գավառների մասին») և Բալթազար դե Էչավեն (XVI դ. կես – XVII դ. կես, «Ճառեր») հենվելով հայբասկյան տեղանունների, ավանդագրույցների, սովորույթների ու տարազների նմանությունների վրա Հայաստանը համարել են բասկերի նախահայրենիքը: Բասկ գիտնական Անդրես դե Պոսան ուղղակիորեն պնդում է, որ բասկերը եկել են Հայաստանից: Նա նույնիսկ գրում է, որ Իսպանիայի միջերկրածովյան ափի Տարրագոնա քաղաքը հիմնադրել են հայերը, որի անունը հայերենում նշանակում է «հովիվների համայնք» (ակնհայտ է Տարոն (հնագույն ձևը Տարավնա) և Տարրագոնա անունների նմանությունը): Իսկ Բալթազար դե Էչավեն գրում է. «Առաջին եկվորները Նոյի որդիների հետ ջրհեղեղից հետո եկել են Իբերիա սիրելի հայրենիք Հայաստանից»: Կարևոր էր նաև 1610 թ. լույս տեսած իսպանացի պատմաբան Գասպար Էսկոլանոյի Վալենսիա քաղաքի պատմության մասին գիրքը (Decada primera de la historia de Valencia, 1610 թ.), որտեղ հեղինակը գրում է, որ համաշխարհային ջրհեղե-

⁸² Ապպիանոս Ալեքսանդրիացի, Հռոմեական պատմություն (Appiani Alexandrini, Historia Romana).

⁸³ Բասկերի մասին բաժինը գրելիս օգտագործվել են Վահան Սարգսյանի հոդվածները, ուսումնասիրությունները (Ուրարտական քաղաքակրթությունը և բասկերի նախահայրենիքի հարցը, Երևան, 1988: Բասկերն Արարատ լեռան ստորոտում, (հոդված), «Գարուն» ամսագիր, 1991, 3: Բասկերի ծագման առեղծվածը և Հայկական լեռնաշխարհը, Ե., 2000: Բասկերեն-Հայերեն բառարան, Երևան, 2001) և ինտերնետային կայքէջերը (hayblog. ru, Analitika.at.ua.):

ղից հետո **Թուրքի նահապետն իր ընտանիքով հասել է Իսպանիայի արևելյան ափ ու հաստատվել այնտեղ (Կատալոնիա):** Ըստ Էսկոլանոյի, **հայերն են եղել Իսպանիայի առաջին բնակիչները, որոնք նաև խոսել են հայերեն:**

Սակայն ժամանակ առ ժամանակ, առանց հիմնավորման, նաև կարծիքներ են հնչում, որ հայկական ու բասկյան տեղանունների (Արարատ-Արալար, Արաքս-Արախս, Կորդուք-Գորդեա կամ Գորբեա) նմանությունները հավաստի չեն: Դրան էր միտված 1802 թ. Մադրիդում լույս տեսած «Բասկերի երկրի պատմա-աշխարհագրական բառարանը»: Սակայն, որքան էլ փորձեր արվեն ժխտել հայ-բասկյան ընդհանրությունները, այնուամենայնիվ անհնար է ժխտել կամ չտեսնել ճշմարտությունը: Այսպես. այդ բառարանի I հատորում հետաքրքիր տեղեկություն կա, ըստ որի **Արմենտիա** տեղանունն ունեցել է **Արմենտեզի** տարբերակը, որտեղ **-տեզի** բաղադրիչն ունի **տեղ** իմաստը, իսկ դա նշանակում է, որ **Արմենտեզին հայի տեղ, վայր** իմաստն ունի⁸⁴:

XIX դարում բասկերի հայկական ծագման վարկածը նորից որոշ գիտնականների (Խուան Բատիստ դե Էռո) ուշադրությանն է արժանանում: Դարավերջին անգլիացի գիտնական Էդուարդ Սպենսեր Դոժտոն հետաքրքրության համար սկսում է ուսումնասիրել հայոց լեզուն և ընդամենը երկու ամիս անց զարմանքով նկատում է, որ հայերեն ու բասկերեն լեզուները շատ ընդհանրություններ ունեն և շատ բառեր նույն իմաստն ունեն (նրա կողմից նկատվում է մոտ հիսուն նման բառ. **չար, տեղի, անտի (այնտեղից), զատել...**): Այդ մասին նա գրում է իր «Բասկերեն բառեր հայոց լեզվում» հոդվածում, որը 1884 թ. հրատարակում է «Էռուսկերա» («Բասկերեն լեզու») ամսագրում: Սա մեծ նորություն էր գիտական աշխարհում, քանի որ այդ ժամանակ բասկերի ծագման ընդունված տեսակետը վրացական վարկածն էր:

1920 թ. լույս է տեսնում ակադեմիկոս Ամադոր դե Լոս Ռիոսի «Իբերական լեզվի հուշարձանն ու գանձը» աշխատությունը, որտեղ չնայած ծագումնաբանական խնդիրներին վերաբերող որոշ սխալների, բերվում են մեծ քանակությամբ բասկ-հայկական տեղանունների զուգահեռներ, որոնք հեղինակը վերցրել է հենց հայկական գրավոր աղբյուրներից (Մովսես Խորենացի, Եղիշե, Ղազար Փարպեցի):

⁸⁴ Սարգսյան Վ., Բասկերն Արարատ լեռան ստորոտում, «Գարուն», ամսագիր, 1991, 3:

Ուշագրավ փաստ է նաև այն, որ **Ար-Արամով** սկսվող մի քանի տասնյակ (մոտ 60) տեղանուն կա Իսպանիայում, որոնց մեծ մասը գտնվում է Բասկերի երկրում: Թվարկենք մի քանիսը.

Aram (Արամ), բնակավայր, Իպուսկոյայի նահանգ:

Aramedia (Արամեդիա), բնակավայր, Նավարայի նահանգ:

Aramanti (Արամանտի), բնակավայր, Նավարայի նահանգ:

Aramayona (Արամայոնա), գետ, որը սկիզբ է առնում Արանխիոյից (Arangio),

Arama (Արամա), որսատեղ, Ալավայի նահանգ:

Այն, որ Aram (Արամ) անունը այս դեպքում կապված է հենց բասկերի հետ, վկայում է այն փաստը, որ նույն՝ Ար-Արամ արմատով տեղանուններ կան նաև Ֆրանսիայի հարավային շրջաններում, ուր բասկեր են բնակվում, օրինակ.

Aramits (Արամից), կանտոն ներքին Պիրենեյներ դեպարտամենտում:

Aramon (Արամոն), կանտոն Նիմ քաղաքի շրջանում:

Aram (Արամ), գետ ներքին Պիրենեյներ դեպարտամենտում:

Անկասկած հայկական ծագում ունեն նաև տեղանունների մի մեծ խումբ, որոնք ունեն **Ar, Ara** բաղադրիչները: Այսպես. իսպանական «Sopena» (Սոպենա) հանրագիտարանում կան **Armen** անվամբ կազմված երեք տասնյակից ավելի տեղանուններ.

Armen (Արմեն) գյուղ, Լա Կորունյայի նահանգ:

Armentia (Արմենտիա), շատ հին բնակավայր Վիտորիա քաղաքի մոտ, Ալավայի նահանգ:

Armenia (Արմենիա), հնագույն պորտուգալական քաղաք (կարծիք կա, որ այն համապատասխանում է Պոնտի դու Լիմային): Նույն անունով տեղանուններ կան նաև ֆրանսիական Բասկերի երկրում, որը կրկին վկայում է **արմեն** անվան՝ բասկերի հետ կապված լինելու մասին:

Ամադոր դե Լոս Ռիոսը նաև կարծում է, որ **հայ (Aia)** անունից են ծագում Պիրենեյան թերակղզում, մասնավորապես Բասկերի երկրում տարածված շատ տեղանուններ. **Այեսե (Ayese), Այա (Aia), Արայա (Araya), Էնդայա (Endaya)** և այլն:

Իսպանացի գիտնականի կարծիքով հայկական ծագում ունի նաև **Ur** բառով կազմված տեղանունների մի մեծ խումբ⁸⁵ (շուրջ 120 անուն),

⁸⁵ Հայտնի է, որ **ար** արմատը հանդես է գալիս նաև **ուր** ձևով: Հետևաբար կարելի է ենթադրել, որ այս օրինակներում գործել է **ար-ի** հնչյունափոխված **ուր** տարբերակը (հմմ Արարատ-Ուրարտու, Արմե-Ուրմե):

որոնցից ավելի քան հարյուրը՝ Բասկերի երկրում: Հիշատակենք մի քանիսը.

Urate (Ուրատե), բնակավայր, Ալավայի նահանգ:

Uriarte (Ուրիարտե), թաղամաս Բասսուրի քաղաքում, Բիսկայայի նահանգ:

Uribarri (Ուրիբարի), վեց բնակավայր Բասկերի երկրում:

Urbaiain (Ուրբիայն), բնակավայր, Նավարայի նահանգ:

Կան նաև այլ նման տեղանուններ. **Edessa – Եդեսիա, Carcar – Քարքար, Erice – Երիզա** և այլն:

Բասկերի հայկական ծագման վարկածի ամրապնդման համար կարևոր էր 1927 թ. հրատարակված Բերնարդո Էստորնես Լասայի «Ռոնկալի հովիտը» աշխատությունը: Հեղինակը Նավարայի Իսաբա բնակավայրում գրի է առել մի ավանդագրույց, որի համաձայն Իսաբան հիմնել են հայերը, որոնք Նավարայի առաջին բնակիչներն էին ու բասկերի նախնիները: Ավանդագրույցը պատմում է, որ բասկերի նախնու անունը **Այիտոր** էր (**Aitor**, հայտնի է նաև Տոբել անունով): **Այիտորը իր յոթ որդիների հետ եկել է Հայաստանից** ու նրանց պատվին Նավարայում հիմնել յոթ բնակավայր, այդ թվում՝ Տարրագոնա (**Tarraho** ավագ որդու անունով), Ամպեստա և այլն: Իսկ էբրո գետն իր անունը ստացել է Այիտոր-Տոբելի երկրորդ որդու՝ Իբերի անունից: Ասվում է նաև, որ եկվոր հայերը, որոնք ողջ Պիրենեյան թերակղզու բնակչության, այդ թվում բասկերի նախնիներն են, իմացել են մետաղի մշակման գաղտնիքը: Հետաքրքիր է, որ Իսաբայի արխիվում գտնված հնագույն ձեռագիրը ապացուցում է բանավոր պահպանված վերոհիշյալ ավանդագրույցը: Հետաքրքիր է նաև, որ **Իսաբա** բասկերենում նշանակում է **նախնիների հետք**: Էլ ավելի հետաքրքիր է, որ Իսաբայի ճանապարհներից մեկը, որով, ըստ ավանդության, **Հայաստանից եկել է Այիտորը, կոչվում է Էրմինեա (Erminea): Այիտորը** որոշ ուսումնասիրողների (Յոզեֆ Կարստ) կարծիքով **հայի թոռ** իմաստն ունի: Հետաքրքիր է, որ բասկերի մոտ հնուց գոյություն է ունեցել **Այիտորի որդի (Aitoren seme)** արտահայտությունը, որն **ազնվազարմ, զտարյուն** իմաստն ունի⁸⁶: Իսկ դա նշանակում է, որ հնում բասկերի մեջ զտարյուն էին համարվում նրանք, ովքեր ծագում էին Հայաստանից

գնացած Այիտորի ուղղակի ժառանգներից: Կան նաև կարծիքներ (Իսավիեր Քինտանա, Խոսեբա Տոբել), որ Այիտոր անունը հորինովի առասպելական-դիցաբանական անուն է և այլն:

Բերնարդո Էստորնես Լասայի «Ռոնկալի հովիտը» գրքից հայտնի է դառնում նաև, որ դեպի հյուսիս տեղաշարժվող ցեղերը անցելով Կովկասյան լեռները, այնուհետև շարժվել են արևմուտք, սակայն ցեղի մի մասը չի շարունակել ճանապարհը, այլ **մնացել է ապրելու Կովկասյան լեռներում**, մոտ նախահայրենիքին՝ Հայկական լեռնաշխարհին: Շնորհիվ Լասայի այս աշխատության, առաջին պլան մղվեց բասկերի հայկական ծագման մասին տարածված վարկածը:

Կարևոր էր նաև 1928 թ. լույս տեսած գերմանացի լեզվաբան Յոզեֆ Կարստի «Ալարոդները և պրոտոբասկերը» աշխատությունը, որտեղ հեղինակը մոտ 300 ընդհանուր բառեր էր հայտնաբերել հայերեն և բասկերեն լեզուներում: Կարստը ուշադրություն էր դարձրել նաև ազգագրական և մարդաբանական հարցերին: Այս գիտնականը առաջինն էր, որը ուշադրություն էր դարձրել այն փաստին, որ բասկերը **արմենոիդ** մարդաբանական տիպին են պատկանում: Սակայն Կարստի այս և այլ գրքեր միանշանակ չեն ընդունվում գիտական աշխարհում: Ընդունված էր այն տեսակետը (Անտուան Մեյե), որ բասկերենը հնդեվրոպական լեզու չէ, իսկ հայերենը՝ հնդեվրոպական լեզու է, ինչը նշանակում էր, որ այդ ժամանակ հայերենն ու բասկերենը հնարավոր չէր կապել իրար:



Այիտոր-Տոբելը (նկարագրողում), Los mitos de Túbal y Aitor, www.recursosacademicos.net/web/2011/12/22/el-mto-de-tubal

⁸⁶ Սարգսյան Վ., Բասկերն Արարատ լեռան ստորոտում:

Չնայած երբեմն բասկերի հայկական ծագման մասին ժխտողական տեսակետներ էին հնչում, այնուամենայնիվ փաստերը շատ համառ են: Եվ ուսումնասիրողները նորից ու նորից անդրադառնում էին հայերի ու բասկերի միջև եղած նմանություններին, հատկապես աշխարհագրական անունների նմանություններին: Այդ մասին են վկայում իսպանա-ամերիկյան հանրագիտարանում տպագրված հոդվածները: Այսպես **Իբերներ** հոդվածի տակ գրված է. (իբերները) «Լեռներում, գետերում ու քաղաքներում պահպանել են իրենց հայրենիքի հուշերը: Արալարի լեռնաշղթան ու ծերպերը՝ Բորունդա գագաթով, հիշեցնում են նշանավորագույն Արարատը՝ մարդկության երկրորդ օրրանը: Արապը, որ սկիզբ է առնում Նավարյան Արալար լեռան ստորոտից, իր անվամբ անտարակույս պարտական է Հայաստանի Արաքսին, նաև բազում դարեր անփոփոխ պահպանված Իպուսկոայի Ուրումեա գետը, որը մինչև օրս կոչվում է «պարսկական» և այդպես է կոչվել Հայաստանի Վանա լճի ու Կասպից ծովի միջև ընկած լճի անունով (*Ուրմիա լիճը Հայկական լեռնաշխարհի խոշոր լճերից մեկն է*), որը ինչպես նաև Օրիո գետը, ուր թափվում են մեր Արաքսի ջրերը Տոլոսա չխասած, կոչվում էր Ատուրիա, ինչպես որ Տիգրիսի վտակներից մեկը...»⁸⁷: Մեկ այլ տեղ El valle Aram-ի (Արամի դաշտավայրը) մասին հոդվածում գրված է. «Արամի դաշտավայրը գտնվում է Պիրենեյան լեռների հյուսիսային ստորոտում, պատկանում է Իսպանիային: Անհնար է ամենայն ճշգրտությամբ որոշել, թե ովքեր են եղել այդ դաշտավայրի առաջին բնակիչները: Մնում է միայն ընդունել, որ նրանք պատկանելիս են եղել ընդհանրապես «իբերներ» կոչված հնագույն ցեղերին, որոնք Արևելքից տեղափոխվել են Իսպանիա և հաստատվել Պիրենեյան լեռների շրջանում և Միջերկրականի ափերին...»⁸⁸: Իսկ Արալար լեռան բացատրությունը նույն հանրագիտարանում այսպիսին է. «Արալար (Aralar), բարձր և ձգվող լեռնաշղթա Նավարայում, Իպուսկոայի և Ալավայի սահմանագլխին: Նրանից սկիզբ են առնում բազմաթիվ գետակներ, որոնք թափվում են Արաքիի դաշտավայրը հատող Բորունդա անվամբ գետը: Լեռան անունը, որն այնքան նման է Հայաստանի Արարատ լեռան անվանը, **հիմք է տվել փոքրիշատե ընդունելի ձևով բացատրե-**

⁸⁷ Իսպանա-ամերիկյան հանրագիտարան (Enciclopedia), հատոր XI, էջ 647:

⁸⁸ Նույն տեղում, հատոր VIII, էջ 487:

լու Իսպանիայի առաջին բնակիչների աշխարհագրական ծագումը...» (Վ. Սարգսյանը «Արալար» լեռան անունը կապում է Արա լեռ անվան հետ): Նշված բոլոր տեղանունները, որոնց հանրագիտարանի հեղինակները վերագրում են հայկական ծագում, հիմնականում գտնվում են Բասկերի երկրում և մինչև օրս շարունակում են մնալ Իսպանիայի քարտեզի վրա:

Բասկ-հայկական լեզվական ընդհանրությունների և պատմամշակութային կապերի ուսումնասիրությամբ զբաղվել է արևելագետ Ն. Մառը (Ն. Մառ, «Բասկերեն լեզվի հարեթական ծագումը», Ն. Մառ, «Հայկական մշակույթը, նրա արմատները և նախապատմական կապերը ըստ լեզվագիտության», Երևան, 1989): Ն. Մառը բասկերենը համեմատելով հայերենի հետ, նույնպես նկատել է շատ զուգահեռություններ բասկերեն և հայերեն լեզուներում: Հնչյունաբանական, քերականական և բառաքննական զուգահեռներից հետո իր «Բասկերեն լեզվի հարեթական ծագումը» (L'Origine japhethique de la langue basque) աշխատության մեջ Մառը գրում է. «Առանձնապես շատ ապշեցուցիչ նմանություն, անգամ նույնություն ունի (բասկերենը) հայերենի հետ»:

Նշենք նաև մի փաստի մասին: Հայտնի է, որ Հայոց Հայկ նահապետը ունեցել է **Պասքամ** անունով թոռ⁸⁹, իսկ Պասքամ անունը, ինչպես նկատում ենք, նման է **բասկ** անվանը: Այդ նմանությանը ուշադրություն են դարձրել ուսումնասիրողները (Ն. Մառ): 1930-ական թվականներից վրաց գիտնականները հենվելով Իբերիա-Իվերիա անունների ու մի շարք բառերի նմանությունների վրա, առանց խորանալու այդ բառերի ծագումնաբանության մեջ, որոնք ըստ լեզվաբանների հայերենից վրացերենին անցած բառեր են, մեծ աշխատանք են կատարում, փորձելով ցույց տալ, որ բասկերենը կովկասյան (քարթվելական) լեզու է: Սակայն այդ վարկածը չի բավարարում գիտնականներին և ուսումնասիրությունները շարունակվում են:

Բասկերի հայկական ծագման վերաբերյալ լուրջ ուսումնասիրություններ է կատարել Վահան Սարգսյանը, հրատարակելով մի շարք հոդվածներ և ուսումնասիրություններ⁹⁰: Ուսումնասիրությունների ար-

⁸⁹ Մովսես Խորենացի, 1981, էջ 129, Ը:

⁹⁰ Վահան Սարգսյան, Ուրարտական քաղաքակրթությունը և բասկերի նախահայրենիքի հարցը, Երևան, 1988: Բասկերն Արարատ լեռան ստորոտում (հոդ-

ոյունքում պարզվում է, որ բասկերենում և հայերենում մոտ 1000 բառեր համընկնում են: Հատկապես մեծ քանակ են կազմում տեղանունները, որոնք հաճախ պարզապես կրկնություններ են. **Աշտարակ-Աստարակ** (քնակավայր Ֆրանսիայի հարավում), **Գորիս-Գորիս** (քնակավայր Բասկոնիայում), **Դեբետ-Դեբա** (գետ Բասկոնիայում), **Շուբրիա** (սեպագիր արձանագրություններում վկայված Սասունի հին անունը) -**Շուբերոա** (բասկերի նահանգ Ֆրանսիայում), **Արաքս-Արաքսես** (գետի անվանում Բասկոնիայում), **Արան-Արան** (տարածված տեղանուն Բասկոնիայում), **Քարքար-Քարքար** (տեղանուն Բասկոնիայում), **Կարբի-Կարբե** (տեղանուն Բասկոնիայում) և այլն:

Հույն պատմիչ Հեկատեոս Միլեթացին (մ.թ.ա. 546–480) առաջինն է գրավոր աղբյուրներում հիշատակում Պիրենեյան թերակղզու մասին: Նա գրում է այնտեղ ապրող ցեղերից երեքի անունները. **մաստիեններ, իբերներ և տարտեսներ**: Հնում տարտեսները կազմել էին հզոր մի թագավորություն, որի մասին տեղեկություններ են պահպանվել հին հունական առասպելներում, Բիբլիայում (Թարշիշ կամ Թարսիս ձևով): **Իբերների** ծագումը կապվում է կովկասյան ցեղերի հետ: Ենթադրվում է, որ գաղթող հայկական ցեղի հետ կարող էին լինել *իբերներ*: Հայտնի է, որ **իբեր** (իվեր) անունը ռատումնասիրողները (Ն. Մառ) կապում են հայերեն **ի վեր** բառի հետ, որը հայերի կողմից տրվել է Հայաստանից վերև գտնվող տարածքին ու այնտեղ ապրող ցեղերին: Իսկ թե ովքեր էին Պիրենեյան թերակղզում ապրող **մաստիենները**, քիչ բան է հայտնի: Այդ մասին Վ. Սարգսյանը իրավացիորեն գրում է, որ ցեղի ուշագրավ անունը ստիպում է այդ անվան արմատները որոնել Հայկական լեռնաշխարհի հարավում: Հայտնի է, որ մոտավորապես մ.թ.ա. XVIII–XV դդ. Հայկական լեռնաշխարհի հարավային մասում գոյություն է ունեցել հայկական (արիական) **Միտանի** պետությունը, որի պատմությունը հայ ժողովրդի պատմության անբաժան մասն է: Հայաստանի տարածքում **միտանի** (նաև **մաստիեն**) և Պիրենեյան թերակղզու հնագույն բնակիչների **մաստիեն** անունների նմանությունը թույլ է տալիս ասել, որ **մաստիենների** արմատները իրոք պետք է որոնել Հայաստանում:

ված) «Գարուն» ամսագիր, 1991, 3: Բասկերի ծագման առեղծվածը և Հայկական լեռնաշխարհը, Ե., 2000: Բասկերեն-Հայերեն բառարան, Ե., 2001: 1993թ. իրատարակվում է բասկ-հայկական «Արաքս» («Araxes») գիտական հանդեսը, որտեղ թեմայի վերաբերյալ տպագրվում են հոդվածներ:

Հնագույն ժամանակներում Պիրենեյան թերակղզին հայտնի է եղել ոչ միայն **Տարտես ու Իբերիա** անուններով, այլև՝ **Իսպանիա** անունով: **Իսպանիա** անվան ծագման մասին գոյություն ունեն տարբեր վարկածներ: Ենթադրվում է, որ Իսպանիա անվան նախնական ձևը եղել է **Հեսպերիա**, որը ոմանց կարծիքով ծագում է հունարեն «հեսպերոս» (Hesperos)՝ «գիշեր», «խավար», «մութ» բառից, այսինքն՝ նշանակում է «արևմուտք», «արևմտյան երկիր» (հույներից դեպի արևմուտք ընկած երկիր): Ոմանք **Իսպանիա** անվան ծագումը կապում են փյունիկերեն (կարթագենյան) «սպան» (span) ճագար բառի հետ, որը փորձում են հիմնավորել այն փաստով, որ հնագույն ժամանակներում Պիրենեյան թերակղզում տարածված են եղել ճագարները: España անվանումը կապվում է նաև բասկերեն էզպաննա «ծայրամաս» կամ «սահման» իմաստն ունեցող բառի հետ: Իսկ Անտոնիո դը Նեբրիխայի կողմից առաջ քաշված վարկածի համաձայն «Հիսպանիա» բառը ծագել է իբերերեն «Հիսպալիս» բառից, որը նշանակում է «քաղաք արևմտյան երկրում»⁹¹: Հետաքրքիր վարկած է առաջ քաշում մեզ արդեն ծանոթ Ամադոր դե Լոս Ռիոսը: Նա **Իսպանիա** անվանը վերագրում է հայկական ծագում՝ այն բխեցնելով հին հայկական **Հիսպա** բնակավայրի անունից: Ինչպես նկատում ենք, ուղղությունը դարձյալ Հայկական լեռնաշխարհն է: Այս դեպքում այն կարելի է կապել Հայաստանի հնագույն **Սպեր** գավառի անվան հետ⁹²:

Վ. Սարգսյանը անդրադառնում է նաև բասկերի ինքնանվանման՝ **էուսկալդունակ** (էուսկադի) անվան ծագմանը: Վերևում նշվել է, որ բասկյան ավանդագրույցը բասկերի նախահայրենիք է համարում Հայաստանը, որտեղից եկած նախնիներին հայտնի է եղել մետաղի (պղինձ, երկաթ) մշակման գաղտնիքը: Այդ առումով հետաքրքիր է բասկերի **էուսկալդուն** ինքնանվանումը, որը ծագում է **էուսկ** (նաև ուսկ, էսկու, ասկ...) արմատից: Վ. Սարգսյանը **էուսկ** արմատը կապում է հայերեն **ոսկի** բառի հետ, որը հայոց տարբեր բարբառներում հնչում է տարբեր ձևերով. իսկի, վեսկի, վրեսկի ասկի, ոուսկի...: Հետազոտողն այնուհետև եզրակացնում է, որ հայոց **ոսկի** բառից է առաջացել

⁹¹ Ինտերնետային կայքէջեր. <http://about-spain.ru/history/>; <http://dic.academic.ru/>.

⁹² Վահան Սարգսյան, Բասկերն Արարատ լեռան ստորոտում, ինտերնետային տարբերակ:

Ոսկան («ոսկի ունեցող») անունը, որը նման է բասկերի **Բասկոն** անվանը, իսկ լատիներենում այն գրվում է **Վասկոն**՝ ձևով: Վ. Սարգսյանը կարծում է, որ մեր հնագույն նախնիների համար **ոսկեգործը** (ոսկերիչ) և **հայր** նույնիմաստ բառեր են եղել, որը ամրապնդվում է բասկյան ավանդազրույցներով:

Ինչպես նկատում ենք, ենթադրվում է, որ **էոսկալդուն** ինքնանվանումը առաջացել է **էոսկ (ոսկի)** բառից, իսկ **բասկ** անունը՝ **վասկոն (գասկոն)** ցեղի անունից⁹³, որոնց հիմքում հայոց **ոսկի, Ոսկան** անուններն են: Բասկերին Հայկական լեռնաշխարհի հետ են կապում նաև վերը հիշատակված Հայկի թոռ **Պասքամի և բասկ** անունների նմանությունները:

Բասկերը Արևմտյան Եվրոպայի հնագույն ժողովուրդն են: Հնագիտական պեղումների արդյունքները վկայում են, որ **արմենոիդ** մարդաբանական տիպը Պիրենեյան թերակղզում հայտնվել է մ.թ.ա. III հազարամյակի կեսին: Այդ ժամանակով են թվագրվում թերակղզու առաջին մեգալիթյան հուշարձանները: Թերակղզու հնագույն այդ բնակիչները տիրապետում էին մետաղի մշակման արվեստին, որը նրանց գաղտնիքն էր, կարողանում էին մշակել հացաբոյսեր և այլն: Իսկ սա նշանակում է, որ Հայկական լեռնաշխարհից հայերենի բարբառների հետ Եվրոպայում տարածվել է նաև մետաղի մշակման արվեստը և հացաբոյսերի մշակումը: Պատահական չէ, որ գյուղատնտեսական շատ անվանումներ հայերենում և բասկերենում լիովին համընկնում են. գարի-գարի, հասնել-ասի, ինչաուզ-ընկույզ, հերկել-էրկա,

⁹³ Ֆրանսիայի հարավ-արևմուտքում գտնվող Գասկոն պատմական շրջանը Ալ. Դյումայի «Երեք հրացանակիրներ» վեպի գլխավոր հերոսներ Դ'Արտանյանի, Աթոսի, Պորտոսի և Արամիսի հայրենիքն է: Հատկապես Դ' Արտանյանի կերպարն է ոգևորել Ալ. Դյումային իր վեպում գլխավոր հերոսի կերպարը ստեղծելու համար, իսկ Դ' Արտանյանի նախատիպը՝ Շառլ դե Բատց դե Կաստելմորը ապրել է XVII դարում: Այնուհետև նա վերցրել է պալատում հայտնի իր մոր Դ' Արտանյան ազգանունը, որն էլ Ա. Դյուման օգտագործել է վեպում. Wikipedia. Նշենք նաև, որ Հայկական լեռնաշխարհում կան բնակավայրեր, որոնք ունեն **Արամիս** (Չանգեզուր), **Արամո** (Կիլիկիա), **Արամոն** (այժմ Արամոս), **Արտոս** (**Էրզրումի նահանգ, Արևմտյան Հայաստան**) անունները: Կա նաև լեռ **Արտոս** (Վան, Արևմտյան Հայաստան) անունով և այլն:

Գասկոնցի այս երիտասարդների անունների և ազգանունների նմանությունը հայկական անուն-ազգանունների հետ, պատահական չէ: Դրանք վկայում են Հայոց աշխարհի հետ այդ հերոսների կապի մասին:

այծ-աինց, հոտ (անասունների) -ատո, մածուն-մատոին...: Իսկ **Շուրբերոա (Շուրբիա) և մաստիեն (մատիեն-միտանի)** անունների ներկայությունը Պիրենեյան թերակղզում, թույլ է տալիս ասել, որ հայկական ցեղերը այդ տարածքներում հայտնվել են մ.թ.ա. III-II հազարամյակում:

Ինչպես նկատում ենք, Պիրենեյան թերակղզու հնագույն բնակիչները՝ բասկերը, (ինչպես նաև կելտերը) իրենց աշխարհագրական անուններով, հատկապես **Ար-ով** և **Այ** (Հայ)-ով սկսվող անուններով, մարդաբանական արմենոիդ տեսակով, ավանդույթներով, սովորույթներով, մշակույթով սերտորեն կապված են Հայաստանի ու հայերի հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԷՏՐՈՒՍԿՆԵՐԸ

Եվրոպայի հնագույն ժողովուրդներից են էտրուսկները (ինքնանվանումը՝ Rasenna, Rasna), որոնք Ապենինյան թերակղզու հնագույն վերաբնակիչներն են և մ.թ.ա. I հազարամյակում արդեն բնակվում էին թերակղզու հյուսիս-արևմտյան մասում, Աոնո և Տիբեր գետերի միջև: Այդ տարածքը հնում կոչվել է էտրուրիա (այժմ՝ Տոսկանա): Հնագույն այս ժողովուրդը մեծ ազդեցություն է ունեցել հռոմեական պետության ու մշակույթի ստեղծման գործում: Մ.թ.ա. VII դարում էտրուրիայի բնակիչները գիր ունեին: Գիրը հայտնաբերվել է մահարձանների, զարդերի և կենցաղային իրերի վրա: էտրուսկյան մշակույթը սերտորեն կապված է էգեյան ավազանի և Փոքր Ասիայի մ.թ.ա. II-I հազարամյակով թվագրվող մշակույթի հետ: էտրուսկների ծագման մասին գոյություն ունեցող տեսակետները շատ են: Դրանցից մեկի համաձայն էտրուսկները Իտալիայի բնիկներն են, այլ տեսակետի համաձայն նրանք փոքրասիական ծագում ունեն և այլն: Երկրորդ տեսակետի կողմնակիցները հենվում են Հերոդոտոսի (մ.թ.ա. V դար) վկայության վրա, որի համաձայն էտրուսկները ծագումով Լիդիայից են (Փոքր Ասիա): Հերոդոտոսը գրում է, որ սկսված սաստիկ սովի պատճառով տիրենները կամ տիրսենները ստիպված թողել են հայրենիքը և տեղաշարժվել արևմուտք: Հետաքրքիր է, որ Հերոդոտոսը դա կապում է Տրոյական պատերազմի հետ, իսկ դեպքերը (տրոյական պատերազմը և գաղթը) կատարվել են նույն ժամանակ (մ.թ.ա. XIII-XII դդ.): Դա նաև «Ծովի ժողովուրդների» գաղթի ժամանակն է⁹⁴:

Նոր հայրենիքում՝ Ապենինյան թերակղզում էտրուսկների անվան հետ են կապվում մի շարք աշխարհագրական անուններ: Այսպես. ծովային այն տարածքը, որը վերահսկում էին էտրուսկները, հույների կողմից անվանվել է **Տիրենյան ծով** (էտրուսկների հունարեն անվանումը): Հռոմեացիները էտրուսկներին անվանում էին **տուսկեր**, որտեղից էլ՝ Իտալիայի շրջաններից մեկի Տոսկանա անվանումը: էտրուսկների մասին հետաքրքիր վկայություն ունի Ստրաբոնը (մ.թ.ա. I - մ.թ. I դդ.): Նրա վկայությանը էտրուսկների (տիրեն, տյուրսեն, տուսկ) նախահայրը **Հերակլեսի որդի Տիրսենն է**⁹⁵:

⁹⁴ Գիտական աշխարհում վիճելի է համարվում «Ծովի ժողովուրդների» գաղթի ժամանակը: Տեսակետներից մեկի համաձայն գաղթը եղել է մինչև Տրոյական պատերազմը, այլ տեսակետով՝ Տրոյական պատերազմից հետո, քանի որ պատերազմի պատճառով սկսվել է անբերրիություն և սով:

⁹⁵ Ստրաբոն, Աշխարհագրություն, V, 2, (2):



Աստվածուհու արձանիկ



էտրուսկների արձանիկներ և մահարձաններ (մ.թ.ա. I հազ. 1-ին կես)

Նկատում ենք, որ էտրուսկների հետ կապվող շատ անուններ հիշեցնում են հայոց Գրի ու Դարության հովանավոր **Տիր** աստծո անունը: Հայոց Տիր աստվածը համարվել է մարդկանց ճակատագրերի գուշակն ու երագների մեկնիչը, նրանց կատարած գործերի գրառողը, նաև մարդկանց հոգիները հանդերձյալ կյանք ուղեկցողը⁹⁶: Այս առումով հետաքրքիր է, որ էտրուսկները մեծ նշանակություն են տվել հանդերձյալ կյանքին, դամբարանները զարդանախշերով գեղեցիկ որմնանկարներով, իսկ հանգուցյալի հետ դրվել են գեղեցիկ սափորներ, զարդեր, զենքեր և այլն:

էտրուսկների գիրը ուսումնասիրողները կարդում են (հունարենով), սակայն լեզուն անհայտ է (այն փորձում են կարդալ շատ լեզուներով): Վերջերս ռուս ուսումնասիրողները փորձում են այն կարդալ իբրև հին սլավոներեն: Նրանց ոգևորում է էտրուսկ անվան -րուսկ բաղադրիչը և Rasenna ինքնանվանումը, ինչպես վրաց ուսումնասիրողներին ոգևորում էր Իբերիա-Իվերիա անունների նմանությունը:



էտրուսկյան որմնանկար



Հայկական միջնադարյան տապանաքար

⁹⁶ Ազաթանգեղոս, Հայոց Պատմություն, Ե., 1983, էջ 437, (778):



Ուսումնասիրողները էտրուսկերենը համեմատել են նաև հայերենի հետ: Նորվեգացի բանասեր ու լեզվաբան Սոֆուս Բուգգեն ուսումնասիրելով հայերեն ու էտրուսկերեն լեզուները (համեմատական լեզվաբանություն), գտնում է, որ էտրուսկերենը հայերեն բարբառներից մեկն է⁹⁷:

Բուլղարացի լեզվաբան Վ. Գեորգիևը նույնպես կապ է տեսնում էտրուսկերենի և փոքրասիական հնագույն լեզուների, ինչպես նաև հայերենի միջև: Նա հատկապես ուշադրություն է դարձնում այն փաստին, որ էտրուսկերեն լեզվի հնչյունաբանական կառուցվածքը շատ նման է հայոց լեզվի հնչյունաբանական կառուցվածքին⁹⁸:

Էտրուսկներին, նաև Եվրոպայի հնագույն այլ բնակիչներին՝ կելտերին, թրակիացիներին, գալլերին, ֆրանկներին, բասկերին և այլ ժողովուրդներին հայկական ծագում է վերագրում անգլիացի գիտնական Ռոբերտ Էլլիսը: Այդ մասին նա գրում է, որ մի ժամանակ նրանք (հայերը) ապրում էին ընդարձակ տարածքում, որտեղից տարածվել են դեպի արևմուտք՝ Հայաստանից դեպի Իտալիա փոռոգիացի, թրակիացի, պելասգ, էտրուսկ անուններով: Վերաբնակեցումը կատարվել է նաև այլ ուղղություններով (Robert Ellis, The Armenian Origin Of The Etruscans, London, 1861): Ինչպես նկատում ենք, ուսումնասիրողները կապ են տեսնում էտրուսկների և հայերի ու Հայաստանի միջև: Նկատում ենք նաև, որ թեման լուրջ ուսումնասիրության կարիք ունի, հատկապես լեզվաբանական ուսումնասիրությունների:

⁹⁷ www.aaas.org/ Американская ассоциация содействия развитию науки, Science, с. 99.

⁹⁸ Георгиев В., Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, с. 194.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՍԼԱՎՈՆՆԵՐԸ

Սլավոնական ցեղերի նախահայրենիքի, այնտեղից նրանց դուրս գալու պատճառների և տեղաշարժի ուղիների մասին, ինչպես նաև այժմյան տարածքներում բնակվելու մասին տեղեկություններ կան մինչ քրիստոնեական «Վլեսի գիրք» («Влесова книга») անունով հայտնի գրքում: Սլավոնական առասպելաբանությունը նույնպես տեղեկություններ է տալիս նախահայրենիքի մասին:

«Վլեսի գիրք» հիմնական տարբերակում գրված է, որ սլավոնների նախնիները ապրել են բարձր լեռներում, որտեղ հող էին մշակում, անասուններ պահում ու խոտ հնձում: Բայց երկրաշարժ է լինում, որն ահ ու սարսափի մեջ է գցում մարդկանց ու կենդանիներին: Ավերվում են նրանց տներն ու բնակավայրերը: Այնուհետև սկսվում է սով ու ժանտախտ, որից փրկվելու համար նրանք լքում են հայրենիքը (Ինսկ երկրամասից) Ֆարսի հողերի մոտով⁹⁹: Սլավոնական ցեղերին առաջնորդում էր **Օրեյը** կամ **Օրիյը (=Արեյ)**, որը նրանց (նաև բորուանների) նախահայրն էր¹⁰⁰: Այնուհետև նրանք հայտնվել են Միջագետքում, որոշ ժամանակ հանգրվանել Սիրիայում, իսկ այնուհետև հայտնվել են Կարպատներում: Տեղեկություններ կան, որ սլավոնները եղել են նաև Եգիպտոսում, որտեղ նրանց երիտասարդները ծառայել են այդ երկրի թագավորի բանակում: Այդ է վկայում արևի (սկավառակ) սլավոնական Hors (Хорс) աստծո պաշտամունքը: Այս աստծո անվան մեջ դժվար չէ ճանաչել եգիպտական արևի ու երկնքի **Հոր** աստծուն, որն իր հերթին հաճախ համեմատվում է արևի եգիպտական գլխավոր **Ռա (Ար)** աստծո հետ (Հորը Ռա-ի սերնդից էր):

Հետագա տեղեկությունները վերաբերում են Եվրոպայի տարածքով տեղաշարժվող սլավոններին: Կարպատներում սլավոնական երեք գլխավոր ցեղերը բաժանվել են ու գնացել իրենց ապագա հայրենիքները: Նրանց առաջնորդել են **Օրեյի** երեք որդիները՝ Կիյը, Շչեկը և

⁹⁹ Влесова книга, Омск, 2005, 38а: «Վլեսի գիրք» հավաստիության մասին պատմագրության մեջ կան հակասական կարծիքներ: Սակայն ուսումնասիրությունները թույլ են տալիս ասելու, որ տեղեկությունները (պատմական միջավայրը, իրադարձությունները, տեղաշարժի ուղին, աստվածների և առաջնորդների անունները) ավելի շատ ճշմարտանման են:

¹⁰⁰ Влесова книга, 2005, 5а, 6а.

Խորիվը: Կիյը իր ցեղին (արևելյան սլավոններ) առաջնորդել է դեպի արևելք, հիմնել է Կիև քաղաքը և այլն: Շչեկը իր ցեղին առաջնորդել է դեպի արևմուտք, իսկ Խորիվը՝ դեպի հարավ¹⁰¹: Ավանդագրույցի մեկ այլ տարբերակում երեք եղբայրները՝ Կիյը, Շեկը և Խորիվը հիմնում են քաղաք ու ավագ եղբոր անունով կոչում Կիև¹⁰²: Հայ պատմագրության մեջ (պատմիչ Ջենոբ Գլակ, 8-րդ դար) գոյություն ունի այս ավանդագրույցի տարբերակը, ըստ որի երեք եղբայրներ՝ Կուարը, Մեղտեսը և Խորը Պալունի (Պոլյանե) երկրում հիմնել են քաղաքներ (բերդեր) և կոչել իրենց անուններով. Կուար, Մեղտի, Խորեանք (Խորնի)¹⁰³: Այնուհետև, ըստ նույն աղբյուրի (Ջենոբ Գլակ), որոշ ժամանակ հետո եղբայրները հիմնել են մեկ այլ քաղաք Կերկե բլրի վրա, որը հարմար էր որսի համար և հարուստ էր բուսականությամբ: Այնտեղ դրվում են նաև երկու հեթանոսական կուռքեր: Հետաքրքիր է, որ 1908 թ. Կիևի բլուրներից մեկում (Հինկիկյան բլուր) հնագետները հայտնաբերել են բերդի մնացորդներ և հնագիտական իրեր, այդ թվում երկու զոհասեղան, որոնք թվագրվել են V–VI դդ.: Մինչկիկյան այդ քաղաքը բյուզանդական կայսր Կոնստանտին VII Ծիրանածինը (Багрянородный, 913–959) անվանում է Սամբատ¹⁰⁴ (Սամբատաս, Սմբատ):

Այս ավանդագրույցներում ուշադրություն է գրավում ոչ միայն քաղաքներ հիմնելու վկայությունը, այլև երեք եղբայրների առկայությունը և նրանց անունների նմանությունը: Այն, որ հայ պատմագրության մեջ տեղեկություններ կան Կիյի, Շեկի և Խորիվի մասին վկայում է, որ վաղուց գոյություն են ունեցել կապեր սլավոնական ցեղերի և հայերի միջև: Հայտնի է, որ բյուզանդական կայսրերը իրենց սահմանները պահպանում էին հայկական զորաջոկատների միջոցով, որի ժամանակ հայերը շփվում էին տեղացիների հետ, հաճախ նաև անցնում նրանց կողմը և հիմնավորվում այնտեղ: Հայ պատմագրության (Սեբեոս, VII դար, Ուխտանես, X դար) մեջ վկայություն կա, որ բյուզանդական Մորիկ կայսրը (582–602) (նաև այլ կայսրեր) հայ զորավար

Սմբատ Բագրատունու գլխավորությամբ հայկական զորաջոկատ է ուղարկել Թրակիա սլավոնների դեմ պայքարելու համար¹⁰⁵: Սակայն ինչպես վերևում նշվել է, համաձայն չլինելով բյուզանդացիների վարած զավթողական քաղաքականությանը, հայերը հաճախ ակտիվ շփումների մեջ էին մտնում նրանց հետ, ում դեմ ուղարկվել էին: Կարելի է մտածել, որ Հինկիկյան բլուրի Սամբատ բնակավայրը հիմնադրվել է Սմբատ Բագրատունու կողմից ու կոչվել նրա անունով:

«Վլեսի գրքում» հիշատակվող «Բարձր լեռներ», «Ֆարսի հողեր», Միջագետք, «Սիրիական հողեր» ուղին թույլ է տալիս ասել, որ սլավոնների նախնական բնակության վայրը Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելյան մասն էր, Վանա լճից հարավ-արևելք ընկած տարածքը, որը սահմանակից էր Իրանին¹⁰⁶ (Ֆարսին): Ինչպես նկատում ենք, համաձայն սլավոնական հնագույն գրավոր աղբյուրի՝ «Վլեսի գրքի» սլավոնների նախահայրենիքը կարելի է տեղադրել Հայկական լեռնաշխարհի և Իրանական բարձրավանդակի միջև ընկած տարածքում: Հաղորդումներից (дощечек տախտակ) մեկի համաձայն սլավոնները Օրեյ նախահոր առաջնորդությամբ իրենց նախնական բնակության վայրերից դուրս են եկել զոթական Հերմանարիխ թագավորից (IV դար) 1300 տարի առաջ, այն է մ.թ.ա X–IX դդ.¹⁰⁷: Մեկ այլ դեպքում՝ Օրեյ նախահորից մինչև Կիևի իշխան Դիր (IX դար), հաշվվում է 1500 տարի¹⁰⁸: Այս դեպքում տեղաշարժը նախահայրենիքից թվագրվում է մ.թ.ա VI դարով: Երկու դեպքում էլ սլավոնների տեղաշարժերը թվագրվում են մ.թ.ա. I հազարամյակի սկիզբ – մ.թ.ա. I հազարամյակի I-ին կես ժամանակաշրջանով:

Սլավոնական առասպելաբանության համաձայն, սլավոնների հայր Օրիյը¹⁰⁹ (Orey, Ariy, Арий) «մեծ ցրտահարությունից» հետո իր ցե-

¹⁰⁵ Սեբեոս, Պատմություն, Ե., 2005, էջ 101 (գլ. Ի): Ուխտանես, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 56:

¹⁰⁶ Թեմային անդրադարձել է Մ. Օհանյանը, որը սլավոնների նախնիների ելակետը տեղադրում է Ջագրոսի լեռնաշղթայի և Հայկական լեռնաշխարհի սահմանակցության գոտում: Մ. Օհանյան, Սլավոնների Ծագումնաբանական Հիշողությունները և Դրանց Պատմական Արմատները, Ե., 2007, էջ 13:

¹⁰⁷ Վլեսոսի գրք, 2005, 9ա.

¹⁰⁸ Վլեսոսի գրք, 2005, 5ա, 66.

¹⁰⁹ Սլավոնների նախահայր Օրեյը (Արեյ) հանդես է գալիս նաև որպես սլավոնական պանթեոնի գլխավոր աստված Ռոդ (Rod)անունով, որը ստեղծել է տիե-

¹⁰¹ Влесова книга, 2005, 7з, 316.

¹⁰² Соловьев С., Чтения и рассказы по истории России, М., 1989, с. 33.

¹⁰³ Ջենոբ Գլակ Ասորի և Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, Ե., 1941, էջ 109:

¹⁰⁴ Б. Рыбаков, Основание Киева: По материалам журнала «Наука и Жизнь», <http://voj.kiev.ua/history/osnovanie-kieva/>.

դին «ռուսական լեռներից» առաջնորդում է արևմուտք: Իսկ «ռուսական լեռները» դրախտային լեռներ էին, որոնց միջև գտնվում էր սրբազան սպիտակ վառվող քարե (горючъ-камень) Ալատիրը՝ աշխարհի կենտրոնը: Լեգենդը պատմում է, որ այդ քարն ընկել է երկնքից, որի վրա գրված էին Սվարոգ (Նաև Իրի կամ Արի) աստծո պատվիրանները: Այն վայրում, որտեղ ընկել է քարը, բարձրացել է Ալատիր (Алатырь) սարը: Դա Աստծո խորանն էր, որը միացնում էր երկնային ու երկրային աշխարհները: Համարվում է, որ այդ լեռը բոլոր լեռների հայրն է: Նրա շրջակայքում էր գտնվում սրբազան կաթնաբեր Ra (=Ar) գետի ակունքը, որը ոռոգում էր լեռան գագաթին գտնվող դրախտային այգին: Այստեղ էր գտնվում նաև երկրային ու երկնային աշխարհները միացնող սրբազան կնձենին (կամ ծփենի), որի ճյուղերը, որոնց վրա դրախտային թռչունները բույն էին հյուսել, հասնում էին երկինք, իսկ արմատների մոտ տեղավորվել էր սև օձը: Շրջակայքում ամենուրեք բերրի մարգագետիններ էին և պտղատու այգիներ: Այդտեղ ապրում էին աստվածները: Ըստ սլավոնական լեգենդի, այդտեղ ապրում էին նաև իրենց նախնիները¹¹⁰: Այս առասպելում նկարագրվող այգին նման է շումերական դիոցազնավեպում՝ «Գիլգամեշում» նկարագրվող երկրային դրախտին՝ «Աստվածների այգուն», որը գտնվում է Մասու կամ Մաշու (Մասիս) լեռներից այն կողմ¹¹¹ (Արարատյան դաշտը): Այն նման է նաև Բիբլիայում նկարագրվող դրախտին: Իսկ Ալատիր լեռան անունը նման է բիբլիական Արարատ լեռան (Արարատի լեռներ) անվանը (լր հնչյունափոխություն): Վերոհիշյալից պարզ է դառնում, որ լեռները, որտեղից նախահայր Օրեյի (Արեյ) գլխավորությամբ սլավոնները դուրս են եկել ու շարժվել դեպի արևմուտք, հնդեվրոպացիների նախահայրենիք Արարատի լեռներն են՝ Հայաստանը:

Ռուսական ասքերում (բիլինաներ) ևս տեղեկություններ կան նախահայրենիքի մասին: Այդ տեղեկություններում հետաքրքիր է այն փաստը, որ Հարթավայրային Ռուսիայում ձևավորված ասքերում (բի-

զերը: Սլավոնական առասպելաբանության մեջ Rod-ի արական դրսևորումներն են (ipostas) Իրիուն և Վիրիու Սվորոգը (Iriy, Viriy Svarog): Իսկ Ռոդի որդի Յարիլուն (Յարովիտ, Yarilo, Yarovit) գարնան, հողագործության և պտղաբերության աստվածն է:

¹¹⁰ А.Баженова и В.Вадругин, Мифы древних славян. Саратов, «Надежда», 1993.

¹¹¹ Հին Արևելքի պոեզիա, Ե., 1982, էջ 146:

լինաներ) հերոսը՝ Սվյատոգորը սերտորեն կապված է լեռների՝ Արարատի լեռների (երկրի) հետ: Նկատում ենք նաև, որ ռուսական ասքերի հերոսի Սվյատոգոր (Սուրբ լեռ) անունը նրան կապում է ինչպես լեռների, այնպես էլ հայոց «Սասնա ծռեր» դյուցազնավեպի գլխավոր հերոսներից մեկի՝ Սանասարի (Սուրբ սար) անվան հետ: Անդրադառնանք այդ տեղեկություններին:

Ռուսական ասքերի հնագույն հերոսին՝ Սվյատոգորին (նաև Սվետոգոր) նվիրված բիլինաների տարբերակներից մեկում վկայություն կա նախահայրենիքի մասին: Սվյատոգորը ծանր, մեծ հսկա է, ապրում է լեռներում ու չի կարող հեռանալ լեռներից, քանի որ հողը չի կարողանում պահել նրա ծանրությունը: Այդ մասին նշում է Սվյատոգորը՝ զրուցելով Իլյա Մուրոմեցու հետ.

– Я бы ездил тут на матушку сыру-землю,
Не носит меня мать сыра-земля,
Мне не придано тут ездить на Святую Русь,
Мне не позволено тут ездить по горам да по высоким.¹¹²

Ես կգնայի այնտեղ, մայր-հողն իմ,
Չի պահում ինձ մայր-հողը,
Ինձ վիճակված չէ գնալ սուրբ Ռուսիա,
Ինձ թույլատրված չէ գնալ այնտեղ, բարձր լեռներից:

Սա նաև ցույց է տալիս այն ժամանակները, երբ ռուսները գտնվում էին իրենց լեռնային նախահայրենիքում՝ Արարատի երկրում: Ասքերում հետաքրքիր ձևով է ներկայացված Սվյատոգորի և Իլյա Մուրոմեցի հանդիպումը: Իրենց հանդիպման ժամանակ Սվյատոգորը Իլյա Մուրոմեցին առաջարկում է մենամարտել, բայց լսելով նրա պատասխանը, բարեկամանում է նրա հետ:

Я вижу силушку твою великую,
Не хочу я с тобой сражаться,
Я желаю с тобой побрататис.
Святогор-богатырь соглашается.

¹¹² Былины, М., 1987, с. 31 (բիլինաների հատվածները ըստ նշված հրատարակության և ըստ ինտերնետային կայքէջերի. <http://feb-web.ru/feb/byliny/texts/>, [/http://ru.wikisource.org/wiki](http://ru.wikisource.org/wiki)

Ես տեսնում եմ ուժը քո,
Չեմ ուզում մենամարտել քեզ հետ,
Ուզում եմ եղբայրանալ:
Սվյատոգոր-հսկան համաձայնվում է:

Այնուհետև հերոսները եղբայրանում են, որի ժամանակ Իլյա Մուրոմեցը ընդունում է, որ Սվյատոգորը մեծ եղբայրն է, իսկ ինքը՝ փոքր եղբայրը և գնում են Արարատի լեռներ (Արարատի երկիր):

Они с друг другом да побратались,
Обнялись они поцеловались, –
Святогор-богатырь да будет больший брат,
Илья Муромец да будет меньший брат.

И поехали они да не в чисто поле,
А поехали они да по святым горам,
По **святым горам да Араратским**,
Прискакали на гору Елеонскую.¹¹³

Նրանք միմյանց հետ եղբայրացան,
Գրկախառնվեցին ու համբուրեցին իրար,
– Սվյատոգոր-հսկան կլինի ավագ եղբայրը,
Իլյա Մուրոմեցը կլինի կրտսեր եղբայրը:

Եվ գնացին նրանք ոչ մինչև դաշտեր,
Այլ գնացին նրանք մինչև սուրբ լեռներ,
Մինչև **Արարատի սուրբ լեռներ**,
Արշավեցին մինչև Էլեոնյան լեռ:

Սվյատոգորի վախճանը նման է հնդեվրոպական մյուս ժողովուրդների, հատկապես հայոց «Սասնա ծռեր» դյուցազնավեպի հերոսներից մեկի՝ Փոքր Մհերի վախճանին: Հասնելով Արարատի լեռներ, Սվյատոգորը և Իլյա Մուրոմեցը փորձում են պարզել, թե ում համար է պատրաստված «Արարատի բարձր լեռներում»¹¹⁴ գտնվող քարե կամ կաղնե դագաղը: Մեծ եղբոր՝ Սվյատոգորի խորհրդով, նախ փորձում է Իլյա Մուրոմեցը, պառկելով դագաղի մեջ, սակայն այն մեծ էր նրա համար:

¹¹³ Былины, М., 1987, с. 23: Էլեոնյան լեռները գտնվում են Պաղեստինում, ինչը հավանաբար մատնանշում է հայկական/արիական ցեղերի տեղաշարժը դեպի Պաղեստին և Եգիպտոս (մ.թ.ա. II հազարամյակի I կես):

¹¹⁴ Пропп В.Я., Путилов Б. Н., Былины, М., 1958, т. 1, с. 22–33.

Ты послушай-ко, мой меньший брат,
Ты ложись-ко во гроб да померяйся,
Тебе ладен ли да тот дубовый гроб».
Илья Муромец да тут послушался
Своего ли брата большого, –
Он ложился Илья да в тот дубовый гроб.
Этот гроб Илье да не поладился,
Он в длину длинен и в ширину широк,
И вставал Илья да с того гроба.

Լսիր, իմ կրտսեր եղբայր,
Պառկիր դագաղում, չափվելու համար,
Հարմար է քեզ կաղնե դագաղը,
Իլյա Մուրոմեցը լսեց,
Իր ավագ եղբորը, –
Պառկեց Իլյան այդ կաղնե դագաղում:
Դագաղն այդ Իլյային հարմար չէղավ,
Երկար էր երկարությամբ, լայն՝ լայնությամբ,
Եվ Իլյան դուրս եկավ այդ դագաղից:

Իսկ երբ այնտեղ պառկում է Սվյատոգորը, կափարիչն անմիջապես փակվում է նրա վրա, քանի որ պատրաստված էր նրա համար ու համապատասխանում էր նրա չափերին: Սվյատոգորը դատապարտված է մահանալու, քանի որ նրան տրված չէր լեռներից այն կողմ գնալ, պետք է կարծել **հայրենիքից հեռանալը** և նոր հայրենիք գնալը: Իսկ փակված Սվյատոգորը հիշեցնում է հայոց «Սասնա ծռեր» դյուցազնավեպի հերոս Փոքր Մհերին, որն իր ծնողների խորհրդով փակվում է Վանի մոտ գտնվող Ագռավաքարում, քանի որ հայոց դյուցազնավեպում ևս հողն այլևս չէր կարողանում տանել նրա ծանրությունը (ի տարբերություն ռուսական ասքի, հայոց դյուցազնավեպում Փոքր Մհերը դուրս է գալու փակված Ագռավաքարից, երբ գա ժամանակը): Այս նմանությունները թույլ են տալիս ասելու, որ ռուսական ասքերի հնագույն հերոսը՝ Սվյատոգորը ևս Սասնա հերոսների (Սանասար, Փոքր Մհեր) նման բնակվում էր Արարատի երկրի բարձր լեռներում:

Սվյատոգորը ոչ մի սխրանք չի գործում, սակայն իր ուժի մի մասը (ավելին Իլյա Մուրոմեցը ի վիճակի չէր ընդունելու) կարողանում է շնչի միջոցով փոխանցել Իլյա Մուրոմեցին, որն այնուհետև հայտնվում է նոր հայրենիքում՝ Կիևյան Ռուսիայում և կատարում սխրագործություններ:



Սվյատոգոր
(moreskazok.ru/personaji/1277-svyatogor.html)

Ինչպես նկատում ենք, ռուսական հնագույն դյուցազն Սվյատոգորին նվիրված ասքերից մեկում հերոսն իր անունով՝ **Սվյատոգոր (Սուրբ լեռ)**, ապրելու վայրով (բարձր լեռներ, Արարատի լեռներ), հայոց դյուցազն Փոքր Մհերին նմանվող հատկանիշներով (ուղբերը հողի մեջ խրվելը, քարաժայռի կամ դագաղի մեջ փակվելը) կապվում է Հայկական լեռնաշխարհի ու Հայաստանի հետ (Արարատի երկիր):

Համաձայն սլավոնների հնագույն գրավոր աղբյուրի՝ «Վլեսի գրքի» սլավոնների նախահայրենիքը տեղադրվում է Հայկական լեռնաշխարհի և Իրանական բարձրավանդակի միջև ընկած տարածքում: Ավելի ուշ շրջանի գրավոր աղբյուրներում (Մովսես Կորյունյան տարեգրություններ, XVII դար) սլավոնների նախահայրենիքը տեղադրվում է Սև ծովի հարավում, Սև ու Ազովի ծովերի միջակայքում (Մեծ Սկյութիա) և այլն: Այս դեպքում այդ տարածքները պետք է դիտարկել իբրև նախահայրենիքից հետո հաջորդ հանգրվաններ, որից հետո սլավոնները հաստատվել են իրենց նոր հայրենիքներում (Կիևյան Ռուսիա, Լեհաստան, Չեխիա):

Այսպիսով, սլավոնական ժողովուրդների հնագույն գրավոր աղբյուրները նույնպես վկայում են, որ սլավոնական ցեղերի նախահայրենիքը Արարատի երկիրն է՝ Հայաստանը: Նկատենք նաև, որ ռուսական պատմագրությունը սակավ է անդրադառնում Սվյատոգորի Արարատի երկրից լինելու վկայությանը:

ՇԵՐԱԿԼԵՍԻ (ՇԵՐԿՈՒԼԵՍ) ՄԱՍԻՆ

Անդրադառնանք հնագույն գրավոր աղբյուրներում հանդիպող մի հետաքրքիր փաստի, կապված տեղաշարժին մասնակցող ցեղերի հետ: Տեղաշարժի մասնակից որոշ ցեղեր (էտրուսկներ, կելտ-գերմանացիներ, սլավոններ) անտիկ գրավոր աղբյուրներում համարվում են Շերակլեսի սերունդ և ժամանակագրորեն առնչվում են Տրոյական պատերազմին մոտ ժամանակներին (մոտ. մ.թ.ա. XIII դարի կես): Տրոյական պատերազմից հետո փոքրասիական շատ ցեղեր (վենետներ կամ ենեդներ, տևկրներ կամ տրոյացիներ) հույներին պարտվելուց հետո, հեռացել են իրենց բնակության վայրերից՝ Փոքր Ասիայից դեպի Միջերկրականի ափեր, այնուհետև՝ Եվրոպա: Ենթադրվում է, որ վենետը կարող է ցեղերի (կելտեր, գերմաններ, սլավոններ) հավաքական անուն լինել:

Շերակլեսը (Շերկուլես, ըստ հռոմեացիների) հին հունական առասպելական հերոս է, Ջևսի և Թեթի թագուհի Ալկմենեի որդին: **Շերակլես** անունը մեկնաբանվում է իբրև «Շերայի հալածանքներից սխրանքներ գործող»: Ըստ որոշ հին դիցազես հեղինակների, Շերակլեսի նախնական անունն էր Ալկիդաս: Առասպելներում Շերակլեսը ներկայացվում է որպես մարդկության թշնամիներին, բնության չար ուժերին դիմակայող հերոսամարտիկ: Շերակլեսի մասին բազմաթիվ առասպելներից առավել հայտնի են նրա 12 սխրագործությունները, որոնց ժամանակ նա սպանում է Նեմեյան առյուծին, մաքրում Ավգյան ախոռը և այլն: Այլ առասպելների համաձայն, Շերակլեսը ազատում է Կովկաս լեռանը շղթայված Պրոմեթևսին, մասնակցում Արգոնավորդների արշավանքին, Տրոյայի կործանմանը և այլն: Ի վերջո, Ջևսը Շերակլեսին պարգևատրում է անմահություն և երկրից տեղափոխում Օլիմպոս լեռ: Ինչպես նկատում ենք, նրա սխրագործությունների մի մասը կապված է Փոքր Ասիայի ու Կովկասի հետ:

Նկատում ենք նաև, որ հույների մոտ Շերակլեսը առասպելական հերոս է, հերոսամարտիկ և ոչ աստված կամ նախահայր, ինչպես էտրուսկների, գերմանական ցեղերի կամ սլավոնների մոտ է: Իսկ սա նշանակում է, որ այս հերոսը հույների մոտ երկրորդական նշանակություն է ունեցել: Այս դեպքում կարելի է ենթադրել, որ Շերակլեսը հու-

նական ծագում չի ունեցել: Վերևում նշվեց, որ Հերակլես անունը բացատրվում է իբրև «Հերայի հալածանքներից սխրանքներ գործող» իմաստն ունեցող անուն, սակայն նկատում ենք, որ Հերակլես անունը կապվում է հայերեն **հուր hur** և **ակն-աչք akn** իմաստներն ունեցող բառերի հետ, այն է. **Հուր-ակն, Հուր -աչք** (հմմ. Հրաչ, Վահագնի «արեգակ աչքեր»): Այն կապվում է նաև հնդեվրոպական **atar, atur կրակ** իմաստն ունեցող բառերի հետ¹¹⁵: Այս ամենը նշանակում է, որ հերոսի հայրենիքը պետք է փնտրել Հայկական լեռնաշխարհում: Եվ այստեղից հնդեվրոպական (հայկական) ցեղերի տեղաշարժերի հետ Հերակլեսի պաշտամունքը կարող էր տարածվել դեպի Փոքր Ասիա, Միջերկրականի ավազան, այնուհետև՝ Եվրոպա: Նշենք նաև, որ IX–X դդ. պավլիկյանների շառավիղների և բյուզանդական արևելյան բանակաթեմերի արիստոկրատների շրջանում ձևավորված բյուզանդական «Վասիլ Դիգենիս Ակրիտաս» էպոսում հիշատակվող «Հերակլի երկիրը» ուսումնասիրողների կարծիքով հայոց Անգեղ տուն գավառն էր¹¹⁶, ինչը նորից վկայում է, որ Հերակլեսը կապված է Հայկական լեռնաշխարհի հետ և հայկական ծագում ունի:

¹¹⁵ Այս մասին տես Մ. Օհանյան, Սլավոնների Ծագումնաբանական Հիշողությունները... 2007, էջ 45–55:

¹¹⁶ Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, էջ 799, (ծան. 7):

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՇԽԱՐՀԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ

X–XII դդ., XVդ., անգամ XVIII դարի եվրոպական (անգլիական, գերմանական) գրավոր աղբյուրները գրում են իրենց ժողովրդի իրական պատմությունը, բազմաթիվ անգամներ վկայելով, որ իրենց նախնիները հայկական ծագում ունեն և եկել են հնագույն Հայաստան երկրից: Հայաստան ու Արարատ անունները հիշատակվում են սիրով ու հպարտությամբ: Հայաստանի հնագույն երկիր լինելու մասին վկայում են նաև հնագույն քարտեզները: Աշխարհի հայտնի հնագույն քարտեզները գծագրված աղյուսի, թիթեղի, կավի, մագաղաթի ու թղթի վրա վկայում են, որ Հայաստանը աշխարհի հնագույն երկրներից է, իսկ հայերը աշխարհի ու Առաջավոր Ասիայի հնագույն բնակիչներից են: Միջնադարյան համարյա բոլոր քարտեզներում, որոնց հեղինակները հենվում էին պատմիչների, աշխարհագիրների ու ճանապարհորդների աշխատությունների տեղեկությունների վրա, միշտ նշվում են Հայաստանը (Մեծ Հայք, Փոքր Հայք), Կիլիկյան Հայաստանը, նաև Արարատ լեռը՝ Նոյյան տապանով և այլն:

Ներկայացնենք հնագույն և միջնադարյան քարտեզներից մի քանիսը¹¹⁷:


¹¹⁷ Քարտեզներն ըստ Ռ. Գալյանի «Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ» աշխատության, Ե., 2005, և ինտերնետային կայքէջերի (ըստ քարտեզների անունների):

Մայր Երկրի պատկերով կավե ափսե (Հայկական կամ Հյուսիսային Միջագետք, Սամարրա, մ.թ.ա. V հազարամյակ, հալաֆյան մշակույթ): Կենտրոնում Արարչի (Ար Աստված) խորհրդանիշով՝ սվաստիկայով նշված է արարչագործության երկիրը՝ Հայկական լեռնաշխարհը, շրջապատված լեռներով: Լեռներից սկիզբ են առնում չորս գետեր, ինչպես Բիբլիայի դրախտի դեպքում, որից նույնպես սկիզբ են առնում չորս գետեր: Մայր երկիրը շրջապատված է Համաշխարհային օվկիանոսի ջրերով, որի մեջ լողում են ձկներ (12 հատ):



Վերականգնված
Մայր Երկրի պատկերով կավե ափսե (Հայկական Միջագետք),
Սամարրա, մ.թ.ա. V հազարամյակ

Տիեզերքի ու Մայր Երկրի (Միջագետք, Հայկական լեռնաշխարհ) մեզ հայտնի հնագույն պատկերը կավե սալիկի վրա գծագրված շումերական քարտեզն է, որը թվագրվում է մ.թ.ա. III հազարամյակի կեսով: Կավե սալիկի վրա պատկերված է տիեզերքը՝ Համաշխարհային օվկիանոսը, նրա վրա լողացող ձվածև, հարթ հատակով ու ստորջրյա մասով Մայր Երկիրը և յոթ երկնակամարներ: Մայր Երկրի ստորջրյա հատվածում երևում է մուտք (դարպաս), որտեղից սկիզբ է առնում Համաշխարհային կամ Ստորերկրյա գետը, որի Մայր Երկրի երես դուրս գալու շրջանից սկիզբ են առնում Տիգրիս ու Եփրատ գետերը: Այդ շրջանում երևում են նաև լեռներ: Կարելի է ասել, որ պատկերված են Հայկական լեռնաշխարհը և Միջագետքը: Մայր Երկիրը ծածկված է յոթ երկնակամարներով, որոնք խորհրդանշում են Լուսինը, Արևը և մյուս հայտնի հինգ մոլորակները:



Տիեզերքի և Մայր Երկրի շումերական հնագույն «քարտեզը»,
մ.թ.ա. III հազարամյակի կես:

Հաջորդ հնագույն քարտեզը Բաբելոնյան աստղաձև քարտեզն է գծագրված աղյուսի վրա, որը թվագրվում է մ.թ.ա. VI դարով: Բաբելոնյան աստղաձև քարտեզը աշխարհագրական անվանումներով աշխարհի առաջին հայտնի քարտեզն է: Աշխարհը պատկերված է ծովի մեջ լողացող սկավառակի ձևով՝ շրջապատված դառը (աղի) ջրերով, որոնց մեջ կան յոթ կղզիներ: Հայաստանը այդ քարտեզում նշված է Միջագետքից հյուսիս ընկած տարածքում, հարավից հարևան ունենալով Բաբելոնն ու Ասորեստանը: Քարտեզի վերին աջ մասում գրված է **Armenia**: Ամենավերևում՝ լեռներից սկիզբ է առնում Եփրատ գետը: Նշված են նաև Ասորեստանը, Բաբելոնը և յոթ քաղաքներ, այդ թվում՝ Հաբբան (Հարրան), Բիթլակինա (Բիթշակինա), Դերի և այլն: Կղզիները եռանկյունաձև են, որոնց վրա պատկերված են Արև, Լուսին, նաև կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներ: Քարտեզի վրա նշված երկրներից ու քաղաքներից այսօր գոյություն ունի միայն **Հայաստանը**:



Բաբելոնյան աստղաձև քարտեզը, մ.թ.ա. VI դար




Աշխարհի հնագույն քարտեզներից է Հեկատեոս Միլեթացու կազմած քարտեզը (մ.թ.ա. 517 թ.), փորագրված պղնձե թիթեղի վրա: Քարտեզի վերակազմությունը իրականացրել են Ջոն Մերրիին (քարտեզագիր) և Ջաստիկ Խանզադյանը (գծագրող): Ներկայացված են Ասիա, Եվրոպա, Լիբիա (Աֆրիկա) աշխարհամասերը և այդ ժամանակ գոյություն ունեցող մի շարք երկրներ, այդ թվում **Հայաստանը (Armenia)**, որը նշված է Միջերկրական, Սև ու Կասպից ծովերի միջև:




Աշխարհի քարտեզը ըստ Հեկատեոս Միլեթացու (մ.թ.ա. 517 թ.)

Աշխարհի քարտեզը կազմված Հերոդոտոսի «Պատմություն» աշխատության (մ.թ.ա. V դար) հիման վրա (քարտեզագիր Ջոն Մլրրի, գծագրող՝ Ջատիկ Խանգադյան): Տիգրիս ու Եփրատ գետերի ակունքների շրջանում ներկայացված է **Հայաստանը**:



Աշխարհի քարտեզը ըստ Հերոդոտոսի (մ.թ.ա. V դար)

Աշխարհի քարտեզը ըստ Էրատոսթենեսի (մոտ. մ.թ.ա. 276-194) տեղեկությունների: Քարտեզը պատրաստել է գերմանացի քարտեզագիր ֆոն Սպրունները 1855 թ.: Հայաստանը նշված է Միջերկրական, Սև ու Կասպից ծովերի միջև: Նկատում ենք, որ քարտեզում **Հայաստանը** կենտրոնական դիրք ունի, գտնվելով Եվրոպայի ու Ասիայի միջև:



Աշխարհի քարտեզը ըստ Էրատոսթենեսի (մոտ. մ.թ.ա. 276-194), 1855 թ.

Աշխարհի քարտեզը ըստ հույն աշխարհագիր Պոսիդոնիսի (մ.թ.ա. I դար): Քարտեզը պատրաստվել է 1630 թ. Բերթիուս Պետրուսի կողմից: Հայաստանը պատկերված է քարտեզի կենտրոնում, Եվրոպայի և Ասիայի միջև:



Աշխարհի քարտեզը կազմված քարտեզագիր Ջոն Մլրրիի կողմից Ստրաբոնի (մ.թ.ա. 63 – մ.թ. 20) «Աշխարհագրություն» աշխատության տեղեկությունների հիման վրա: Հայաստանը ներկայացված է քարտեզի կենտրոնում, Եվրոպայի և Ասիայի միջև:



Աշխարհի քարտեզը ըստ Ստրաբոնի, մ.թ.ա. I դար – մ.թ. I դար


Աշխարհի քարտեզը ըստ Պոսիդոնիսի (մ.թ.ա. I դար), 1630 թ.

Պտղոմեոսի (II դար) «Աշխարհագրություն» գրքի քարտեզը (քարտեզ 17), տպագրված 1482 թ. Հռոմում: **Մեծ Հայքը** – Armenia maior և **Փոքր Հայքը** – Armenia minor ներկայացված են միասին: Քարտեզում ծովերը ներկված են կանաչ, իսկ լեռները՝ կապույտ գույնով: Նշված են նաև **Հայաստանի** կարևոր քաղաքները. Արմավիրը, Արտաշատը, Երվանդաշատը...:




Պտղոմեոսի (II դար) «Աշխարհագրություն» գրքի քարտեզը (քարտեզ 17)

Պտղոմեոսի (II դար) «Աշխարհագրություն» գրքի «Ասիայի երրորդ քարտեզը», հրատարակված 1482 թ. Ուլմում: Քարտեզում ներկայացված են Մեծ Հայքը և հարևան երկրները՝ Կողքիսը, Իբերիան և Ալբանիան:



«Ասիայի երրորդ քարտեզը» ըստ Պտղոմեոսի, II դար

Աշխարհի քարտեզը: Քարտեզի հեղինակն է հռոմեացի աշխարհագիր Պոմպոնի Մելան, մ.թ. 43 թ.: Քարտեզում ներկայացված են Ասիա, Եվրոպա, Աֆրիկա մայրցամաքները և այդ ժամանակ գոյություն ունեցող մի շարք երկրներ, այդ թվում՝ **Հայաստանը**, որը ներկայացված է քարտեզի վերին, ձախ (կենտրոնին մոտ) հատվածում, Եվրոպայի և Ասիայի միջև: Արևելքը (Ասիա) ուղղորդված է դեպի վեր:



Աշխարհի քարտեզը ըստ Պոմպոնի Մելայի, մ.թ. 43 թ.

Սևիլիացի Իսիդոր Եպիսկոպոսի (570–636) կողմից պատրաստված քարտեզի XI դարի պատճենում արևելքը ուղղորդված է դեպի վեր: Կենտրոնում Միջերկրական ծովն է, լի բազմաթիվ կղզիներով: Կարմիր ծովը սեպածն է ու կարմիր գույնի: Քարտեզի վերին ձախ մասում պատկերված են լեռներ, որոնց վերևում, բուսական պատկերների մոտ (Երկրային Դրախտը) գրված է **Armenia**:



Իսիդոր Եպիսկոպոսի (570–636) պատրաստած քարտեզը, XI դարի պատճեն

Լիբենացի Բեատուսի (VIII դար) «Ապոկալիպսիս» աշխատության XII դարի ձեռագիր քարտեզը: Քարտեզի ուղղահայաց կապույտ գիծը Միջերկրական ծովն է: Արևելքը ուղղորդված է դեպի վեր, ուր պատկերված է Երկրային Դրախտը Ադամի ու Եվայի հետ: Քարտեզի կենտրոնական վերին հատվածում, Եվայի ձախ կողմում՝ կանաչ ծառի (Երկրային Դրախտի) մոտ գրված է **Armenia**:



Լիբենացի Բեատուսի (VIII դար) «Ապոկալիպսիս» աշխատության XII դարի ձեռագիր քարտեզը

«Կոստոնյան» կոչվող քարտեզը պատրաստվել է Անգլիայում X դարում: Քարտեզը ուղղորդված է արևելքով դեպի վեր: Լեռները ներկված են կանաչ, ծովերը և գետերը՝ կարմիր գույնով: Քարտեզի վերին ձախ մասում պատկերված են Արարատ լեռը և Նոյյան տապանը, որի մոտ գրված է Հայաստանի լեռներ: Տապանի ներքևի մասում ընթերցվում է **Armenia** անունը:




«Կոստոնյան» կոչվող քարտեզը, X դար

Քարտեզագիր Ա. Օրտելիուսի պատրաստած աշխարհի առաջին աշխարհագրական ատլասը, այդ թվում Theatrum Orbis Terrarum-ի հիմնական քարտեզը, տպագրվել է Անտվերպենում 1570 թ.: Հայաստանը (Armenia) ներկայացված է Եվրոպայի ու Ասիայի միջև ընկած տարածքի կենտրոնում, ինչը մեկ անգամ ևս վկայում է, որ Հայաստանը ոչ Եվրոպա է, ոչ Ասիա, այլ կենտրոն, որը կապված է երկու աշխարհամասերի հետ:





Ա. Օրտելիուսի պատրաստած աշխարհի առաջին աշխարհագրական ատլասը, 1570 թ.

Աշխարհի երեքնուկան քարտեզի հեղինակն է Հենրիխ Բունտինգը: Կենտրոնում Երուսաղեմն է, իսկ տերևները ներկայացնում են Եվրոպան, Ասիան և Աֆրիկան: Հայաստանը պատկերված է Ասիայի հյուսիսային մասում: Քարտեզը պատրաստվել է 1581 թ. և պահվում է Գերմանիայի Մագդեբուրգ քաղաքում:



Աշխարհի երեքնուկան քարտեզը պատրաստած Հենրիխ Բունտինգի կողմից 1581 թ.

1675 թ. Ամստերդամում հրատարակված Ա. Կիրշերի «Նոյան տապանը» գրքի ետջրիեղեղյան ժամանակաշրջանի քարտեզում Տիգրիս և Եփրատ գետերի միջև պատկերված են Երկրային Դրախտը և **Հայաստանը** (քարտեզի վերին աջ մասում):




Ա. Կիրշերի «Նոյան տապանը» գրքի ետջրիեղեղյան ժամանակաշրջանի քարտեզը, 1675 թ.

Էմմանուիլ Բուոենի կողմից 1780 թ. կազմված քարտեզում Երկրային Դրախտը պատկերված է **Հայաստանում**: Նկատենք, որ այս քարտեզը շատ նման է աղյուսի վրա գծագրված մ.թ.ա. III հազարամյակի կեսով թվագրվող շումերական վերը ներկայացված քարտեզին (լեռներ, լեռներից սկիզբ առնող Տիգրիս ու Եփրատ գետերը, Միջագետքը):



Էմմանուիլ Բուոենի կողմից 1780 թ. կազմված քարտեզը

1599 թվականին Լոնդոնում հրատարակված Բիբլիայի «Դրախտի տեղադրությունը» բաժնում պատկերված է Միջին Արևելքի հնագույն քարտեզը, որտեղ նշված են **Մեծ Հայքը (The Great Armenia)** Եփրատ և Տիգրիս գետերի ակունքների շրջանում, Միջագետքը, Բաբելոնը, Պարսից ծոցը և այլ երկրներ: Գիրքը պահվում է ԱՄՆ Օրեգոն նահանգի Պորտլենդ քաղաքի Lewis & Clark քոլեջի գրադարանում (այն հայտնաբերել է քոլեջի ուսանողներից մեկը): Ինչպես հաղորդում է CBC News-ը գրքի էջերից մեկում գրված է, որ այն պատկանել է Էլիզաբեթ I թագուհուն և Ուիլյամ Շեքսպիրին:



Միջին Արևելքի հնագույն քարտեզը ըստ Բիբլիայի, 1599 թ.

Նետաքրքիր է, որ Համաշխարհային ջրհեղեղի ու Նոյյան տապանի թեմաները օգտագործվել են նաև եվրոպական միջնադարյան ճարտարապետության մեջ: Այսպես, Նոյյան տապանն է պատկերված Փարիզի Սեն Շապել (XIII դ.) եկեղեցու բարձրաքանդակներից մեկում: Այս դեպքում Նոյյան տապանի ու Հայաստանի կապը ցույց տալու համար Նոյյան տապանի հետևում պատկերվել է Զվարթնոցի եռահարկ տաճարը (VII դ.):



Փարիզի Սեն Շապել (XIII դ..) եկեղեցին



Սեն Շապել եկեղեցու բարձրաքանդակ Զվարթնոց տաճարի պատկերով

Ինչպես նկատում ենք, Հայաստանը մինչև XIX դարի II կեսը մշտապես ներկայացվում է քարտեզներում, չնայած ինքնուրույն պետություն չէր այլևս: Միջնադարյան քարտեզագրության մեջ երկրային Դրախտը միշտ պատկերվում էր Հայաստանում: Քարտեզներում պատկերվում էին նաև Հայաստանի խորհրդանիշներ Արարատ լեռը, Նոյյան տապանը և այլն: **Armenia** անունը քարտեզներում շատ հաճախ գրվում է Տիգրիս ու Եփրատ գետերի ակունքների շրջանում, հաճախ հիշատակվում է որպես **Մեծ Հայք** ու **Փոքր Հայք**: Նկատելի է հատկապես Հայաստանի կենտրոնական դիրքը հնագույն բոլոր քարտեզներում:

Քարտեզների ուսումնասիրությունը թույլ է տալիս ասելու, որ Հայկական լեռնաշխարհը և շրջակա տարածքները, այդ թվում Կիլիկիան և Հյուսիսային Միջագետքը ի սկզբանե բնակեցված են եղել հայ-արմեններով՝ հայկական (արիական) ցեղերով և շատ վաղուց գոյություն է

ունեցել **Հայաստան** (Armenia) պետությունը: Քարտեզները նաև ցույց են տալիս, թե որքան մեծ փոփոխությունների են ենթարկվել Հայաստանի սահմանները դարերի ընթացքում: Նկատում ենք նաև, որ հազարամյակների ու դարերի ընթացքում Հայաստանի հարևանությամբ հայտնվել ու անհետացել են շատ երկրներ ու կայսրություններ (Շումեր, Աքքադ, Խաթթի, Բաբելոն, Ասորեստան, Եգիպտոս, Հռոմեական կայսրություն, Արաբական խալիֆաթ, Բյուզանդիա...):

Քարտեզներից երևում է, թե դարեր շարունակ ինչ կարևոր դեր է խաղացել Հայաստանը համաշխարհային պատմության մեջ՝ գտնվելով առևտրական ուղիների խաչմերուկում և լինելով համաշխարհային քաղաքակրթության ստեղծման կենտրոններից մեկը: Նշենք նաև, որ միջնադարի եվրոպական միապետները, քաղաքական գործիչներն ու պատմագրությունը հիմնականում բարյացակամ վերաբերմունք ու տրամադրություններ ունեին հայերի ու Հայաստանի հանդեպ:

Այսօր հազարամյակների հեռավորությունից կարող ենք ասել, որ հայերը շարունակում են ապրել իրենց վաղնջական տարածքներում (ցավոք, Պատմական Հայաստանի մի մասում, և այսօրվա Հայաստանի Հանրապետության տարածքը ամենափոքրն է երբևէ ստեղծված հայկական պետություններից), իսկ **Հայաստանը** աշխարհի միակ պետությունն է, որ նշված է մեզ հայտնի հնագույն քարտեզին (Բաբելոնյան աստղածն քարտեզ, մ.թ.ա. VI դար) և շարունակում է գոյություն ունենալ այսօրվա՝ XXI դարի սկզբի քարտեզների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀՆԱԳՈՒՅՆ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՈՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂԱՎԱՂՈՒՄԸ XIX–XX ԴԴ.

XIX դարի կեսից, ինչպես արդեն նշվել է, նկատվում է այլ վերաբերմունք Հայաստանի հանդեպ, որը պայմանավորված էր տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրավիճակով: Եվրոպական երկրները (Անգլիա, Գերմանիա, Ավստրո-Հունգարիա) քաղաքական նպատակներով ցանկանում էին թույլ չտալ Թուրքիայի մասնատումը, ցանկանում էին թույլ չտալ հայկական տարածքներում Հայաստան պետության ստեղծումը և այլն: Այս պայմաններում հայտնվում են ուսումնասիրողներ, որոնք պաշտպանելով իրենց կառավարությունների որդեգրած հակահայ քաղաքականությունը, սկսում են խեղաթյուրել աստմական փաստերը: Գերմանացի, անգլիացի և եվրոպացի որոշ ուսումնասիրողներ ժխտում ու նենգափոխվում են հնագույն գրավոր աղբյուրների վկայությունները հայերի ու Հայաստանի մասին: Նրանք ժխտում են նաև՝ հայ նախնի ու Հայաստան նախահայրենիք ունենալու վկայությունները: Անհիմն կերպով հերքվում, մերժվում են բրիտների, բավարացիների ու այլ ցեղերի հայկական ծագման մասին անգլիական ու գերմանական հնագույն գրավոր աղբյուրներում նշված փաստերը: Անհիմն կերպով կասկածելի են համարվում պատմիչների տեղեկությունները հայերի ու Հայաստանի մասին¹¹⁸:

Նորից առաջ է քաշվում նաև վերոհիշյալ Յոհաննես Թուրմայերի կարծիքը, որը փորձելով արժեզրկել բավարացիների հայկական ծագման մասին վկայությունները, գրում էր, որ ջրհեղեղից հետո բոլոր ժողովուրդները ծագել են Հայաստանից¹¹⁹: Վերակենդանացնելով Թուր-

¹¹⁸ «The Anglo-Saxon Chronicle»-ի 1861 թ. և 1953 թ. հրատարակությունները: E. A. Quitzmann, Die heidnische Religion der Baiwaren, Leipzig, 1860 և E. A. Quitzmann, Die älteste Geschichte des Baiern bis zum Jahre 911, Braunschweig, 1873; Hans F. Nöhbauer, «Die Bajuwaren», Welt-bild Verlag, Augsburg, 1990.

¹¹⁹ Ռասաների ծագման հարցի վերաբերյալ չկա միասնական տեսակետ: Տեսակետներից մեկի համաձայն ռասաները առաջացել են աշխարհի տարբեր կետերում, տարբեր նախնիներից: Այդ տեսակետի կողմակիցները կոչվում են **պոլիցենտրիստներ** (այս տեսակետը ավելի ընդունելի տարբերակ է): Այլ տեսակետի կողմակիցների կարծիքով, որոնք կոչվում են **մոնոցենտրիստներ**, ռասաները առաջացել են մեկ նախնուց, երկրագնդի ինչ-որ մասում, այնուհետև տարածվել են և էվոլյուցիոն գործընթացի հետևանքով վերածվել տարբեր ռասաների:

մայերի վիճելի այս կարծիքը՝ փորձ էր արվում մերժել գերմանական գրավոր աղբյուրների վկայությունները բավարացիների հայկական ծագման մասին: Ի պատասխան այս հայտարարության, նորից անդրադառնանք Ջրհեղեղի մասին Բերոսոսի վկայությանը: Ուշադիր ընթերցելով վերը (առաջին բաժնում) ներկայացված հատվածը, նկատում ենք, որ ջրհեղեղից առաջ կա **Հայաստան (Արմենիա)** անունով երկիր, որտեղ ապրում էին անմահներ (աստվածներ) ու աստվածների կամքով անմահություն ստացած մահկանացուներ: **Հայաստան (Արմենիա)** անունով երկիր կա նաև Ջրհեղեղից հետո, որտեղ սակայն աստվածները թույլ չեն տալիս ապրել փրկվածներին, այլ նրանց հրամայում են վերադառնալ Բաբելոն: Իսկ սա նշանակում էր, որ ոչ բոլորին էր թույլ տրվում ապրել Հայաստանում՝ Արարատի երկրում: Սակայն մարդկության պատմության զարգացման ինչ-որ ժամանակահատվածում **խախտվել է սահմանված կարգը**: Արարատի երկրի մեծ մասում այսօր ապրում են մարդիկ, որոնք ոչ հոգևոր, ոչ մշակութային առումով կապ չունեն այդ տարածքի հետ:

Վերևում նշվել է նաև անգլիացի պատմաբան Բենիամին Թորփի մասին, որը 1861 թ. հրատարակված անգլո-սաքսոնական ժամանակագրություններում («The Anglo-Saxon Chronicle»), աղավաղելով Բրիտանիայի հնագույն բնակիչներից մեկի՝ բրիտների Հայաստանից գալու մասին վկայությունը, տողատակում գրում է, որ բրիտները եկել են ոչ թե Արմենիայից, որն իբր սխալմունք է, այլ ֆրանսիական Բրետանից, որը հնում կոչվել է Արմորիկա: 1953 թ. «The Anglo-Saxon Chronicle-ը» նորից է հրատարակվում: Այս անգամ տողատակի «ուղղումը» արդեն տեքստի մեջ է հայտնվում: Երկու դեպքում էլ խեղաթյուրվում են փաստերը և Արմենիան դառնում է Արմորիկա:

XX դարի II կեսից գիտնականները նորից անդրադառնում են հայերին ու Հայաստանին: Մարդաբանական (գանգաբանական), լեզվաբանական, հնագիտական և այլ ուսումնասիրություններ գիտնականներին նորից ստիպում են խոսել հայերի ու Հայաստանի մասին: Կատարված նոր ուսումնասիրությունների արդյունքում առաջ են քաշվում տեսակետներ, որոնց համաձայն Հայկական լեռնաշխարհը քաղաքակրթության հնագույն կենտրոններից է, Հայկական լեռնաշխար-

հը և շրջակա տարածքները հնդեվրոպացիների՝ արիական ցեղերի նախահայրենիքն է, հայերն աշխարհի հնագույն ազգերից են, հայոց լեզուն Առաջավոր Ասիայի հնագույն լեզուներից է¹²⁰ և այլն: Ծանոթանանք առաջ քաշված մի շարք տեսակետների: Այսպես. իտալացի գեներտիկ (ծագումնաբան) Լ. Լ. Կավալլի-Սֆորզան գրում է. «...գենետիկայի տեսակետից, մասնավորապես դամբարանաբլրային ժողովուրդները ծագում են, ծայրահեղ դեպքում Առաջավորասիական նեոլիթից և այդտեղ են գաղթել Թուրքիայից»¹²¹ (հեղինակը սխալ կերպով օգտագործում է Թուրքիա անվանումը): Խոսվում է նաև գաղթի (միգրացիայի) ժամանակաշրջանի մասին. «Եթե գաղթը Անատոլիայից սկսվել է 9500 տարի առաջ, իսկ դամբարանաբլրային շրջանը թվագրվում է 6000 տարի առաջ, ապա 3500 հազար տարի է անցել նրանց Անատոլիայից դուրս գալու և հավանաբար Բալկաններով Վոլգա-Դոնյան շրջան հասնելու համար» (Հայկական լեռնաշխարհի կամ Հայաստան անվան փոխարեն օգտագործվում է Անատոլիա անվանումը):

Կենսաբան Քվենտին Ատկինսոնի ղեկավարությամբ տարբեր ազգերի մի խումբ լեզվաբաններ ուսումնասիրելով բոլոր հնդեվրոպական լեզուները, քննելով ժամանակակից լեզուների մի շարք բառերի ծագումնաբանության և զարգացման հարցերը, համոզիչ կերպով ապացուցում են, որ հնդեվրոպական բոլոր լեզուների նախահայրենիքը Անատոլիան է (պետք է հասկանալ Հայկական լեռնաշխարհ և Փոքր Ասիա): Համեմատելու համար վերցվել են միավանկ բառարմատներ (մայր, հաց, որս, երկինք...), որոնք ունեն ընդհանուր ծագում և նման

¹²⁰ Ըստ լեզվաբանական ուսումնասիրությունների հնդեվրոպական բազմաթիվ լեզուներում մետաղները՝ պղինձը, բրոնզը, երկաթը իրենց անուններով կապվում են Հայկական լեռնաշխարհի հետ: Այսպես. հունարեն *xalkos* (նաև *aes*), բառը «պղինձ, բրոնզ», սանսկրիտ *ayas*-ը՝ «պղինձ», ավելի ուշ նաև «երկաթ», գոթերեն *aiz*-ը՝ «բրոնզ», գերմաներեն *erz*-ը՝ «երկաթ», անգլերեն *ore*-ն՝ «երկաթ», լատիներեն *aes*-ը՝ «պղինձ» իմաստն ունեն և այլն (< Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Ե., 1973, էջ 59: В. Иванов, Т. Гамкрелидзе, Древняя Передняя Азия и индоевропейская проблема, ВДИ, 3, 1980, с. 10; С. Дикшит, Введение в археологию, М., 1960, с. 455-456): Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ բառերը, նաև **արծաթ** *argentium* բառը, իմաստով (մետաղներ) և անուններով կապվում են և՛ իրար հետ, և՛ հայ-արմենների **հայ** ու **ար** (արմեն) անունների հետ (*ayas, aes, ar, er* ձևերով):

¹²¹ Cavalli-Sforza Luigi Luca, Genes, Peoples and Languages, (NY: North Point Press, 2000) 159-165:

հնչողություն մի քանի հնդեվրոպական լեզուներում¹²²: Կազմվել է նաև հ.ե. լեզուների կենսաբանական ծառ, որտեղ հայերենը նշվում է որպես հնագույն լեզուներից մեկը¹²³: Նոր ուսումնասիրություններից հետո Կվենտին Ատկինսոնը և Ռասսել Գրեյը գրում են, որ հնդեվրոպացիների լեզուն 8000–9500 տարեկան է, ավելի հին է, քան ենթադրվում էր և ծագել է Անատոլիայում¹²⁴ (պետք է հասկանալ Հայաստանում):

Անգլիացի հնագետ Կոլին Ռենֆրուն, որը դեռևս 1987 թ. առաջ էր քաշել այն տեսակետը, որ հնդեվրոպացիների նախահայրենիքը գտնվում է Չաթալ-Նույուքի շրջանում (Քոնիա, Կիլիկյան Տավրոսից հյուսիս-արևմուտք, մ.թ.ա. VII–VI հազարամյակ), առաջինն արձագանքեց ու ընդունեց Ռ. Գրեյի և Կ. Ատկինսոնի հնդեվրոպացիների նախահայրենիքի մասին վարկածը¹²⁵:

Ամերիկացի լեզվաբան Մերրիթ Ռուիլինն իր գրքում պատմահամեմատական մեթոդով քննարկելով հնդեվրոպական մայր լեզվի նախահայրենիքի հարցը, այնուհետև գրում է. «գենետիկական ուսումնասիրությունները փաստում են, որ Փոքր Ասիայի (պետք է նշվեր նաև Հայկական լեռնաշխարհի) հնագույն երկրագործ բնակիչների գենն է արտագաղթել էվրոպա և այնտեղ կրել որոշ փոփոխություն»¹²⁶:


¹²² Նշենք մի կարևոր փաստի մասին ևս: Հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող լեզուները ունեն տարբեր հնչյունական համակարգեր: Այս լեզվաընտանիքի լեզուների մի մասը ունի բաղաձայն հնչյուններ, որոնք չունեն մյուս լեզուները, կամ նույն ճյուղի մեջ մտնող լեզուները (սլավոնական, ռոմանական) ունեն տարբեր հնչյունական համակարգեր և այլն: Այս առումով հայոց լեզուն իր բարտներով այն եզակի հնդեվրոպական լեզուներից է, որն ունի այդ լեզվաընտանիքի լեզուներին հատուկ բոլոր բաղաձայն և ձայնավոր հնչյունները: Հայոց լեզուն ունի 36 հնչյուն (39 պատկեր), որոնցով լիովին վերարտադրվում են հնդեվրոպական բոլոր լեզուների հնչյունական համակարգերը: Հնդեվրոպական շատ լեզուներում բացակայում են հնչյուններ, որոնք կան հայոց լեզվում: Բացակայող հնչյունները հիմնականում ց, ծ, ձ, ղ, ր, ս, հ, կ, փ, թ, ջ բաղաձայն հնչյուններն են: Այս փաստը վկայում է, որ նախահայրենիքում Հայկական լեռնաշխարհում կազմավորված հայ ազգը պահպանել է հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզուներին հատուկ բոլոր ձայնավոր ու բաղաձայն հնչյունները:

¹²³ Russell D. Gray & Quentin D. Atkinson, «Language-tree divergence times support the Anatolian. Theory of Indo-European origin» Nature vol. 426 (Nov. 26, 2003) 435–439:

¹²⁴ Bouckaert Remco. et al., «Mapping the Origins and Expansion of the Indo-European Language Famil.» Science, vol. 337, 6097 (2012), p. 957–960:

¹²⁵ Colin Renfrew, Archaeology and Language: The Puzzle of Indo-European Origins (New York: Cambridge University, 1987) 148; Colin Renfrew, «Archaeology, Genetics and Linguistic Diversity,» Man, vol. 27, no. 3 (Sept. 1992) 445-478:

¹²⁶ Ruhlen Merritt, The Origin of Language, 1994.



տարբեր ցեղերի խառնվելու հետևանքով առաջացած ժողովուրդներ են: Մինչդեռ, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, հայերը իրենց ինքնատիպ մշակույթով, բարքերով ու սովորույթներով դեռևս հնագույն ժամանակներից, շրջապատված լինելով տարբեր գենետիկ հատկանիշներ ունեցող հարևաններով, կարողացել են պահպանել ու մեր օրերը հասցնելով իրենց ինքնատիպությունը, այդ թվում գենետիկ հատկանիշները:

Ուսումնասիրությունները բացահայտել են նաև, որ ժամանակակից հայերը գենետիկ մեծ ընդհանրություններ ունեն հնագույն եվրոպացիների հետ, ինչը նշանակում է, որ ժամանակակից հայերը իրենց մեկուսացման՝ այլ ցեղերի հետ չխառնվելու շնորհիվ, պահպանել են Մերձավոր Արևելքի հնագույն էթնոսի գենետիկ կառուցվածքը, որը միգրացիայի մի քանի ալիքներով (մ.թ.ա. III–II հազարամյակ, մ.թ.ա. II–I հազարամյակ, նաև ավելի ուշ) տարածվել է դեպի Եվրոպա:

Ինչպես նկատում ենք, ժամանակակից մեթոդներով մարդու գենետիկ հատկանիշների (ԴՆԹ) ուսումնասիրությունները թույլ են տալիս բացահայտել, թե ովքեր են ժամանակակից Եվրոպայի ժողովուրդների նախնիները:



Այս քարտեզում տարածքները և լեզուները նշված են ճիշտ:
<http://maxpark.com>

Ավելի վաղ լեզվաբաններ Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը նույնպես խոսել են Հայկական լեռնաշխարհը և շրջակա տարածքները հնդեվրոպական լեզվաընտանիքի ծագման բնօրրան լինելու մասին¹²⁸ (նույնպես հաճախ օգտագործվում է Անատոլիա անվանումը):

Նոր ուսումնասիրություններից նշենք նաև Գերտա Թոփակյանին (Ավստրիա), որն իր «**Die Bayerisch-Armenische Stammesgeschichte**» – «Բավարա-հայկական ավանդազրույցներ» հոդվածում անդրադարձել է հայբավարական հնագույն առնչություններին: Հեղինակը այդ հոդվածում չեզոք դիրք է որդեգրել, ներկայացնելով հարցին վերաբերող դրական և բացասական տեսակետներ: Հայ-գերմանական (բավարական) առնչություններին վերաբերող նյութերի շարքում նշենք նաև 1987 թ. Բեյրութում հրատարակված Հակոբ և Լևոն Թորոսյանների «Գերմաներէն-հայերէն բառարանի» նախաբանը, որտեղ հեղինակները գրում են. «Գերմաներէնը կը պատկանի հնդեվրոպական լեզուներու հնդգերմանական ճիւղին, ազգակից հայերէնին: Սոյն բառարանի պատրաստութեան ընթացքին երեւան հանեցինք **հազարէ աւելի արմատ եւ մասնիկ, որոնք առնչակից են հայերէնին**»¹²⁹:

Կան նաև գիտնականներ, որոնց կողմից արիական ցեղերի նախահայրենիքը Հայկական լեռնաշխարհում և շրջակա տարածքներում տեղադրելու մասին տեսակետները միանշանակ չեն ընդունվում: Նրանք հնդեվրոպացիների նախահայրենիքը տեղադրում են այլ տարածքներում (մերձկասպյան տափաստաններ), հենվելով այնտեղ կատարված հնագիտական պեղումների արդյունքների վրա (մ.թ.ա. IV–III հազարամյակ, դամբարանաբլրային կամ կուրգանային մշակույթ): Սակայն Հայկական լեռնաշխարհում և Փոքր Ասիայում պեղված հնագույն բնակավայրերը (թուրքական անուններով հայտնի Չոյունու թեփե, Չաթալ հույուք, Ալան հույուք, Հաջիլար, Ալիշար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Չաղա, Բառոժ, Շենգավիթ, Մոխրաբլուր, Գառնի) ու հայտնաբերված հնագիտական

¹²⁸ Гамкредидзе Т., Иванов В., Индоевропейский язык и индоевропейцы, Тб., 1984, ч. 1,2; տես նաև Luigi L. Cavalli-Sforza, Paolo Menozzi, and Alberto Piazza, “Demic Expansions and Human Evolution,” Science, vol. 259 (January 29, 1993): 632-646, 642; L. L. Cavalli-Sforza, Paolo Menozzi and Alberto Piazza, The History and Geography of Human Genes, (Princeton University Press, 1994) 218; John Noble Wilford, “Fossil Signs of First Human Migration Are Found,” The New York Times, May 12, 2000.

¹²⁹ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պաշտօնաթերթ «Հասկ»-ի միացեալ 1–6 թիւեր:

նյութերը շատ ավելի վաղ թվագրում ունեն (մ.թ.ա. VIII–IV հազարամյակ): Ի հայտ են գալիս նաև նոր ապացույցներ՝ հնագիտական նոր հուշարձաններ, որոնք վկայում են, որ Հայկական լեռնաշխարհը հնագույն քաղաքակրթության կարևոր կենտրոններից է: Այդպիսի հուշարձան է վերջերս հայտնաբերված Հայկական Միջագետքի Ուտիա (Եդեսիա, Ուրֆա) քաղաքից 15 կմ հյուսիս-արևելք գտնվող հնագույն **Պորտասար** (Գեորեկլի թեփե) հնավայրը (կրոնա-ձիսական բնակավայր), որը թվագրվում է մ.թ.ա. X հազարամյակով (12 000 տարի առաջ): Իսկ սա նշանակում է, որ հայկական այս հուշարձանը տարածաշրջանում առաջին հայտնաբերված հնագույն հուշարձանն է, որը մի քանի հազարամյակ եղել է նստակյաց մարդկանց կրոնա-ձիսական կենտրոն: **Պորտասար** անունն, անկասկած հուշարձանին տրվել է **իբրև կյանքի, երկրի կենտրոն, պորտ, սար**: Ընդ որում **Պորտասար** անվանումը հուշարձանին տրվել է մարդկանց կողմից, որոնք գիտեին նրա կրոնա-ձիսական հուշարձան լինելու մասին, գիտեին երկրային կյանքի ու հանդերձյալ կյանքի մասին, ինչպես նաև ունեին թոչնակերպ **Անգեղ (Անգեյ)** աստծո պաշտամունքը, որը կապում էր այդ երկու աշխարհները: Իսկ քարե կոթողներ (խաչարձաններ, քարե հուշասյուներ, քարե կուռքեր, ավելի ուշ՝ խաչքարեր) Հայաստանում եղել են բոլոր ժամանակներում: Հայկական Միջագետքում հայտնաբերված մոտ 12 հազար տարեկան հնագույն այս հուշարձանը հնագիտական այլ հնավայր-հուշարձանների հետ այն ապացույցն է, որը համեմատական լեզվաբանության հետ թույլ է տալիս ասելու, որ Հայաստանը հնդեվրոպացիների (արիական ցեղերի) նախահայրենիքն է և ժամանակակից քաղաքակրթության բնօրրանը:



Պորտասար հնավայրը



Պորտասար հնավայրը (վերակազմություն)



Թոչնակերպ Անգեղ (Անգեյ) աստվածության պատկեր, Պորտասար, մ.թ.ա. VII հազ.

Յավորք, հայոց պատմությունն ու հայ մշակույթն անտեսելու միտումը շարունակվում է նաև այսօր: Այս պայմաններում ինչ պետք է անենք մենք՝ հայերս: Պետք է գրենք մեր պատմությունը, ուսումնասիրելով ու օգտագործելով հայտնի բոլոր հնագույն գրավոր աղբյուրները, ժամանակագրությունները, վկայություններն ու փաստերը: Մենք պետք է իմանանք մեր երկրից տարբեր պատճառներով, տարբեր ժամանակներում հեռացած, մեզնից անջատված մեր ժողովրդի բոլոր մեծ ու փոքր հատվածների պատմությունը, անկախ նրանից, դա դուր է գալիս այսօրվա նրանց ժառանգներին ու հետնորդներին, թե ոչ: Որովհետև, առաջին հերթին դա հայ ժողովրդի պատմությունն է, որից հետո միայն սկսվում է մեզնից հեռացած մեր ժողովրդի մի հատվածի ու նրանց հետնորդների պատմությունը: Իսկ այդ հետնորդները այսօրվա Եվրոպայի հիմնական բնակիչներն են, որոնց մեծ մասը ցանկություն ունի ամեն ինչ իմանալ իր նախնիների, երկրի ու ժողովրդի մասին: Իսկ ճշմարտությունը հնարավոր չէ թաքցնել, որքան էլ աղավաղվեն, անտեսվեն հնագույն գրավոր աղբյուրները, ավանդազրույցները, նաև պահպանված բանավոր հիշողությունները:

Այսպիսով կարող ենք ասել, որ հայերը տեսանելի հետք են թողել Եվրոպայում (արևի պաշտամունք, մետաղի մշակում, բրուտագործություն, հողագործություն, ճարտարապետություն, խաչքարի արվեստ,

տեղանուններ...): Հայտնվելով Եվրոպայում երկար ժամանակ հայկական ցեղերը նոր հայրենիքում պահպանել են իրենց ավանդույթները, ծեսերը, սովորույթները և այլն: Նրանք պահպանել են նաև հիշողություն Հայրենիքի՝ **Սուրբ Հայաստանի** ու **Արարատ լեռան** մասին, այդ մասին հիշատակելով գրավոր աղբյուրներում, կամ բանավոր զրույցների միջոցով փոխանցելով սերնդե-սերունդ:

Այսօր կտրվել կամ անտեսանելի է դարձել Եվրոպայի հնաբնակ ժողովուրդների կապը նախահայրենիքի՝ Հայաստանի հետ: Պետք է վերականգնվի այդ կապը, որովհետև այսօր դա ոչ միայն Հայաստանին է պետք, այլև Եվրոպային, որը հայտնվել է իր ինքնությունը, մշակույթը, հոգևոր ու այլ արժեքները կորցնելու վտանգի առջև: Ինչպես վերևում նշվել է, հնդեվրոպացիների նախնիները՝ արիական ցեղերը (հայ-արմենները) իրենց նախահայրենիքում՝ Արարատի երկրում ապրում էին Արարչի սահմանած օրենքներով: Սակայն ինչ-որ պահ խախտվել է սահմանված կարգը: Առաջ են եկել Միջագետքի առաջին բռնապետությունները (Աքադ, Բաբելոն, Ասորեստան), որոնց առաջնորդները իրենք իրենց հռչակել են աստծո որդիներ, աստվածներ ու իրենց վերապահել աշխարհին ու ժողովուրդներին կառավարելու իրավունքը: Հայտնի է, որ տարբեր ժամանակներում բռնապետություններ ու կայսրություններ են առաջացել նաև աշխարհի այլ մասերում: Այդ բռնապետություններն ու կայսրությունները երկար կյանք չէին ունենում, սակայն հասցնում էին ավերել մարդու միտքն ու ոգին, առաջնային համարելով նյութականը: Ավերվում է Արարչի սահմանած կարգը: Մտքի ու ոգու պակասը (սովը) հասել է նաև Արարատի երկիր, ինչը նշանակում է, որ նորից վտանգված է մարդու գոյությունը:

Վտանգը կանխելու լավագույն միջոցը նորից հոգևորին ապավինելը և Արարչի սահմանած օրենքներով ապրելն է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Երևան, 1981
Ագաթանգեղոս, Հայոց Պատմություն, Երևան, 1983
Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969
Սեբեոս, Պատմություն, Երևան, 2005
Ուխտանես, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871
Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցայ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912
Ստրաբոն, Աշխարհագրություն, V, 2, (2)
Առձեռն Բառարան Հայկազեան Լեզուի, Վենետիկ, 1865
Եփեսի Պամփիլեաց Կեսարացիոյ, Ժամանակագրականք, մասն Ա, Վենետիկ, 1818
Ջենո Գլակ Ասորի և Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարսուշ, Երևան, 1941
Ալիշան Ղ., Սիսուան, Վենետիկ, ս. Ղազար, 1885,
Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973
Բարթիկյան Մ., Դիցապաշտ Հելլադան կամ Հելլեն դիք, Աթենք, 1936
Գալսյան Ռ., Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ, Երևան, 2005
Գավուրջյան Մ., Արմեն ու հայ անունների ծագումը և Ուրարտուն, Պեյրոյթ, 1973
Գավուրջյան Մ., Հայ ժողովրդի ծագումը, Մոնթրեալ, 1982
Գավուրջյան Մ., Ուսումնասիրություններ հայոց հնագույն պատմության, Կելտական ցեղերի նախահայրենիքը և կելտա-կովկասյան շփումները, Երևան, 2010
Հակոբյան Հ., Ուղեգրություններ, Երևան, հ. Ա, 1932
Ղափանցյան Գ., Ուրարտուի պատմություն, Երևան, 1940
Մաթևոսյան Կ., Մոմիկ, Երևան, 2010
Մնացականյան Ա., Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956
Մովսիսյան Ա., Հայոց հնագույն պետություն. Արատտա, Երևան, 1990
Պետրոսյան Ա., Մերձսեանյան ցեղերի միությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում, մ.թ.ա. V I-V դդ, Պատմաբանասիրական հանդես, 1976, թիվ 1
Սարգսյան Վ., Ուրարտական քաղաքակրթությունը և բասկերի նախահայրենիքի հարցը, Երևան, 1988
Սարգսյան Վ., Բասկերն Արարատ լեռան ստորոտում, (հոդված, «Գարուն», ամսագիր), 1991, 3
Սարգսյան Վ., Բասկերի ծագման առեղծվածը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 2000
Սարգսյան Վ., Բասկերեն-Հայերեն բառարան, Երևան, 2001
Տերյան Ա., Հայոց հնագույն պետություն. Միտանի (Խուրի-Միտանի), Երևան, 2006
Տերյան Ա., Հայաստանը Արարչագործության և քաղաքակրթության բնօրրան, Երևան, 2011
Տեր-Մովսեսյան Հ., Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1922
Օհանյան Մ., Սլավոնների Ծագումնաբանական Հիշողությունները և Դրանց Պատմական Արմատները, Երևան, 2007

Ռդլանդի երգը, Երևան, 1991, թարգմանիչ՝ Հ. Բախչինյան
 Բասկյան ավանդազրույցներ, Երևան, 1996, թարգմանիչ՝ Վ. Սարգսյան
 Հայ ժողովրդի Պատմություն, Երևան, 1971, հ. 1
 Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Երևան, 1981
 Հին Արևելքի Պոեզիա, Երևան, 1982
 Հայկական Սովետական Հանրագիտարան (ՀՍՀ) Երևան, 1986, հ.12
 Anglo-Saxon Chronicle
 Berossos, Und Die Babelonisch-Hellenische Literatur, Verlag und Druck Von B.G. Teubner-Leipzig-Berlin, 1923
 Bouckaert Remco et al., Mapping the Origins and Expansion of the Indo-European Language Famil., Science, vol. 337, 6097 (2012), p. 957–960
 Cavalli-Sforza Luigi Luca, Paolo Menozzi, and Alberto Piazza, Demic Expansions and Human Evolution, Science, vol. 259 (January 29, 1993): 632–646, 642
 Cavalli-Sforza Luigi Luca, Paolo Menozzi and Alberto Piazza, The History and Geography of Human Genes, (Princeton University Press, 1994) 218
 Cavalli-Sforza L. L., Genes, Peoples and Languages, (NY: North Point Press, 2000)
 Colin Renfrew, Archaeology and Language: The Puzzle of Indo-European Origins (New York: Cambridge University, 1987) 148
 Colin Renfrew, Archaeology, Genetics and Linguistic Diversity, *Man*, vol. 27, no. 3 (Sept. 1992) 445-478
 Danielyan E. L., Progressive British Figures' Appreciation of Armenia's civilizational Significance Versus the Falsified "Ancient Turkey" Exhibit In The British Museum, Yerevan, 2013, Անվտիմս
 Das Annolied, Mittelhochdeutsch Neuhochdeutsch, Reclam, 2006, 20
 Das Rolandslied des Pffafen Konrad, Mittelhochdeutsch Neuhochdeutsch, Reclam
 Des Ritters Hans Ebran Von Wildenberg, Chronik Von Den Fürsten Aus Bayern, München (1905), 1969
 Dictionnaire Flammarion de la langue française, Paris, 1999, p. IV (արմ. արձանագրություն Կոմիտաս Օվանյան)
 Galichian R., Historic Maps of Armenia, The cartographic Heritage, London–New-York–Yerevan, 2003
 Hans F. Nöhbauer, Die Bajuwaren, Weltbild Verlag, Augsburg, 1990
 Kramer S. N., The Sumerians, Chicago, 1963
 Ulrich Füetner, Bayerische Chronik, München (1909), 1969
 Quiggin E. C., Encyclopedica Britannica 13 ch Ed, 1926, Ireland
 Ruhlen Merritt, The Origin of Language, 1994
 Russell D. Gray & Quentin D. Atkinson, Language-tree divergence times support the Anatolian Theory of Indo-European origin, *Nature* vol. 426 (Nov. 26, 2003) 435–439

Topakyan Gerta, Die Bayerisch-Armenische Stammesgeschichte, журнал *Handes amsoareay*, (Հանդես ամսօրեայ), 1987
 Veit Arnpeck, Sämtliche Chroniken (1915), 1969, 10
 Veit Arnpeck, Chronica Baiuoriorum, 34, 1971
 Von Georg R. Spohn, Armenien und Herzog Naimes; Zeitschrift für Bayerische Landesgeschichte (ZBLG s. 185–210, ZBLG 34) 1971
 Wilford John Noble, Fossil Signs of First Human Migration Are Found, *The New York Times*, May 12, 2000
 Баженова А., Вадругин В., Мифы древних славян. Саратов, «Надежда», 1993
 Былины, Москва, 1987
 Влесова книга, Омск, 2005, 5а, 6б, 38а
 Вулли Л., Забытое царство, Москва, 1986
 Георгиев В., Исследования по сравнительно-историческому языкознанию, Москва, 1958,
 Гамкрелидзе Т., Иванов В., Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, ч. 1, 2
 Дикшит С., Введение в археологию, Москва, 1960
 Иванов В., Гамкрелидзе Т., Древняя Передняя Азия и индоевропейская проблема, *Вестник Древней Истории*, 3, 1980
 Иоанн Эфесский, см. Н. Пигулевская, Сирийские источники по истории народов СССР, М–Л., 1941
 Канева И., *Вестник Древней Истории*, 1964, 4
 Капанцян Г., Историко-лингвистическое значение топонимики древней Армении, Ереван, 1940
 Марр Н., Кавказский культурный мир и Армения, Ереван, 1995
 Мелларт Дж., Древнейшие цивилизации Ближнего Востока, Москва, 1982
 Мифы Народов Мира, т. I, т. II, Москва, 1988, 1991
 Пропп В. Я., Путилов Б. Н., Былины, т. I, М., 1958
 Соловьев С., Чтения и рассказы по истории России, Москва, 1989
 Чайлд Г., Древнейший Восток в свете новых раскопок, Москва, 1956
 Тацит Корнелий, *Анналы*, Ленинград, т. I, 1969
 Тер-Григорян-Демьянюк Н., Загадочный Арагат, гл. V, www.criteriocristiano.com.ar
 Рыбаков Б., Основание Киева: По материалам журнала «Наука и Жизнь»
 История Древнего Востока, ч. I, Москва, 1983
 История Ирана, Москва, 1977
 Ригведа, Москва, 1972
 Литература Древнего Востока, Москва, 1971
 Литература Древнего Востока, Махабхарата, Москва, 1984
 Литература Вавилонии и Ассирии, М., 1981

ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶԱՆ ԼԵՌԱՆ ՄԻՍ, ՄԱՍԻՍ ԵՎ ԱՐԱՐԱՏ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր երկգագաթ լեռը (5.165մ) հայերը կոչել են **Սիս** և **Մասիս**: Մասիսը հայտնի է նաև **Արարատ** անունով: Հայոց պատմության շատ հարցերի ու հնագույն շատ անունների նման հայոց սրբազան լեռան Մասիս և Արարատ անունները ևս հետաքրքրել են ուսումնասիրողներին և բազմաթիվ հարցերի տեղիք տվել: Իսկ հարցերը շատ են. ինչո՞ւ սրբազան այս լեռն ունի երկու անուն՝ Մասիս ու Արարատ, ո՞րն է հնագույնը, ի՞նչ են նշանակում Սիս, Մասիս և Արարատ անունները, ինչո՞ւ և ե՞րբ է սարը կոչվել Արարատ: Անդրադառնանք այս հարցերից յուրաքանչյուրին և փորձենք պարզաբանել դրանք:



Սիս և Մասիս (Արարատ) լեռները

Սիս և Մասիս անունները լեռան հնագույն անուններն են: Նկատում ենք, որ Հայկական լեռնաշխարհի այլ լեռնագագաթներ ևս կրում են Մասիս անվանը մոտ անուններ: Այսպես. Վանա լճից հյուսիս գտնվող լեռը կոչվում էր Նեխ-Մասիք (Սիփան)¹, Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում՝ Հայկական Միջագետքում գտնվող լեռը հունական² և հայկական³ հնագույն գրավոր աղբյուրներում կոչվում է **Մասիոս** կամ **Մասիոն** (այժմ՝ Տուր-Արդին): Ասուրական գրավոր աղբյուրներն այս լեռների համար օգտագործում են Քաշշիարի լեռներ⁴ անունը: Շումեր-աքադական «Գիլգամեշ» դյուցազնավեպից հայտնի է երկգա-

գաթ Մասու կամ Մաշու անունով լեռը⁵, որի հետևից ծագում և մայր է մտնում արևը, և որի վրա կանգ է առել Ուտնապիշտիի (Նոյի նախատիպը) տապանը: Մասու-Մաշուն հաճախ նույնացվում է Մասիոս-Մասիոն լեռների հետ:

Սիս և Մասիս անունների ծագման մասին եղել են բազմաթիվ բացատրություններ և տեսակետներ, որոնք շարունակվում են մինչ օրս: Հնագույնը Մ. Խորենացու բացատրությունն է: «Հայոց պատմություն» աշխատության մեջ նա գրում է, որ Մասիս անունը առաջացել է Հայկի թոռնորդի Ամասիայի անունից⁶ (Հայկ, Արամանյակ, Արամայիս, Ամասիա): Տեսակետներից մեկի համաձայն՝ Մասիս, Մաշու-Մասու անունները «զույգեր», «զույգ լեռներ», «երկվորյակ լեռներ»⁷ իմաստներն ունեն: Ըստ տարածված մեկ այլ տեսակետի՝ «Մասիս» անունը առաջացել է «մաս» բառից, քանի որ լեռը բաղկացած է երկու մասից և այլն:

Սակայն լեռան վեհապանձ տեսքն այլ բան է հուշում: Սիսը և Մասիսը իրենց տեսքով (միայնակ, երկգագաթ) այն տպավորությունն են թողնում, որ ասես անմիջականորեն բուսել են Մայր Երկրից, հողից և շատ ամուր կապված են հողին: Այլ դեպքերում բարձր լեռնագագաթները միայնակ չեն և անմիջականորեն կպած չեն մայր հողին: Դրանք լեռնաշղթաների բարձր գագաթներ են:

Մասիս (Սիս, Մա-Սիս) լեռան տեսքը հուշում է, որ Սիս անունը կարելի է կապել «կաթնաբեր մասունք մարց»⁸ բառի իմաստի հետ: Հնդեվրոպական մի շարք լեզուներում հանդիպում են իմաստով և հնչողությամբ Սիս անվանը մոտ բառեր⁹: Մա-սիս անվան «Մա»-ն հայոց լեզվում «սերել» իմաստն ունի, այն է՝ մայր: Հետևաբար կարելի է ասել, որ **Մասիսը Մայր Սիս** իմաստն ունի:

Հայերը Սիս և Մասիս կոչելով Հայկական լեռնաշխարհի գրեթե կենտրոնում գտնվող երկգագաթ այս լեռը, այն դիտել են իբրև Մայր Երկիրը, հողը սնուցող մասունքներ, որոնք իրենց բարձր գագաթներով տիեզերական կենսատու հոսք են ստանում և սնուցում անմիջականորեն իրենց կպած Մայր հողն ու երկիրը՝ Հայաստան աշխարհը:

Հայտնի է, որ շումերները Ստորին Միջագետք են իջել Հայկական լեռնաշխարհի հարավային մասերից՝ տանելով իրենց հետ բնօրրանում ստեղծված մշակութային, այդ թվում՝ կրոնադիցաբանական շատ արժեքներ: Անշուշտ, նրանք իմացել են Հայկական լեռնաշխարհում Սիս

և Մասիս անուններով երկգագաթ սրբազան լեռան մասին և նոր հայրենիքում խոսելով ջրհեղեղի մասին, տապանի երկգագաթ սարը կոչել են Մասու-Մաշու: Ի դեպ, գագաթը, որի վրա կանգ է առել Ուտնապիշտիի (Նոյի նախատիպը) տապանը, կոչվում էր Նիսիր, որը հեռավոր նմանություն ունի Մասիս անվան հետ: Մասու-Մաշու երկգագաթ լեռը, որտեղից, ըստ «Գիլգամեշի», ծագում և մայր է մտնում արևը, պատկերված են նաև քաղաքական կնիքների վրա, ընդ որում լեռները պատկերված են այնպես, ինչպես դրանք երևում են Միջագետքից՝ Մասիսը ձախ, իսկ Սիսը՝ աջ կողմում:

Հայերը սուրբ, աստվածային լեռ են համարում Մասիսը, որի գագաթին չպետք է դիպչի մահկանացու մարդու ոտքը: Հայոց հավատալիքներում լեռը պահպանում են քաջքերն ու վիշապագունները: Հիշենք Խորենացու վկայությունը, երբ հայոց Արտաշես արքան անիծում է որդուն՝ Արտավազդին, ասելով.

Թե դու հեծնես, որսի գնաս
Ազատն ի վեր, դեպի Մասիս,
Քաջքերը քեզ բռնեն տանեն
Ազատն ի վեր, դեպի Մասիս:¹⁰

Մասիս լեռը պահպանող այս քաջքերն ու վիշապագունները հիշեցնում են «Գիլգամեշ» դյուցազնավեպի Մասու-Մաշու լեռների դարպասները պահպանող ու միայն աստվածների համար այն բացող մարդակարիճներին: 1255 թ., երբ ֆրանսիացի ճանապարհորդ Ու. Ռուբրուքը ցանկանում էր բարձրանալ Արարատի գագաթը, մի հայ ծերունի համոզում է նրան չբարձրանալ, ասելով. «**ոչ ոք... պետք չէ բարձրանալ Մասիսը, նա աշխարհի մայրն է**»¹¹: Հայերի համար Մասիսի ծյունն անգամ սուրբ է համարվել: Երբ 1829 թ. Խ. Աբովյանը գերմանացի գիտնական Ֆ. Պարրոտի հետ բարձրացել է Մասիսի գագաթը, այնտեղից շոյվ ծյուն է բերել, որը պահել է իբրև սրբազան մասունք:

Այսպիսով՝ միանշանակ կարելի է ասել, որ Հայկական լեռնաշխարհի այլ մասերում գտնվող Նեխ-Մասիք, Մասիոս-Մասիոն, նաև Մասու-Մաշու լեռների անունների համար հիմք է հանդիսացել հայոց սուրբ լեռան **Մասիս** հնագույն անունը:

Հայոց Սուրբ լեռան համար օգտագործվում է նաև **Արարատ** անունը, որը Հայաստան երկրին տրվող հնագույն անուններից է: Արարատ

(Արար-ատ) անունն իր իմաստով ու բացատրությամբ հասնում է արարչագործության ժամանակներ և «արարելու, ստեղծելու տեղ, վայր» իմաստն ունի: Արարատ անունը տարածվել է աշխարհում Բիբլիայի միջոցով: Ըստ Հին Կտակարանի՝ Համաշխարհային ջրհեղեղի ժամանակ Նոյի տապանը կանգ է առել Արարատի լեռներին¹²: Բիբլիայի եբրայերեն բնագիրը Հայաստանի համար օգտագործում է Արարատի թագավորություն անունը, իսկ Նոյյան տապանի լեռը կոչվում է Արարատի լեռներ (լեռ): Ավելի ուշ՝ վաղ միջնադարում Բիբլիայի քրիստոնյա մեկնիչները Արարատի երկրում (լեռներում) գտնվող Նոյյան տապանի սարը նույնացրին հայերի կողմից Մասիս կոչվող լեռան հետ և Արարատ-Մասիսը Արարատ անվամբ համարվեց Նոյյան տապանի լեռ:

Այսպիսով՝ Հայկական լեռնաշխարհի գրեթե կենտրոնում գտնվող սրբազան լեռան **Մասիս** անունը հայերի կողմից լեռանը տրված հնագույն անունն է և **Մայր-Մնուցող (Մա-Միս) իմաստն ունի**, իսկ **Արարատ** անունը տրվել է ավելի ուշ՝ իբրև Արարատ-Ուրարտու երկրի կենտրոնում գտնվող լեռ, որտեղ համաշխարհային ջրհեղեղի ժամանակ հանգրվանել ու փրկվել են Նոյի սերունդները: Եվ ջրհեղեղից հետո Արարատ-Մասիս լեռան շուրջ սկիզբ է դրվել մարդկային նոր քաղաքակրթությանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայ ժողովրդի պատմություն, 1971, հ. 1, էջ 21
2. Ստրաբոն, Աշխարհագրություն, XI, 14(2)
3. Ս. Երեմյան, Հայաստանն ըստ Աշխարհացույցի, 1963, էջ 65, 113
4. ՀԺՊ քրեստոմատիա, 1982, Ե., 1981, 1981, էջ 15-16, 21
5. Հին արևելքի պոեզիա, 1982, էջ 145
6. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, 1981, էջ 50-51
7. Ն. Մարտիրոսյան, Պատմա-Բանասիրական հանդես, 1961, 3-4, էջ 107
8. Նոր բառգիրք Հայկազյան լեզվի, էջ 746
9. Հ. Աճառյան, ՀԱԲ, 1973, հ. 2, էջ 471-472, В. Даль, Толковый словарь, М., 1956, с. 188
10. Մովսես Խորենացի, 1981, էջ 233
11. Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա., Եր., 1932, էջ 18
12. Ծննդոց, 4, 5

ՆԱԽԱԲԱՆ	5
Միջագետքի հնագույն գրավոր աղբյուրները Հայաստանը «աստվածների», «անմահների», «սուրբ օրենքների» և «սրբազան ծեսերի» երկիր լինելու մասին	14
Հայաստանից և շրջակա տարածքներից սկսված հայկական/արիական (հնդեվրոպացիներ) ցեղերի տեղաշարժերի մասին	27
Հայաստանը և Գերմանիան	36
«Ռոլանդի երգը» Էպոսը	70
Հայաստանը և Բրիտանիան	73
Հայաստանը և կելտերը (գալլեր)	80
Հայաստանը և բասկերը (Պիրենեյան թերակղզի)	87
Հայաստանը և էտրուսկները	98
Հայաստանը և սլավոնները	101
Հերակլեսի (Հերկուլես) մասին	109
Հայաստանը աշխարհի հնագույն և միջնադարյան քարտեզներում	111
Հայաստանին վերաբերող հնագույն գրավոր աղբյուրների ու վկայությունների աղավաղումը XIX–XX դարերում	133
<i>Օգտագործված գրականության ցանկ</i>	143
ՀԱՎԵԼՎԱԾ	
Հայոց Սրբազան լեռան Սիս , Մասիս և Արարատ անունների մասին	146

ԱՐ Աստծո պաշտամունքը Հայաստանում, Երևան, 1995

Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան,
Երևան, 2002

Միտանի, Հայոց հնագույն պետություն, 2006

Հողվածների ժողովածու, ՀՀ պաշտպանության նախարարության
«Հայրենիքի մարտիկ» ամսագրում, թիվ 1, 2006

Հայաստանը և պատմությունը, (հողվածներ), Երևան, 2007

Երևան անվան ծագման մասին (բուկլետ, հայերեն, ռուսերեն,
անգլերեն), Երևան, 2008

Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան
(երկրորդ լրամշակված հրատարակություն), Երևան, 2011

Եվրոպայի ժողովուրդների հնագույն գրավոր աղբյուրները իրենց
նախահայրենիքի՝ Հայաստանի ու հայերի մասին, Երևան, 2014

Պատմություն Հայոց Արեւելյան Կողմի (Աղվանք, Գարդման, Ուտիք),
Երևան, 2015

Նոր ուսումնասիրություններ Երևանի հնագույն պատմության մասին
(հողվածներ), Երևան, 2015

Древние письменные источники народов Европы о своей прародине–
Армении и армянах, Ереван, 2016

Ancient Written Sources of European Nations About Their Ancestral
Homeland – Armenia and Armenians. Yerevan, 2017

Հնագույն պատմական վկայություններ հայ ռազմիկի մասին,
Երևան, 2017

Հայոց հնագույն աստվածները, Երևան, 2017

Древние письменные источники народов Европы о своей
прародине – Армении и армянах (Второе дополненное
издание), Ереван, 2018

ԱՆԺԵԼԱ ՏԵՐՅԱՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ
ՀՆԱԳՈՒՅՆ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԻՐԵՆՑ
ՆԱԽԱՀԱՅՐԵՆԻՔԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

*Շնորհակալություն եմ հայտնում
Կոմիտաս վարդապետ Հովնանյանին
թեմայի վերաբերյալ տրամադրած նյութերի համար*

Հրատարակչության խմբագիր
ԳՈՀԱՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
Համակարգչային էջադրումը
ԱՆԱՀԻՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Համակարգչային ձևավորումը
ՔՐԻՍՏԻՆԱ ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆԻ

Պատվեր 1

Տպաքանակ 500

«ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ» տպագրատուն
Երևան, Նոր Նորքի I զանգված, Ս. Սաֆարյան 11/1^ա

9(47.925)
21-47
հշ




**ԱՐՃԵԼԱ ԱՎԵՏԻՍԻ ՏԵՐՅԱՆ
ՊԱՏՄԱՐԱՆ**

Ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Աշխատում է Երևանի պատմության թանգարանում: Ջրադվում է մեր ժամանակներում մեծ կարևորություն ունեցող հայոց և Երևանի պատմության հնագույն ժամանակաշրջանի հարցերով: Հրատարակել է բազմաթիվ հոդվածներ և աշխատություններ: Ձեկուցումներով հանդես է եկել տարբեր հայագիտական գիտաժողովներում:



Թոշմակերպ Անգեղ (Անգե) աստծո պատկերը:
Պորտասար հնավայր



Պորտասար հնավայր